

**ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶԿԱՅԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՄԱՐԻՆԵ ԱՐԹՈՒՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

**ՀԱԿԱՄԱՐՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՏԻ ԺԱՄԱՆԱԿ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒ ՆԱԿԵՏՈՒ ԹՅՈՒՆԸ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ

**ԻԳ.00.02 Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային
հարաբերություններ մասնագիտություն ամբ քաղաքական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

**Գիտական ղեկավար՝
Քաղ. գիտ դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան Սուրիկի Թորոսյան**

**ԵՐԵՎԱՆ 2019
ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ**

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ-----3

**ԳԼՈՒԽ 1. ՏԱՐԱԾՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԸ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՒՄ**-----

20

- 1.1. Տարածքի միջազգային կառավարում. հասկացողությունը և հասկացողային թյուրըմբռնումները-----
-----21
- 1.2. Միջազգային կառավարման պատմական փուլերը և կիրառման արդյունավետությունը-----
-----32
- 1.3. Հակամարտությունների կարգավորման գործընթացում միջազգային կառավարման կիրառման անհրաժեշտությունը-----
-----55

**ԳԼՈՒԽ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ**-----

-----67

- 2.1. Միջազգային կառավարման իրավական հիմքերն ու իրականացման սահմանները-----
-----67
- 2.2. Չմիջամտության և ինքնիշխանության սկզբունքների տրանսֆորմացիան միջազգային իրավունքում ու միջազգային հարաբերություններում-----89

**ԳԼՈՒԽ 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՄԵՄՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**-----

112

- 3.1. Միջազգային կառավարումը՝ որպես ինքնորոշման հակամարտությունների կարգավորմանն աջակցող անհնարավորություն (Կոստվոյի և Արևելյան Թիմորի դեպքերը)-----
-----112
- 3.2. Միջազգային կառավարումը՝ որպես հետկոնֆլիկտային պետության կառուցման հնարավորություն. Բոսնիա և Հերցեգովինայի առանձնահատուկ դեպքը -----128
- 3.3. Միջազգային կառավարման արդյունավետության մեծացման հնարավորությունները և կիրառման նպատակահարմարությունն Արցախյան հակամարտության դեպքում-----144

ՆԵՐԱՆՈՒ ԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Տարածքի ժամանակավոր միջազգային կառավարման (այսուհետ՝ միջազգային կառավարում) պրակտիկան կիրառվել է դեռևս սկսած Ազգերի և իգայի շրջանից, սակայն միայն 1990-ական թվականների երկրորդ կեսին ստեղծվեցին բարենպաստ պայմաններ դրա զարգացման և կատարելագործման համար: Դրան նպաստեցին մի քանի տարածքներում ցեղասպանության կանխման հնարավորության ձախողումը, ինքնորոշման հակամարտությունների աճող թիվը, պետության ինքնիշխանության սկզբունքի վերաիմաստավորումը, տևական խաղաղության հաստատման համար ժողովրդավարական կառավարման առաջնահերթության գիտակցումը և 1990-ականներին նոր աշխարհակարգի ձևավորման համար մղվող պայքարը: Ակնհայտ դարձավ, որ բացառապես ռազմական բաղադրիչի կիրառումը չի կարող ապահովել տևական խաղաղություն, իսկ ժամանակավոր հիմունքով տարածքի միջազգային կառավարման իրականացումը կարող է ետպես մեծացնել դրա հնարավորությունը: Ռազմական և քաղաքացիական բաղադրիչներ պարունակող միջազգային կառավարումը ներկայումս կիրառվում է ոչ միայն հրադարձի հաստատման, այլև հակամարտությունների կարգավորման և դյուրաբեկ կամ ձախողված պետությունների կառուցման գործընթացներին աջակցության նպատակով:

Նորանկախ պետությունների թիվն այսօր մեծ է, սակայն դրանց զգալի մասը մի շարք չափորոշիչներով դիտարկվում է որպես դյուրաբեկ՝ պետական կառավարման նվազագույն գործառնություններ իրականացնելու կարողություն չունեցող: Միաժամանակ, խնդրի բարդությունն այն է, որ տևական արտաքին վերահսկողությունն ինքնին կարող է պատճառ դառնալ նորանկախ պետության՝ որպես դյուրաբեկ կամ ձախողված պետության, որակմանը կամ հանգեցնել միջազգային աջակցությունից «կախվածության»: Այդ

կանխավարկածները կոնկրետ դեպքի համար հաստատելու կամ ժխտելու համար անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն միջազգային կառավարման ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները, այլև այն, թե այսօր պետության կառուցման որ փուլում են գտնվում այդ պետությունները, ինչպիսի առաջընթաց են գրանցել ինչպես ներպետական կառավարման, այնպես էլ միջազգային կազմակերպություններում ներգրավվածության տեսանկյունից:

Խնդրի ուսումնասիրությունն առանձնահատուկ կարևոր է հակամարտությունների կարգավորման գործընթացի շրջանակներում՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ չճանաչված պետություններում միջազգային կառավարման վեց դեպքերից հինգն ավարտվել է անկախության հռչակմամբ, մեկը (Արևելյան Սլովենիա)՝ նախկին մետրոպոլիայի՝ Խորվաթիայի կազմվերափոխմամբ (ըստ նախանշված մանդատի): 2016թ. ապրիլի ռազմական գործողություններն Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացի սառեցման տրամաբանական շարունակությունն էր, որը ցույց տվեց, որ անհրաժեշտ է նոր մեխանիզմների կիրառում հակամարտության կարգավորմանը հետամուտ լինելու համար: Ուստի չի բացառվում, որ առաջարկվող մոտեցումների թվում լինի արտաքին կառավարման մեխանիզմների կիրառումը, մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարգավորման վերաբերյալ վերջին՝ «Մադրիդյան» փաստաթղթի վեց տարրերից մեկն էլ ենթադրում է Արցախի միջանկյալ կարգավիճակ: Ստեղծված իրավիճակում խնդրի ուսումնասիրությունն առանցքային նշանակություն ունի՝ անհրաժեշտության դեպքում մեխանիզմի կիրառման նպատակահարմարությունը գնահատելու համար:

Միջազգային իրավունքի համառոտ քստում խնդրի ուսումնասիրությունը ևս առարկայական է, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ միջազգային իրավունքի փաստաթղթերում, մասնավորապես, ՄԱԿ Կանոնադրության մեջ չկա միջազգային կառավարման վերաբերյալ ուղղակի հիշատակում: Ուստի, խնդրի իրավական աղբյուրներն ընկած են միջազգային սովորույթային իրավունքի հիմքում, թեև պրակտիկայի ընթացքում ՄԱԿ-ը

զարգացրել է նաև միջազգային կառավարման իրականացման կանոնավոր մեխանիզմներ և իրավական հիմնավորման աղբյուրներ: Ինքնիշխանության և ներքին գործերին չմիջամտության սկզբունքների տրանսֆորմացիայով պայմանավորված միջազգային կառավարման պրակտիկան ենթարկվել է զգալի փոփոխության ու ներքին ինչպես էլիտարության ու ներքին ընդլայնման, այնպես էլ միջազգային կառավարման իրավական հիմքերի տեսանկյունից: Ինքնիշխանության ու նախ և առաջին հերթին է ոչ թե արտոնության ու նախ և առաջին պատասխանատվության ու նախ և առաջին որի ձևափոխման դեպքում միայն միջազգային հանրության ու նախ և առաջին իրավասու իրականացնել պաշտպանելու պատասխանատվության ու նախ և առաջին Ատենախոսության մեջ առանձնահատուկ ու շարժողության ու նախ և առաջին է դարձվել միջազգային կառավարման և ինքնիշխանության հարաբերակցության խնդրին՝ վերջինս դիտարկելով տարբեր չափումներում, մասնավորապես՝ միջազգային-իրավական, ներպետական և վեսթֆալյան ինքնիշխանության ու նախ և առաջին շրջանակում: Նախկինում բացառապես պետության ու նախ և առաջին իրավասության շրջանակներում տեղավորվող խնդիրներն այսօր ստացել են միջազգային կարևորություն, և դրանց հաճախ հղում է արվում որպես սպառնալիք տարածաշրջանային խաղաղությանն ու անվտանգությանը: Այդ տեսանկյունից կարևոր է պարզել նաև այն խնդիրների շրջանակը, որոնց տրվում է նման որակում և այդ գործընթացում քաղաքական բաղադրիչի ազդեցության հնարավորությունը: Առաջին դեպքում առանցքային նշանակություն ունի Անվտանգության խորհրդի բանաձևերի ու սուբմասիրությունը, որոնց հիման վրա հաստատվում է կառավարման մանդատը, երկրորդ դեպքում՝ առանձին դեպքերի առանցքային իրադարձությունների համեմատական վերլուծությունը:

Երկբևեռ աշխարհակարգի փլուզումից հետո ՄԱԿ-ի միջազգային կառավարման նախաձեռնություններն ուղեկցվում էին նաև ժողովրդավարական կառավարումը խթանելու նպատակադրմամբ (ժողովրդավարական խաղաղության տեսության շրջանակներում): Ռազմական և քաղաքացիական միջազգային ներկայության ճանապարհով հետևյալն էլ ի կտային հասարակությունների

Ժողովրդավարացման հիմքում ընկած է այն համոզմունքը, որ ոչ ժողովրդավարական վարչակարգերի հաստատումը կարող է խորացնել էթնիկ, կրոնական կամ այլ բաժանումները: Միաժամանակ, հետկոնֆլիկտային հասարակության ղեկավարում ժողովրդավարացման գործընթացներն արտաքին դերակատարների անմիջական ներգրավմամբ ունեն բարդ ընթացք և էապես տարբերվում են ժողովրդավարությանն անցման ավանդական ձևից: Այդ համատեքստում աշխատանքում առաջ են քաշվում երկու կանխավարկածներ.

1) Գործարկվող ժողովրդավարությունն ունի սահմանափակ հնարավորություններ և այնամասշտաբ միջազգային վերահսկողության պայմաններում:

2) Միջազգային կառավարման պայմաններում ժողովրդավարացման գործընթացի արդյունավետությունը մեծամասամբ պայմանավորված է ներպետական միջավայրի առանձնահատկություններով և տարածքի պատմական անցյալով:

Ընդ որում, ինչպես հակամարտության կարգավորման, այնպես էլ պետության կառուցման գործընթացի և իարժեք գնահատում հնարավոր է իրականացնել պետական իշխանությունների և իրավունքի ղեկավարության փոխանցումից հետո: Պատահական չէ, որ Արևելյան Թիմորում ռազմական բախումներ վերսկսվեցին ՄԱԿ-ի առաքելության մանդատի ավարտից անմիջապես հետո, իսկ Չարավային Սուդանում՝ անկախության հռչակումից և միջազգային ուժերի դուրսբերումից հետո: Միաժամանակ, հարկ է նաև նշել, որ միջազգային վարչակազմի ներկայությունը նույնպես և իրավիճակի չեզոքացնում ռազմական բախումների վերսկսման վտանգը (Կոսովոյում 2004թ. վերսկսված ռազմական բախումները՝ միջազգային վերահսկողության պայմաններում):

Չաշվի առնելով վերոնշյալը՝ ատենախոսության մեջ ուսումնասիրվում է միջազգային կառավարման մեխանիզմը և դրա այլ ափոխումները պատմական զարգացումների համատեքստում, մեխանիզմի կիրառման իրավական աղբյուրները և դրանց մեկնաբանության վրա քաղաքական բաղադրիչի ազդեցությունը, ինքնիշխանության և ներքին գործերին չմիջամտության

սկզբունքների հակադրությունը կամ համատեղելիությունը միջազգային կառավարման հետ, մեխանիզմի գործարկման արդյունավետությունը Կոսովոյի, Արևելյան Թիմորի և Բոսնիա և Յեթեգովինայի դեպքերի համար և կիրառման հնարավորությունն ու նպատակահարմարությունն Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում:

Ատենախոսության թեմայի մշակվածությունն աստիճանը:

Ատենախոսության թեմայի վերաբերյալ աշխատանքները մեծամասամբ հրապարակվել են 1999 թվականից հետո, երբ որոշվեց իրականացնել հետաառըպատերազմյան փուլում ՄԱԿ-ի ուղղակի կառավարման երկու լայնամասշտաբ դեպքեր Արևելյան Թիմորում և Կոսովոյում, որտեղ ՄԱԿ-ը ստանձնել էր տարածքի կառավարման լիարժեք՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորությունները:

Խնդրի վերաբերյալ մասնագիտական գրականությունը կարելի է պայմանականորեն բաժանել չորս խմբի. նրանք, որոնք անդրադառնում են միջազգային կառավարմանը 1) պետության կառուցման և ժողովրդավարացման գործընթացի շրջանակում, 2) հակամարտությունների կարգավորման գործընթացի շրջանակում, 3) միջազգային իրավունքի շրջանակում, 4) համընդգրկուն ուսումնասիրություններ:

Պետության կառուցման շրջանակում ժողովրդավարացման գործընթացների շեշտադրման տեսանկյունից առավել նշանակալի են Ա. Կրուսասանի¹, Ռ. Կապլանի², Ն. Լեմեյ -Յեբերթի³, Օ. Թենսիի⁴, Ս. Չեսթերմանի⁵ աշխատանքները: Կրուսասանը համեմատում է անցումային գործընթացները Կամբոջայում և Արևելյան Թիմորում:

¹ Croissant A., International Interim Governments, Democratization, and Post Conflict Peace-building: Lessons from Cambodia and East Timor, Strategic Insights, vol. 5, no. 1, 2006, pp. 1-18; Croissant A., The Perils and Promises of Democratization through United Nations Transitional Authority-from Cambodia and East Timor, Democratization, vol. 15, no. 3, 2008, pp. 649-668.

² Caplan R., Exit Strategies and State Building, US, Oxford University Press, 2012; Caplan R., A New Trusteeship? The International Administration of War-Torn Territories, Oxford University Press for the International Institute for Strategic Studies, 2002.

³ Lemay-Hébert N., State-Building from the Outside-in: UNMIK and Its Paradox, Journal of Public & International Affairs, vol. 20, 2009, pp. 65-90; Lemay-Hebert N., Coerced Transitions in Timor-Leste and Kosovo: Managing Competing Objectives of Institution-Building and Local Empowerment, Democratization, vol. 19, no. 3, 2012, pp. 1-31.

⁴ Tansey O., Regime Building: Democratization and International Administration, US, Oxford University Press, 2009; Tansey O., Democratization without a State: Democratic Regime-Building in Kosovo, Democratization, vol. 14, no. 1, 2007, pp. 129-150.

⁵ Chesterman S., You, The People: The United Nations, Transitional Administration and State-Building, NY, Oxford University Press, 2005.

Ներկայացվում են այն մարտահրավերները, որոնք հատուկ են լայնածավալ արտաքին վերահսկողության ուղեկցվող անցումային շրջանին: Հեղինակն առանձնահատուկ ընդգծում է, որ ժողովրդավարցումը պետք է ներառվի խաղաղաշինության օրակարգում: Եթե անցումային կառավարումն ավարտվում է մինչ ժողովրդավարության արմատների բավական խորացումը, իսկ ժողովրդավարական ինստիտուտներն այնքան չեն կայացել, որ ի վիճակի լինեն ինքնակառավարվել, միջազգային կառավարումը հակված է ձախողման: Միաժամանակ, ինչպես նշում է Ս. Հանթինգտոնը, մտայնության ոլորտը, որ «արևմտյան քաղաքակրթությանը չպատկանող ժողովուրդները պետք է ընդունեն արևմտյան արժեքները, ինստիտուտները և մշակույթը, անբարոյական է իր հետևանքներով, քանզի արդիականացումն ու տնտեսական զարգացումը չեն պահանջում մշակութային վեստերնիզացիա: Ընդհանուր դեպքում արևմտյան ուղու ընտրությունը չի կարող լինել միակ և անգամ ճիշտ ճանապարհը⁶: Հետազոտողների մի խումբ ևս ընդգծում է պարտադրված ժողովրդավարության վտանգները⁷, իսկ Կապլանը դրան անդրադառնում է որպես «արհեստական կայունության ուն»»: Եթե Ն. Լեմեյ-Հեբերթի աշխատանքները մեծամասամբ նվիրված են առանձին դեպքի ուսումնասիրությանը, ապա Թենսիի աշխատանքներում ուսումնասիրվում է ժամանակավոր միջազգային կառավարման ազդեցությունը վարչակարգի փոփոխության վրա՝ Բոսնիա և Հերցեգովինայի, Արևելյան Թիմորի և Կոսովոյի դեպքերի համեմատական վերլուծության հիման վրա: Սահմանվում են այն ուղղակի և անուղղակի մեխանիզմները, որոնց միջոցով միջազգային իշխանությունները կարող են ազդել ներպետական քաղաքականության վրա:

Հետազոտողների մի այլ խումբ միջազգային կառավարումը դիտարկում է հակամարտության ներքին կարգավորման գործընթացի

⁶ Huntington S., The West: Unique, not Universal, Foreign Affairs, vol. 75, no. 6, 1996, 28-46.

⁷ Youngs R., Exploring “Non-Western Democracy”, Journal of Democracy, vol. 21, no. 4, 2015, <https://carnegieeurope.eu/2015/10/25/exploring-non-western-democracy-pub-61825>; Stepan A., Linz J., Democratization Theory and the ‘Arab Spring,’ Journal of Democracy, vol. 24, 2013, pp. 15–30; Harrison E., McLaughlin M. S., The Triumph of Democracy and the Eclipse of the West, London, Palgrave Macmillan, 2014.

շրջանակում, որոնց թվում են Տ. Թորոսյանը⁸, Ն. Վան Ուիլիզենը⁹, Ուիլիամսը և Պեկին¹⁰: Տ. Թորոսյանը խնդրին անդրադառնում է Կոսովոյի հակամարտության կարգավորման գործընթացի շրջանակներում: Ն. Վան Ուիլիզենը կիրառում է երկակի համեմատության մեթոդը՝ դիտարկելով Բոսնիայի և Կոսովոյի հակամարտության ունեցրի պատմական համատեքստը և հակամարտության ունեցրի կարգավորման գործընթացում միջազգային իշխանության ունեցրի կիրառած ռազմավարության արդյունավետությունը: Ուիլիամսը և Պեկին անդրադառնում են միջազգային կազմակերպության ունեցրի ներգրավվածությանը ինքնորոշման հակամարտության ունեցրի կարգավորման գործընթացում՝ ներկայացնելով «վաստակած ինքնիշխանության» (“earned sovereignty”) գաղափարը և սահմանելով դրա փոփոխությունը:

Խնդրի իրավական բաղադրիչը քննարկումների առարկա դարձավ հատկապես Կոսովոյի դեպքից հետո և ավելի մեծ թափ ստացավ ինքնիշխանության և ներքին գործերին չմիջամտության սկզբունքների վերաբերյալ նոր գիտական մոտեցումների ներկայացման արդյունքում: Միջազգային կառավարման իրավական հիմքերին անդրադարձ կատարել են Է. Դը Բրաբանդերը¹¹, Բ. Կնոլը¹², Է. Դը Ուեթը¹³, Դ. Ուիթլը¹⁴, Ռ. Ուոլֆրամը¹⁵ և այլոք: Դը Բրաբանդերն

⁸ Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտության ունեցր, բանակցության ունեցր, աշխարհաքաղաքականության, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2012:

⁹ Willigen N., *Peacebuilding and International Administration: The Cases of Bosnia and Herzegovina, Kosovo, US*, Routledge, 2013.

¹⁰ Williams P., Pecci F., *Earned Sovereignty: Bridging the Gap Between Sovereignty and Self-Determination*, *Stanford Journal of International Law*, vol. 40, no. 1, 2004, pp. 347-386.

¹¹ De Brabandere E., *Post-Conflict Administrations in International Law: International Territorial Administration, Transitional Authority and Foreign Occupation in Theory and Practice*, Leiden, Boston, Martinus Nijhoff Publishers, 2009; De Brabandere E., *The Responsibility for Post-Conflict Reforms: A Critical Assessment of Jus Post Bellum as a Legal Concept*, *Vanderbilt Journal of Transnational Law*, vol. 43, no. 119, 2010, pp. 119-149.

¹² Knoll B., *The Legal Status of Territories Subject to Administration by International Organizations*, UK, Cambridge University Press, 2008; Knoll B., *From Benchmarking to Final Status? Kosovo and the Problem of an International Administration's Open-Ended Mandate*, *The European Journal of International Law*, vol. 16, no. 4, 2005, pp. 637-660.

¹³ De Wet E., *The Direct Administration of Territories by the United Nations and its Member States in the Post Cold War: Legal Bases and Implications for National Law*, *Max Planck UNYB*, vol. 8, 2004, pp. 291-340.

¹⁴ Whittle D., *The Limits of Legality and the United Nations Security Council: Applying the Extra-Legal Measures Model to Chapter VII Action*, *The European Journal of International Law*, vol. 26, no. 3, 2015, pp. 671-698.

անդրադառնում է հնամակալ ության համակարգից դուրս ՄԱԿ-ի տարածքների կառավարման պրակտիկայի լեգիտիմությանը՝ ցույց տալով, որ դրանք լիովին տարբեր գործընթացներ են, որոնց իրավական հիմքերը ևս տարբեր են: Այդպիսով հեղինակը հակադրվում է Յ. Կելսենի¹⁶ այն պնդմանը, որ ՄԱԿ Կանոնադրության 81-րդ հոդվածի հիման վրագործող հնամակալ ության համակարգն այն միակ դեպքն է, որի շրջանակներում Կազմակերպությունը կարող է նախաձեռնել տարածքի կառավարում: Միջազգային կառավարումը լիազորող ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևերի ուսումնասիրության հիման վրա է. Դը Ուեթը, Բ. Կնոլը, Դը Բրաբանդերը և Ռ. Ուոլֆրամն առանձնացնում են միջազգային կառավարման երեք իրավական հիմքեր, իսկ դը Ուեթը և Ս. Ռաթներն¹⁷ անդրադառնում են նաև այն խնդրին, թե արդյոք օկուպացիայի համար կիրառելի միջազգային մարդասիրական իրավունքի փաստաթղթերը վերաբերում են նաև ՄԱԿ-ի ժամանակավոր առաքելություններին: Եզրակացվում է, որ ՄԱԿ-ի առաքելությունների վրա այդ փաստաթղթերը չեն տարածվում նույն կերպ, ինչ առանձին պետությունների դեպքում է, և ՄԱԿ Անվտանգության խորհուրդը կարող է շեղվել մարդասիրական իրավունքի նորմերից առանձնահատուկ իրավիճակներում: Այդ տեսանկյունից հետաքրքրական են նաև այն հետազոտողների աշխատանքները¹⁸, որոնցում ուսումնասիրվում է ՄԱԿ Անվտանգության խորհրդի «անսահմանափակ լիազորությունների» խնդիրը: Մասնավորապես Սփեյնն իր աշխատանքում առաջարկում է բարեփոխումների մոդել, որն ուղղված է Անվտանգության խորհրդի որոշումների ընդունման պրակտիկայի բարելավմանը երեք նոր ընթացակարգային պարտավորությունների ներմուծման ճանապարհով: Միջազգային կառավարման իրավական բաղադրիչի վերաբերյալ

¹⁵ Wolfrum R., *International Administration in Post-Conflict Situations by the United Nations and Other International Actors*, Max Planck Yearbook of United Nations Law, vol. 9, 2005, pp. 649-696.

¹⁶ Kelsen H., *The Law of the United Nations*, London, Stevens & Sons Limited, 1951.

¹⁷ Ratner S., *Foreign Occupation and International Territorial Administration: The Challenges of Convergence*, *The European Journal of International Law*, vol. 16, no. 4, 2005, pp. 695-719.

¹⁸ Spain A., *The UN Security Council's Duty to Decide*, *Harvard National Security Journal*, 4, 2013, pp. 320-384; Whittle D., *The Limits of Legality and the United Nations Security Council: Applying the Extra-Legal Measures Model to Chapter VII Action*, *The European Journal of International Law*, vol. 26, no. 3, 2015, pp. 671-698; Lowe V., Roberts A., Welsh J., Zaum D., *The United Nations Security Council and War: The Evolution of Thought and Practice since 1945*, US, Oxford University Press, 2010.

հետազոտությունները մի նոր փուլը սկսվեց 2001թ. գիտական շրջանակներում Միջամտության և պետական ինքնիշխանության հարցերով անկախ միջազգային հանձնաժողովի առաջ քաշած «պաշտպանելու պատասխանատվության» սկզբունքի ներկայացմամբ, որին անդրադարձել են բազմաթիվ արևմտյան հեղինակներ, որոնց թվում Կ. Սթահնը, Բ. Կնոլը, Լ. Մուրադյանը, Յ. Նիկողոսյանը և այլոք¹⁹:

Ինքնիշխանության և միջազգային կառավարման հարաբերակցությանը անդրադարձել են մի քանի հեղինակներ²⁰, սակայն առավել համընդգրկուն ուսումնասիրություններ կայացված է Դ. Չոմի՝ «Ինքնիշխանության պարադոքս»²¹ աշխատանքում, ինչն արժեքավոր է ինքնիշխանության հասկացության էվոլյուցիայի և դրա արդյունքում միջազգային կառավարման պրակտիկայում արձանագրված փոփոխությունների տեսանկյունից:

Խնդրի վերաբերյալ առավել համընդգրկուն ուսումնասիրություններ են առաջարկում Կ. Սթահնը²², Ս. Չեսթերմանը²³, Ն. Վան Ուիլիզենը²⁴: Վերջիններս դիտարկում են միջազգային կառավարման գաղափարի և պրակտիկայի պատմական էվոլյուցիան՝ Ազգերի լիգայի մանդատային համակարգից մինչև ՄԱԿ-ի ներկայիս լայնածավալ առաքելությունները, դրա կիրառման լեգիտիմության խնդիրները, կիրառելիությունը հակամարտությունների կարգավորման և պետության կառուցման գործընթացներին աջակցության նպատակով:

¹⁹ Stahn C., *The Law and Practice of International Territorial Administration: Versailles to Iraq and Beyond*, NY, Cambridge University Press, 2008; Մուրադյան Լ., Մարդասիրական միջամտության իրականացման իրավական հիմքերը և կիրառման խնդիրները, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1, 9, 2018, էջ 89-110, Նիկողոսյան Յ., Մարդասիրական միջամտության գործոնը Կոսովոյում, *Հարավային Օսիայում և Արցախում*, «21-րդ ԴԱԲ», թիվ 4, 38, 2011, էջ 67-75, http://www.noravank.am/upload/pdf/06.%20Hovhannes%20Nikoghosyan_21%20Dar_04_2011.pdf.

²⁰ Randazzo E., *Kosovo: Independence or Empty Sovereignty*, *The Western Balkan Policy Review*, vol. 1, no. 1, 2010, pp. 146-167; Williams P., Pecci F., նշվ. աշխ.

²¹ Zaum D., *The Sovereignty Paradox: The Norms and Politics of International Statebuilding*, US, Oxford University Press, 2007.

²² Stahn C., *The Law and Practice...*; Stahn C., *International Territorial Administration in the Former Yugoslavia: Origins, Developments and Challenges Ahead*, Max-Planck-Institut für ausländisches öffentliches Recht und Völkerrecht, 2001.

²³ Chesterman S., *You, The People: The United Nations, Transitional Administration and State-Building*, NY, Oxford University Press, 2005.

²⁴ Willigen N., նշվ. աշխ.

Ակնհայտ է, որ ընդամենը մի քանի տասնամյակում մեծ ծավալի ուսումնասիրություններ են արվել ինչպես հիմնախնդրի, այնպես էլ դրա տարբեր ասպեկտների ուղղությամբ: Սակայն խնդրի լայն ընդգրկումը, միջազգային կառավարման բավական հաճախ կիրառումն ու կարևորությունը շարունակաբար նոր խնդիրներ են առաջադրում, որոնցից մի քանիսին անդրադառնում է սույն աշխատանքը՝

- Մասնագիտական գրականության մեջ ձևավորվել են միջազգային կառավարման հասկացողային թյուրմբռնումներ, որոնք պահանջում են հստակեցումներ:
- Պարզորոշ դասակարգված չեն այն խնդիրները կամ իրավիճակները, որոնք պատմության տարբեր փուլերում որակվել են որպես միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնալիք (այդ նպատակի համար ատենախոսական աշխատանքում մեծամասամբ օգտագործվել են ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևերը²⁵ և առանցքային նշանակություն ունեցող գեկոլյցները²⁶):
- Խնդիրը, որպես կանոն, համալիր չի դիտարկվում, իրավական և քաղաքական բաղադրիչները քննարկվում են առանձին-առանձին, ինչի արդյունքում լուծումները թերություններ են ունենում:

²⁵ UN SC Resolution 632 (1989), 16 February 1989, <https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/557/69/IMG/NR055769.pdf>, 01.06.2019; UN SC Resolution 1483 (2003), 22 May, 2003, http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/1483%20%282003%29; UN SC Resolution 1031 (1995) on Bosnia and Herzegovina and multinational Implementation Force (IFOR), [https://undocs.org/S/RES/1031\(1995\)](https://undocs.org/S/RES/1031(1995)), 14.04.2019.; Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 246 (1970), Advisory Opinion, ICJ Reports, 1971, <http://www.icj-cij.org/docket/files/53/5597.pdf>, 16.03.2018; UN SC Resolution 745, 28 February 1992, http://www.lcil.cam.ac.uk/sites/default/files/LCIL/documents/transitions/Cambodia_7_UNSC_Resolution_745.pdf; UN SC Resolution 1272 (1999) on the situation in East Timor, 25 October, 1999, <http://www.un.org/en/peacekeeping/missions/past/etimor/docs/9931277E.html>; UN SC Resolution 1244 (1999), <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N99/172/89/PDF/N9917289.pdf>; Declaration on the Granting of Independence to Colonial Countries and Peoples, General Assembly Resolution 1514 (XV) of 14 December 1960, <http://www.un.org/en/decolonization/declaration.shtml>, 13.04.2018.

²⁶ An Agenda for Peace: Preventive Diplomacy and Related Matters, 18 Dec., 1992, <http://www.un.org/documents/ga/res/47/a47r120.htm>; Boutros Ghali, An Agenda for Democratization, United Nations, New York, 1996, The Brahimi Report and the Future of UN Peace Operations, The Henry L. Stimson Center, 2003; Report of the International Commission on Intervention and State Sovereignty, The Responsibility to Protect, International Development Research Centre, December 2001; Implementing The Responsibility to Protect, Report of The Secretary-General, UN General Assembly, 2009; Report of the Secretary-General on the situation concerning Western Sahara of 19 February 2002, UN Doc. S/2002/179.

- Գրեթե ուսուցման ասիլում չէ այն խնդիրը, թե այսօր պետության կառուցման որ փուլում են գտնվում այն երկրները, որտեղ կիրառվել է միջազգային կառավարում և թե այդ փուլի հաջողությունները կամ ձախողումները որքանով են պայմանավորված միջազգային կառավարման ընթացքում կիրառված ռազմավարությանը:
- Ուշադրություն հարկ է մնացել ինչպես միջազգային կառավարման ռազմավարության արդյունավետության խնդիրը դրա կիրառման կոնկրետ դեպքերում, այլև այդ ռազմավարության ունիվերսալության հարցը,
- Դիտարկված չեն Արցախյան հակամարտության դեպքում միջազգային կառավարման հնարավորություններն ու նպատակահարմարությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է գնահատել միջազգային կառավարման արդյունավետությունը Կոստվոյի, Արևելյան Թիմորի և Բոսնիա և Յերցեգովինայի դեպքերի համար՝ միջազգային կառավարման պրակտիկան դիտարկելով եռաչափ հարթության ուղիով, այն է՝ իրավական և քաղաքական բաղադրիչների, ինչպես նաև խնդրի վերաբերյալ առկա գիտական մոտեցումների շրջանակում:

Առաջադրված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- Պարզել միջազգային կառավարման հասկացության թյուրմեմբրանում ներքին պատճառները և հնարավոր հետևանքները, հստակեցնել ընկալումները:
- Վերհանել միջազգային կառավարման առանձնահատկությունները պատմական տարբեր փուլերում՝ Ազգերի լիգայի մանդատային համակարգից մինչև ՄԱԿ-ի վերջին նախաձեռնությունները:
- Վերլուծել ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևերը և միջազգային կառավարման պրակտիկայի զարգացման համար առանցքային նշանակություն ունեցած զեկույցներն ու դրանց հիման վրա դասակարգել այն խնդիրները կամ

իրավիճակները, որոնք այլևս չեն տեղավորվում ներպետական իրավասության շրջանակում և դիտարկվում են որպես միջազգային խաղաղության և անվտանգությանը սպառնալիք:

- Բացահայտել այն ուղղակի և անուղղակի գսարդ մեխանիզմները, որոնք կիրառելի են ՄԱԿ Անվտանգության խորհրդի գործողությունների նկատմամբ:
- Ուսումնասիրել ինքնիշխանության և չմիջամտության սկզբունքների պատմական եվոլյուցիան և դրա կապը միջազգային կառավարման արակտիկայի զարգացման հետ:
- Գնահատել միջազգային կառավարման արդյունավետությունը դրակիրառման կոնկրետ դեպքերում (Կոսովո, Արևելյան Թիմոր, Բոսնիա և Յերցեգովինա), ինչպես նաև ուսումնասիրել այդ ռազմավարության ունիվերսալության հարցը:
- Գնահատել Արցախյան հակամարտության դեպքում միջազգային կառավարման կիրառման հնարավորությունը և նպատակահարմարությունը:

Ատենախոսության օբյեկտը և առարկան: Ատենախոսության օբյեկտն է միջազգային կառավարման դերը և նշանակությունը հակամարտությունների կարգավորման և պետության կառուցման գործընթացներում: Ատենախոսության առարկան են միջազգային կառավարման իրավական և քաղաքական բաղադրիչների այլափոխումները պատմական տարբեր փուլերում, ինչպես նաև դրանց դրսևորումները Կոսովոյի, Արևելյան Թիմորի և Բոսնիայի և Յերցեգովինայի միջազգային կառավարման դեպքերում:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքը: Ատենախոսության տեսական հիմքը կազմում են գիտական հանդեսներում և որպես մենագրություններ հրատարակված գիտական աշխատանքները, ինչպես նաև խնդրի վերաբերյալ ՄԱԿ Գլխավոր քարտուղարների այն զեկուլյցները, որոնք առանցքային նշանակություն են ունեցել միջազգային կառավարման գաղափարի հստակեցման և կիրառման արդյունավետության մեծացման համար, ինչպես նաև ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևերը, որոնք կարևոր են խնդրի իրավական հիմքի հստակեցման և համակարգման համար:

Յետազոտությունն իրականացնելիս կիրառվել են ինչպես ունիվերսալ մեթոդներ՝ դեդուկցիա, վերացարկում, անալիզ, սինթեզ, դասակարգում, անալոգիա, այնպես էլ միջճյուղային և նեղ մասնագիտական մեթոդներ, մասնավորապես՝ պատմահամեմատական, կրոս-տեմպորալ համեմատության, նկարագրական, իրադարձությունների վերլուծության մեթոդները (event analysis): Տարբեր ժամանակներում ՄԱԿ Գլխավոր քարտուղարների հայտարարությունների և գեկուլյցների, ինչպես նաև Անվտանգության խորհրդի բանաձևերի ուսումնասիրության նպատակով կիրառվել է համատեքստի վերլուծության մեթոդը (content analysis):

Առենախոսության գիտական նորույթը: Յետազոտության արդյունքում վերեն հանվել միջազգային կառավարման մեխանիզմի առանձնահատկությունները, դրա տեսական և կիրառական նշանակությունը հակամարտության ներքին կարգավորման գործընթացի ժամանակ: Մեխանիզմի իրավական և քաղաքական բաղադրիչների վերլուծությունը, ինչպես նաև երեք հակամարտության ներքին՝ Կոսովոյի, Արևելյան Թիմորի, Բոսնիա և Յերցեգովինայի, դեպքում (որոնցից երկուսը՝ ինքնորոշման) դրա կիրառումը հակամարտության կարգավորմանն աջակցության և պետության կառուցման նպատակով, հնարավորություն է տվել գնահատել ոչ միայն այդ գործընթացների արդյունավետությունը, այլև ուրվագծել դրա հնարավոր կիրառումն այլ հակամարտության դեպքում: Յետազոտությունը կարող է առարկայական լինել նաև Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացի շրջանակներում, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանակցային սեղանին գտնվող փաստաթղթում ներառված տարրերից մեկը ենթադրում է միջանկյալ կարգավիճակ Արցախի համար: Ուստի, չի բացառվում, որ, որպես միջանկյալ կարգավիճակ, առաջարկվող տարբերակներից լինի նաև միջազգային անցումային կառավարումը: Այդ նպատակով անհրաժեշտ է խնդրի համապարփակ վերլուծությունն՝ այդպիսի զարգացումների դեպքում նպատակահարմարությունը գնահատելու համար:

Կատարված հետազոտության գիտական նորոլյթը կարելի է ներկայացնել հետևյալ դրույթներով՝

- Հիմնավորվել է, որ հետաառըպատերազմյան փուլում միջազգային կառավարման հասկացության նույնականացումը տարածքի զավթման հետ չունի որևէ հիմք, ինչը պայմանավորված է ընդունող պետության համաձայնության ձեռքբերման հրամայականով, գաղութային համատեքստից և ինամակալության համակարգից դուրս տարածքի կառավարման ստանձնման իրավական հիմքերի ձևակերպմամբ, ինչպես նաև կառավարման շրջանակները սահմանափակող մեխանիզմների հստակեցմամբ:
- Ապացուցվել է, որ միջազգային կառավարման ներկայիս նախաձեռնությունների հիմքում ընկած է միջազգային կառավարման հետաառըպատերազմյան պրակտիկան, որում ընդգծվում է ոչ միայն «բացասական» խաղաղության (զինված հակամարտության բացակայություն), այլև՝ «դրական» խաղաղության (արդարադատության, անաչառության և ժողովրդավարական կառավարման ապահովում) հաստատումը, ինչը տևական խաղաղության երաշխիքներից է:
- Ցույց է տրվել, որ այն համոզմունքը, որ ՄԱԿ Անվտանգության խորհրդի՝ ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա ընդունած միջոցները որևէ իրավական սահմանափակում չունեն, և խորհուրդը կարող է գործել միջազգային իրավունքի շրջանակներից դուրս, թյուր է երկու հիմնական պատճառով՝ Կանոնադրության մեջ առկա «ինքնասահմանափակման մեխանիզմների» (դրանում ամրագրված նպատակներն ու սկզբունքները) և jus cogens բնույթ ունեցող իրավական նորմերի առկայությունը:
- Հիմնավորվել է, որ գոյություն չունեն բացառապես ներպետական խնդիրներ: Այն հարցերը, որոնք միջազգային իրավունքով ենթակա են պետությունների կողմից կարգավորմանը, ժամանակի ընթացքում կարող են դառնալ միջազգային կարգավորման առարկա:

- Բացահայտվել է, որ թեև ներքին ու արտաքին ինքնիշխանությունն ենթարկվում է միմյանց հետ սերտորեն կապված են, այդուհանդերձ արդյունավետ կառավարումը պայմանավորված է բացառապես միջազգային ճանաչմամբ, իսկ միջազգային ճանաչումը, իր հերթին, անպայմանորեն չի ենթադրում ներքին ինքնիշխանության արդյունավետ գործարկում:
- Չետկոնֆլիկտային փուլում միջազգային կառավարման կիրառման գլխավոր փաստարկն այն է, որ այդ դեպքում ոչ ժողովրդավարական վարչակարգի հաստատման հավանականությունը հասցվում է նվազագույնի: Յուրյց է տրվել, որ միջազգային վարչակարգին տրամադրված լիազորությունների և մանդատի պայմաններում քիչ հավանական է ավտորիտար կառավարման համակարգի վերահաստատման հնարավորությունը, ինչը բնորոշ էր ժողովրդավարացման երրորդ փուլի միջարժեքեր կրներին:
- Բացահայտվել է, որ ինքնորոշման հակամարտությունների դեպքում միջազգային համայնքի կողմից առավել հաճախ կիրառվող «քաղաքական պայմանականություն» ռազմավարությունը կարող է ոչ թե ապահովել, այլ վտանգել խաղաղությունն այն դեպքում, երբ ինքնորոշվող տարածքի համար սահմանված չափորոշիչների բավարարումը կապված է հստակ քաղաքական կարգավիճակի հետ և ապահովված չեն նախնական օբյեկտիվ պայմաններ այդ չափանիշների իրագործման համար:
- Ապացուցվել է, որ թեև Արցախյան հակամարտության դեպքում միջազգային կառավարման իրականացման հավանականությունը մեծ է, այդուհանդերձ նման սցենարի դեպքում պետք է պահանջվի առնվազն երեք նախապայմանի բավարարում (Արցախի Չանրապետության ներկայացուցիչների ուղղակի մասնակցություն և բանակցություններին, քաղաքական կարգավիճակի հստակ սահմանում միջազգային մանդատում և տեղի իշխանություններին ստանձնած լիազորությունների փոխանցման հստակ ժամանակացույց), ինչն էապես կնվազեցնի

խնդրի վերջնական հանգուցալուծումից խուսանավելու հնարավորությունը:

Ատենախոսության գիտատեսական և կիրառական

նշանակությունը: Խնդրի ուսումնասիրության գիտատեսական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պատշաճ ուշադրության չի արժանացել կոնկրետ դեպքերում միջազգային կառավարման հիմքում ընկած ռազմավարության արդյունավետության խնդիրը և դրանուհիվերսալության հարցը:

Խնդրի համապարփակ ուսումնասիրությունը, դրա արդյունքում ձևակերպված եզրահանգումները թույլ կտան պարզել միջազգային կառավարման մեխանիզմի կիրառման հնարավորությունն այլ հակամարտության ներքին դեպքում: Մասնավորապես, փորձ է արվում գնահատել մեխանիզմի կիրառման հնարավորությունն ու նպատակահարմարությունն Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում:

Յետազոտության արդյունքների փորձարկումը և

հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթները զեկուցվել են հետևյալ գիտաժողովների ժամանակ.

- Ղարաբաղյան շարժման 30-ամյակին նվիրված գիտաժողով, մարտի 15-17, 2018թ., Ստեփանակերտ:
- Մեսրոպ Մաշտոց համալսարանի 20-ամյակին նվիրված «Կրթության և գիտության դերը պետության զարգացման գործում» թեմայով միջազգային գիտաժողով, հոկտեմբերի 7, 2017թ., Ստեփանակերտ:
- Ծուշիի ազատագրման 25-րդ տարեդարձին նվիրված ուսանողական գիտաժողով, մայիսի 5, 2017թ., Ստեփանակերտ:
- Յետխորհրդային տրանսֆորմացիայի քառորդ դարը. արդյունքներ և հեռանկարներ միջազգային գիտաժողով, հոկտեմբերի 28-29, 2016, Երևան:
- «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողով, 15-18 սեպտեմբեր, 2016թ., Ստեփանակերտ:

- Local Roots of Global Peace: International Conference on Global Security Studies, հունիսի 24-25, 2016թ., Երևան:

Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են թվով 8 գիտական հոդվածներում, որոնցից մեկը Scopus միջազգային շտեմարանում ընդգրկված հանդեսում.

- Կիրակոսյան Մ., Չմիջամտության և ինքնիշխանության սկզբունքների տրանսֆորմացիան միջազգային իրավունքում և միջազգային հարաբերություններում, Հայկական քաղաքագիտական հանդես, 1, 2019:
- Kirakosyan M., Challenges of Democratization under International Supervision, Democracy and Security, pp. Routledge, Taylor and Francis, 2018, pp. 1-18, <https://doi.org/10.1080/17419166.2018.1507823>.
- Կիրակոսյան Մ., Հակամարտությունների կարգավորման ժամանակ միջազգային կառավարման կիրառման վրա աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությունը, ԱրՊՀ, Գիտական ընթերցումներ, Հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2017, Էջ 203-207:
- Kirakosyan M., International Territorial Administration as a Conflict Resolution Mechanism: Possibilities and Challenges, Global Development and Security Studies Program, the Local Roots of Global Peace, Conference Proceedings, Yerevan, NT Holding, 2016, pp. 130-139.
- Կիրակոսյան Մ., Միջազգային կառավարումը՝ որպես հակամարտության կարգավորման հնարավորություն, թեխոչընդոտ. Կոսովո և Լեռնային Ղարաբաղ, «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում (ԱԵԳՄՄ), 2016, Էջ 206-210:
- Կիրակոսյան Մ., Հետկոնֆլիկտային հասարակություններում ժողովրդավարացման խթանման հնարավորությունները միջազգային կառավարման ճանապարհով, Հայկական քաղաքագիտական հանդես, 2, 6, 2016, Էջ 65-88:

- Kirakosyan M., The Possibilities of Increasing the Efficiency of International Territorial Administration, Armenian Journal of Political Science 1, 2, Yerevan, Center of Perspective Researches and Initiatives, pp.117-135, 2015.
- Կիրակոսյան Մ., Տարածքի ժամանակավոր միջազգային կառավարման արդյունավետության մեծացման հնարավորությունները, Հայկական քաղաքագիտական հանդես, 2, 2014, էջ 117-140:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ ութ ենթագլուխերով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 172 էջ է:

**ԳԼՈՒԽ 1. ՏԱՐԱԾՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԸ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՒՄ**

Վերջին մի քանի տասնամյակներում միջազգային հանրությունը բախվում է զինված հակամարտությունների աճող թվի հետ, ինչը գերակշիռ դեպքերում պայմանավորված է

Ժողովուրդների՝ իրենց ինքնորոշման իրավունքը իրացնելու և անկախ պետականության ստեղծելու ձգտման հետ: Չնայած միջազգային իրավակարգի և խաղաղ գոյակցության պահպանման համար ձևավորված «չմիջամտության» և «պետական ինքնիշխանության» սկզբունքների առկայությանը, միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող միջամտության պրակտիկան գործնականում երբեք չի դադարել գոյություն ունենալ: Սառը պատերազմի ավարտից հետո հակամարտությունների կարգավորման մեխանիզմների շարքում ՄԱԿ-ը ներդրեց միջազգային կառավարման գաղափարը, որի հիմքերը դրվել էին դեռևս Ազգերի Լիգայի շրջանում՝ մանդատային համակարգի և Ազգերի Լիգայի տարածքային կառավարման առանձին նախաձեռնությունների շրջանակներում: Հաջորդ մեկ դարը վճռորոշ ազդեցություն ունեցավ գաղափարի թե՛ իրավական, թե՛ քաղաքական բաղադրիչի հստակեցման համար: Նախկինում կիրառվող իրավիճակային (ad hoc) մեխանիզմը ստացավ ինստիտուցիոնալ ձև՝ դասական խաղաղապահ առաքելությանից անցում կատարելով հակամարտությունների կարգավորման և պետության կառուցման ու կայացման հարցերի կարգավորմանը: Այդուհանդերձ, հակամարտությունների թիվն այդ ընթացքում ոչ միայն չի նվազել, այլև անգամ չի նվազել դրանց կարգավորման գործընթացի տևողությունը: Ավելին, հակամարտությունների կարգավորման գործընթացների և գործիքակազմի կիրառման արդյունավետությունը մնում է այդ ոլորտի գիտական հետազոտությունների հիմնախնդիրներից մեկը:

1.1. Տարածքի միջազգային կառավարում. հասկացությունը և հասկացության յոթ ուրվմբռնումները

Միջազգային կառավարման՝ որպես իրավական հայեցակարգի, հիմքերը \$որմալ առումով դրվել են 20-րդ դարում՝ Մեյր Իդիթի

«միջազգայնացում» գաղափարի ներմուծմամբ²⁷: Վերջինս ավելի վաղ փուլերում օգտագործվում էր բնորոշելու պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող տարածքների ինքնիշխանության սահմանափակումն այլ պետության կամ պետությունների խմբի օգտին: Երկու համաշխարհային պատերազմների արդյունքում և, մասնավորապես, ՄԱԿ-ի ստեղծումից հետո այդ նեղ ըմբռնումն ինստիտուցիոնալացվեց, և ներկայումս նույնիսկ ձևակերպվել են միջազգային կառավարման իրավական հիմքերը:

Տարբերում են միջազգայնացման երկու հիմնական ձև՝ տարածքային և գործառնության: Տարածքային միջազգայնացումն օտարում է տվյալ տարածքը պետության իրավասության շրջանակներից՝ այն տեղադրելով միջազգային ինստիտուցիոնալ շրջանակում: Գործառնության միջազգայնացումը ոչ թե օտարում, այլ սահմանափակում է պետական իշխանությունների լիազորությունները²⁸: Ուստի, գործառնության ինստիտուցիոնալացման դեպքում միջազգային վարչակազմը դառնում է տեղի իշխանությունների գործընկեր կառավարման որոշակի գործառնությունների իրականացման ժամանակ՝ առանց ստանձնելու տարածքի ուղղակի կառավարումը:

Գոյություն ունեն միջազգային կառավարման գաղափարի տարատեսակ և նույնիսկ իրարամերժ սահմանումներ ու մեկնաբանություններ: Ռ. Կապլանը միջազգային կառավարումը բնորոշում է որպես ժամանակավոր առաքելություն, որի նպատակն է դյուրացնել նոր պետության կազմավորման գործընթացը կամ առնվազն նպաստել էական ինքնավարության ձեռքբերմանը²⁹: Կառավարման գործառնությունների շարքում հեղինակն առանձնացնում է հինգը.

1. հասարակական կարգի և ներքին անվտանգության հաստատում և պահպանում,

²⁷ Ydit M., Internationalised territories from the "Free City of Cracow" to the "Free City of Berlin." A study in the historical development of a modern notion in international law and international relations, A.W. Sythoff, 1st edition, 1961.

²⁸ Stahn C., The Law and Practice..., էջ 50-53:

²⁹ Caplan R., A New Trusteeship...

2. փախստականների և ներքին տեղահանված անձանց վերադարձի և վերաինտեգրման հնարավորություն,
3. հիմնական վարչական գործառնությունների իրականացում,
4. ներպետական քաղաքական ինստիտուտների զարգացում, ներառյալ ընտրությունների անցկացում և քաղաքացիական հասարակության ձևավորում,
5. տնտեսության վերականգնում³⁰:

Ս. Չեսթերմանն օգտագործում է «անցումային կառավարում» բնորոշումը՝ գործառնությունների շարքում նշելով աջակցությունն ընտրություններին, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ամրապնդումը և տարածքում տնական խաղաղության ու կայունության հաստատումը³¹ : Առավել համընդգրկուն սահմանում է առաջարկում Ռ. Ուայլդը՝ միջազգային կառավարումը բնորոշելով որպես ռազմավարական գործիք, որի միջոցով միջազգային դերակատարները հաստատում են իրենց գերիշխանությունը կամ վերահսկողությունը այս կամ այն տարածքային միավորի նկատմամբ՝ ներպետական կառավարման համակարգի միջոցով³²:

Ք. Սթահնն առանձնացնում է միջազգային կառավարման երեք հիմնական գործառնություններ³³, որոնք զարգացել են մեխանիզմի կիրառման պրակտիկայի ընթացքում՝ սկսած 19-րդ դարից: Դրանք են.

1. ապագաղութացում,
2. տարածքային վեճերի կարգավորում,
3. պետության կառուցում:

Ապագաղութացում: ՄԱԿ-ը բազմիցս միջամտել է այն դեպքերում, երբ գաղութարար պետությունները չեն կարողացել համաձայնության գալ տարածքի կարգավիճակի վերաբերյալ: ՄԱԿ-ի առաքելությունները նախկին իտալական գաղութներ Լիբիայում և Էրիթրեայում, Նիդեռլանդների և Ինդոնեզիայի միջև հակասությունների պատճառ դարձած Արևմտյան Իրիանում և Արևելյան Թիմորում, ինչպես նաև յոթանասունհինգ տարի

³⁰ Willigen V. N., նշվ. աշխ.:

³¹ Chesterman S., You, the People..., էջ 5:

³² Wilde R., International Territorial Administration: How Trusteeship and the Civilizing Mission Never Went away, NY., Oxford University Press, 2010.

³³ Stahn C., The Law and Practice..., էջ 401-407:

Չարավային Աֆրիկայի վերահսկողության ներքո գտնվող Նամիբիայում իրականացվում էին ապագաղութացման գործընթացի շրջանակներում³⁴:

Տարածքային վեճերի կարգավորման գործառույթի շրջանակում Սթահեն առանձնացնում է կարգավիճակի որոշման, չեզոքացման և տարածքի փոխանցման ենթագործառույթները: Կարգավիճակի որոշման ենթագործառույթի շրջանակներում միջազգային կառավարումն իրականացվում է երկու հիմնական ձևաչափով՝ երբ ՄԱԿ-ն ուղղակիորեն ներգրավվում է կարգավիճակի որոշման գործընթացում (Կոսովո, Սաարի մարզ) կամ անուղղակիորեն՝ հանրաքվեի կամ ընտրությունների անցկացումը (Արևմտյան Սահարա, Արևմտյան Իրիան) կամ կարգավիճակի վերաբերյալ որոշման իրականացումը վերահսկելու ճանապարհով (Արևելյան Թիմոր)³⁵: Առաջին ձևաչափի դեպքում գլխավոր մարտահրավերն այն է, որ տարածքի կարգավիճակը, որպես կանոն, հստակ չի ձևակերպվում կառավարման մանդատում: Ուստի, նման դեպքերում ՄԱԿ-ը պարտավորվում է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի շահերն ու հետաքրքրությունները, ինչն, իր հերթին բարդացնում է առաքելության ընթացիկ գործունեությունն ու որոշումների կայացման գործընթացը, պատճառ դառնում տեղի բնակչության կողմից առաքելության նկատմամբ վստահության մակարդակի նվազեցմանը, ինչպես նաև կարող է նոր ռազմական բախումների վերսկսման պատճառ դառնալ, ինչպես դա եղավ Կոսովոյում 2004թ.: Մինչդեռ ինքնորոշման հակամարտությունների դեպքում կառավարման մանդատում կարգավիճակի հստակ սահմանումը և իշխանությունների լիազորությունների փոխանցման առավելակալական ժամանակացույցը առաքելության հաջող ավարտի հիմնական երաշխիքներից են³⁶:

Որոշ դեպքերում միջազգային կառավարումը կիրառվել է նաև որպես «ռազմավարական չեզոքացման» գործիք՝ վիճելի տարածքը հակոտնյա շահեր ունեցող կողմերի ազդեցությունից դուրս

³⁴ Zaum D., նշ վ. աշ խ., Chesterman S., You, the People...

³⁵ Stahn C., The Law and Practice..., էջ 401:

³⁶ Kirakosyan M., International Territorial Administration as a Conflict Resolution Mechanism: Possibilities and Challenges, Global Development and Security Studies Program, the Local Roots of Global Peace, Conference Proceedings, Yerevan, NT Holding, 2016, pp. 130-139.

բերելու ճանապարհով (Սաարի մարզ, Դանցիզ ազատ քաղաք, Երուսաղեմ): Դրա հիմնական նպատակը հակամարտող կողմերի միջև լարվածության թուլացումն էր:

Միջազգային կառավարում կարող է հաստատվել նաև մի պետության նից մեկ այլ պետության տարածքի փոխանցման գործընթացը դյուրացնելու նպատակով: Այդպիսի առաջին հաջողված առաքելությանը եղել է Արևմտյան Իրիանում (ավելի ուշ վերանվանված Արևմտյան Նոր Գվինեա)³⁷ տարածքը Նիդեռլանդների գաղութային կառավարումից Ինդոնեզիայի իշխանությանն անցնելու փոխանցելու հստակ մանդատով: Յետագայում միջազգային կառավարում հաստատվեց նաև Արևելյան Սլովենիայում՝ տարածքը Խորվաթիայի կազմ վերափոխելու նպատակով: Վերջինս հաճախ որակվում է որպես միջազգային կառավարման համատեքստում ՄԱԿ-ի առավել արդյունավետ առաքելության և մատնանշվում է երկու հիմնական պատճառ՝ հստակ մանդատը և առանցքային հարցերի շուրջ քաղաքական փոխհամաձայնության բարձր մակարդակը: Դեպքը կարևոր էր նաև միջազգային կառավարման իրավական բաղադրիչի հստակեցման տեսանկյունից, քանզի առաջին անգամ ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլուխը կիրառվեց որպես միջազգային կառավարման հաստատման իրավական աղբյուր՝ դառնալով նախադեպ հաջորդող առաքելությանն անցնելու համար³⁷:

Պետության կառուցում: Ինչպես նշում է Չեսթերմանը, պետության կառուցման գործընթացը ներառում է լայնածավալ միջազգային ներգրավվածություն, որն ուղղված է կառավարման այնպիսի ինստիտուտների կառուցմանը կամ վերակառուցմանը, որոնք կապահովեն քաղաքացիների ֆիզիկական ու տնտեսական անվտանգությունը և քաղաքական, տնտեսական ու սոցիալական ոլորտների կայուն զարգացումը³⁸: Միջազգային կառավարման՝ որպես պատերազմից պառակտված հասարակությանն անցնելու կառուցման կամ վերակառուցման մեխանիզմի, գաղափարը զարգացել է 20-րդ դարի երկրորդ կեսին, թեև դրա որոշ տարրեր հատուկ էին նաև Ազգերի

³⁷ Novokmet R., Peacebuilding through International Territorial Administration: An Assessment of Cases of Eastern Slavonia (Croatia), Bosnia and Herzegovina and Kosovo, Balkan Social Science Review, vol. 1, June 2013, pp. 175-200.

³⁸ Chesterman S., You, the People...

լիզայի նախաձեռնություններին: 1960-ական թվականներին ՄԱԿ-ի քառամյա ներկայությունը Կոնգոյում ակնհայտ դարձրեց, որ միայն ռազմական ներգրավվածությունը տևական անվտանգության ու կայունության երաշխիք չէ: Վերակառուցումն ավելի համակարգային մեխանիզմի՝ խաղաղապահ առաքելության, վերափոխելու գաղափարն ամրապնդվեց 1990-ական թվականներին, երբ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ժողովրդավարական կառավարումը, անհատական քրեական պատասխանատվությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, ստացան լայն միջազգային ճանաչում ³⁹ : Դրան նպաստեց նաև երկբևեռ աշխարհակարգի փլուզումը, ինչի արդյունքում միջարքերկրներ ձեռք բերեցին, ինչպես Կապլանն է որակում, «արհեստական կայունություն» ⁴⁰ որոշակի աստիճան: Պետության կառուցման գործընթացում միջազգային կազմակերպությունների աջակցության անհրաժեշտությունն այդ փլուզմամբ պայմանավորված միջարք հումանիտար խնդիրների, ինչպես նաև գլոբալ իզացիայի արդյունքում առաջացած փոփոխությունների արդյունք էր: Միջազգային կառավարման արդյունավետությունը ժողովրդավարական կառույցների զարգացման խթանման գործում բավական բարդ է գնահատել՝ հաշվի առնելով կրկնվող ձախողումները, մասնավորապես՝ միջանիտարածքներում ռազմական բախումների վերսկսումը (Կոսովո, Արևելյան Թիմոր, Աֆղանստան) կամ ընտրություններում ծայրահեղական քաղաքական ուժերի ամրապնդումը (Բոսնիա և Հերցեգովինա) ⁴¹ և այլն: Այդուհանդերձ, անհնար է ժխտել, որ միջարք դեպքերում ՄԱԿ-ը վճռորոշ դերակատարություն է ունեցել ժողովրդավարական ինստիտուտների ստեղծման, դատական համակարգի բարեփոխումների, տնտեսության վերակառուցման, անցումային ինստիտուտներին տեխնիկական աջակցության տրամադրման և այլ հարցերում: Թեկնածուական ատենախոսության երրորդ գլխում ավելի մանրամասն անդրադարձ է

³⁹ Stahn C., *The Law and Practice...*, էջ 404:

⁴⁰ Caplan R., *Exit Strategies...*, էջ 3:

⁴¹ Fox G., *International Law and the Entitlement to Democracy after War*, *Global Governance*, vol. 9, 2003, pp. 179-197.

կատարվում միջազգային կառավարման համատեքստում պետության կառուցման գործընթացի մարտահրավերներին:

Միջազգային կառավարում կարող է իրականացվել հետևյալ երեք ձևերից որևէ մեկով.

1. ՄԱԿ-ի միանձնյա ուղղակի կառավարում,
2. ՄԱԿ-ի և ներպետական իշխանության ունեցող համատեղ կառավարում,
3. ՄԱԿ անդամ պետության կողմից ժամանակավոր կառավարում՝ ՄԱԿ Անվտանգության խորհրդի լիազորությամբ:⁴²

ՄԱԿ-ի լիարժեք կառավարման՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ունեցող լիազորությունների միանձնյա ստանձնման, բոլոր երեք դեպքերն արձանագրվել են հետաառըպատերազմյան փուլում: Նախ, 1996թ. ՄԱԿ-ը ստանձնեց Արևելյան Սլովենիայի ուղղակի կառավարումը, այնուհետև 1999թ.՝ Կոսովոյի և Արևելյան Թիմորի կառավարումը: Այդ երեք դեպքերից առավել բարդը Կոսովոյի դեպքն էր, քանզի եթե առաջինի դեպքում կառավարման վերջնաժամկետը (երկու տարի ժամկետ) և վերջնական պատակը (խաղաղ վերաինտեգրում՝ հորվաթիայի կազմ) հստակ սահմանված էին կառավարումը լիազորող մանդատում, ապա Կոսովոյում կառավարումը հաստատվել էր անորոշ ժամկետով, իսկ տարածքի ապագա կարգավիճակի առնչությամբ նշված էր էական ինքնավարություն, ինչն ընդգրկում է քաղաքական կարգավիճակի մեկնաբանության չափազանց լայն տիրույթ⁴³: Տարածքի կառավարման համար պատասխանատու ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը կարող էր փոփոխել, չեղարկել կամ կասեցնել գործող այն օրենքները, որոնք համատեղելի չէին միջազգային կառավարման մանդատի նպատակների ու սկզբունքների հետ, կարող էր ներմուծել նոր օրենսդրական ակտեր, կատարել նշանակումներ, այդ թվում՝ դատական համակարգում, և այլն: Տարածքի ժողովուրդը չէր կարող վիճարկել տարածքի կառավարման համար պատասխանատու ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի (այսուհետ՝

⁴² De Wet E., նշվ. աշխ.

⁴³ Կիրակոսյան Մ., Տարածքի ժամանակավոր միջազգային կառավարման արդյունավետության մեծացման հնարավորությունները, 3-րդ կարգի քաղաքագիտական հանդես, 2, 2, 2014, էջ 117-140:

Հատուկ ներկայացուցիչ) գործողությունները կամ հեռացնել նրան պաշտոնից: Ավելին, Հատուկ ներկայացուցիչը գործնականում ոչ միայն հաշվետու չէր տեղի բնակչությանը, այլև վայելում էր որոշակի ինքնավարություն ՄԱԿ-ի կառույցներից: Օրինակ, 1999-2001թթ. Կոսովոյում Հատուկ ներկայացուցիչ պաշտոնը զբաղեցրած Բ. Քոուչները ամրապնդեց քաղաքական խորհրդականների իր ձևավորած կազմը՝ այդպիսով ստվերում թողնելով ՄԱԿ-ի քաղաքական հարցերով վարչությունը⁴⁴:

Համատեղ կառավարման հետաառ պատերազմյան առաջին փորձը եղավ Կամբոջայում՝ գործադիր իշխանության լիազորություններով օժտված ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմի (UNTAC) և օրենսդիր իշխանության գործառույթների համար պատասխանատու Կամբոջայի Գերագույն ազգային խորհրդի համատեղ ջանքերով⁴⁵: Դրան հաջորդեց 1993թ. Սոմալիում Ազգային անցումային խորհրդի և ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմի (UNOSOM II) համատեղ կառավարումը: Համատեղ կառավարման վերջին դեպքը գրանցվեց Բոսնիա և Հերցեգովինայում, որտեղ Անվտանգության խորհուրդը լիազորել էր Հատուկ ներկայացուցիչն գործել դաշնային կառավարությանը զուգահեռ՝ Դեյթոնի խաղաղության համաձայնագրով ամրագրված դրույթների իրականացումն ապահովելու նպատակով⁴⁶:

ՄԱԿ անդամ պետությունների՝ ՄԱԿ մանդատով տարածքի կառավարման միակ նախադեպը Իրաքի ժամանակավոր կառավարումն էր: 2003թ. մարտին Իրաք ներխուժումից և Բասս ռեժիմի⁴⁷ տապալումից հետո Անվտանգության խորհուրդն ընդունեց 1483(2003) բանաձևը՝ կոչ անելով Միացյալ Նահանգներին և Միացյալ Թագավորությանը «ապահովել Իրաքի ժողովրդի բարեկեցությունը տարածքի արդյունավետ կառավարման ճանապարհով, մասնավորապես, աջակցելով անվտանգության ու կայունության վերականգնման և այնպիսի պայմանների ապահովման ուղղությամբ, որոնց

⁴⁴ Lemay-Hébert, N., State-Building...

⁴⁵ Keller L., UNTAC in Cambodia-from Occupation, Civil War and Genocide to Peace, Max Planck Yearbook of United Nations Law, vol. 9, 2005, pp. 127-178.

⁴⁶ The General framework Agreement for Peace in Bosnia and Herzegovina, Annex 10, Article 5, http://www.ohr.int/?page_id=63269, 10.02.2019.

⁴⁷ Արաբական Սոցիալ իստական Բասս կուսակցություն, որը 1968-2003թթ. գլխավորում էր Սադամ Հուսեյնը:

շրջանակում հրաքի ժողովուրդը կարող է ազատորեն որոշել իր քաղաքական ապագան»⁴⁸:

Հետազոտողների շրջանում տարածքի կառավարման առաջին և երրորդ ձևերի առնչությամբ ունեցած մտահոգությունները մասամբ պատճառ են դառնում այդ և նմանատիպ այլ նախաձեռնությունների միջև գուգահեռների անցկացմանը, ընդհուպ՝ դրանց նույնականացմանը: Գ. Ֆոքսը միջազգային կառավարումը որակում է որպես «մարդասիրական զավթում»՝ նշելով, որ նման առաքելությունները միտված են հաստատելու սոցիալական կայունություն, վերջ դնելու մարդու իրավունքների ոտնահարմանը, բարեփոխելու պետական կառույցները, վերականգնելու հակամարտության մեջ ներգրավված խմբերի խաղաղ գոյակցությունը⁴⁹ : «Չավթում» եզրույթի կիրառումը հիմնավորելու համար Ֆոքսի առաջ քաշած գլխավոր փաստարկն այն է, որ միջազգային կազմակերպությունների՝ տարածքի նկատմամբ դեյուրե ստանձնած գրեթե լիարժեք իշխանությունը համարժեք է տարածքի զավթման արդյունքում առանձին պետությունների ստանձնած դե ֆակտո իշխանությանը: Ակնհայտ է, որ ստանձնած իշխանության ծավալը չի կարող այս գաղափարների նույնականացման հիմնավորում լինել: Հետաքրքրական է, որ Ֆոքսի մեկնաբանության մեջ ինքնին առկա են տարածքի զավթման և միջազգային կառավարման հստակ տարբերակումներ: Չավթման և միջազգային կառավարման առավել ակնառու տարբերությունը տարածքի կառավարումը ստանձնած դերակատարների միջև է. եթե առաջինի դեպքում դրանք առանձին պետություններ են, ապա երկրորդի պարագայում՝ միջազգային կազմակերպություններ: Որպես դրան միջակայիս հետևանք՝ տարածքի զավթումը բխում է առանձին պետությունների ազգային շահերից: Թեև դա իր դրսևորումն ունի նաև միջազգային կառավարման դեպքում, սակայն այդպիսի առաքելությունների՝ միջազգային բնույթ ունենալու արդյունքում, այդ շահերը հասցվում են նվազագույնի⁵⁰: Հետևաբար,

⁴⁸ UN SC Resolution 1483 (2003), 22 May, 2003, http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/1483%20%282003%29.

⁴⁹ Fox G., Humanitarian Occupation, Cambridge University Press, Cambridge Studies in International and Comparative Law, 2008.

⁵⁰ Willigen V., նշվ. աշխ., էջ 19:

միջազգային կառավարումը կարելի է համարել տարածքի կառավարման հարաբերականորեն «անկողմնակալ» մեխանիզմ:

Տարբեր են նաև միջազգային կառավարման և տարածքի զավթման հավանական ելքերը: Առաջինի դեպքում հնարավոր է

1) Կառավարման ներքո գտնվող տարածքի ինտեգրում կամ վերաինտեգրում ինքնիշխան պետության կազմում (Սաարի մարզի վերաինտեգրումը Գերմանիայի կազմում 1935թ. հանրաքվեի արդյունքում, Արևելյան Սլովենիայի վերաինտեգրումը Խորվաթիայի կազմում (1998թ.), Մոսթարի վերաինտեգրումը Բոսնիայի կազմում):

2) Անկախ և ինքնիշխան պետության հռչակում (Արևելյան Թիմորի Դեմոկրատական Հանրապետություն (2002թ.), Կոսովոյի Հանրապետություն (2008թ.):)

3) Ինքնիշխան պետության դեպքում միջազգային կառավարման ավարտը սովորաբար ազդարարվում է ընտրությունների անցկացումից հետո (Կամբոջա):

Տարածքի զավթման հնարավոր ելքերն են.

1) Չավթում իրականացնող պետության դուրս մղում զավթված տարածքից:

2) Նոր պետության կազմավորում (Թուրքիայի իրականացրած զավթման արդյունքում՝ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության, Հնդկաստանի զավթման՝ Արևելյան Պակիստանի (ներկայումս՝ Բանգլադեշ) հռչակում):

3) Տեղի իշխանությունների՝ տարածքի նկատմամբ վերահսկողության վերականգնում, որը միշտ է, որ ուղեկցվում է ընտրությունների անցկացմամբ և անգամ տարածքից զինված ուժերի լիարժեք դուրսբերմամբ (Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Դաշինքի երկրների՝ Գերմանիայի և Ճապոնիայի նկատմամբ իրականացված զավթումը դադարեցվեց՝ տարածքում զինված ուժերի պահպանմամբ):

4) Չավթած տարածքի ինտեգրում սեփական տարածքին (Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Խորհրդային Միությունն իր

կազմում ներառեց Արևելյան Եվրոպայի և Ճապոնիայի որոշ տարածքներ):⁵¹

20-րդ դարի վերջին հնարավոր դարձավ որոշել նաև միջազգային կառավարման և գավթման իրավական բաղադրիչի տարբերությունները, քանզի այդ շրջանում էր, որ առաջինի կիրառման իրավական հիմնավորման համար ձևակերպվեցին լիովին նոր հիմքեր՝ փոխարինելով նախկին անուղղակի և աղավաղված հիմնավորումներին: Ներկայումս ՄԱԿ-ը տարածքի կառավարում ստանձնում է ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևի հիման վրա, որն ընդունվում է մեծամասամբ հղում կատարելով ՄԱԿ Կանոնադրության՝ միջազգային խաղաղության և անվտանգության խախտման, սպառնալիքի կամ ագրեսիայի գործողությունների կանխմանը վերաբերող 7-րդ գլխին (Բոսնիա և Հերցեգովինա, Կոսովո, Արևելյան Թիմոր)⁵²: Ընդ որում, բանաձևի ընդունմանը մեծ մասամբ նախորդում է կողմերի համաձայնությունը, որը սովորաբար ձեռք է բերվում հրադարարի հաստատման (Կոսովո, Հյուսիսային Իրաք) կամ խաղաղության համաձայնագրի (Դեյթոնի համաձայնագիրը՝ Բոսնիայում, Փարիզի համաձայնագիրը՝ Կամբոջայում) կնքման ճանապարհով⁵³: Հարկ է ընդգծել նաև, որ ի տարբերություն գերակշիռ դեպքերում «ընդունող պետության» (host state) համաձայնությամբ կիրառվող միջազգային կառավարմանը՝ տարածքի գավթման վրա անմիջականորեն տարածվում են միջազգային մարդասիրական իրավունքի փաստաթղթերը, մասնավորապես՝ Ժնևի և Հաագայի կոնվենցիաները: Դրանք ուղղակիորեն չեն վերաբերում ՄԱԿ-ի միջազգային կառավարման դեպքերին, քանզի ՄԱԿ-ը միջազգային մարդասիրական իրավունքի համաձայնագրերի ստորագրող կողմ չէ: Ուստի, մարդասիրական իրավունքի փաստաթղթերը կարող են տարածվել ՄԱԿ-ի առաքելությունների վրա միայն այն ժամանակ, երբ կառավարման կոնկրետ դեպքում ՄԱԿ-ը

⁵¹ Ratner S.R., Foreign Occupation and International Territorial Administration: The Challenges of Convergence, The European Journal of International Law, vol. 16, no. 4, 2005, pp. 695-719.

⁵² De Brabandere E., The Responsibility for Post-Conflict Reforms: A Critical Assessment of Jus Post Bellum as a Legal Concept, Vanderbilt Journal of Transnational Law, vol. 43, no. 119, 2010, pp. 119-149.

⁵³ Ratner S.R., նշվ. աշխ.:

ստանձնի միջազգային մարդասիրական իրավունքի փաստաթղթերում ամրագրված նորմերին հավատարիմ մնալու սկզբունքը⁵⁴:

Ավելի ծայրահեղ մոտեցումներ ունեցող հետազոտողներ միջազգային կառավարումը բնորոշում են որպես «նեոգաղութային» կամ «կայսերական»⁵⁵ : Ըստ Ռ. Փերիսի, միջազգային կազմակերպությունները մշակել են հստակ պատկերացում, թե ինչպես պետությունները պետք է ինքնակազմակերպվեն՝ հիմնվելով իբերալ ժողովրդավարության և շուկայական տնտեսության վրա: Ձախուղված պետությունների վերակառուցման ժամանակ միջազգային կազմակերպություններն առաջնորդվում են հենց այդ պատկերացմամբ՝ չճանաչված պետություններում ներդնելով ներպետական կառավարման միաձև մոդել: Այդ տեսանկյունից միջազգային կառավարումը նմանվում է «քաղաքակրթության տարածման առաքելության» (\$ր.՝ mission civilisatrice): Նման եզրահանգումների անկյունաքարը դարձան հատկապես Կոսովոյում և Արևելյան Թիմորում միջազգային կառավարման մեխանիզմի կիրառման դեպքերը, որտեղ տարածքի կառավարումն իրականացնող մարմնին՝ ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչին, վերապահված էին կառավարման ամբողջական՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորությունները: Գաղութային նախաձեռնությունների հետ համեմատության հիմքում ընկած է նաև այն պնդումը, որ միջազգային կառավարման ներկայիս նախաձեռնությունները որոշ դեպքերում պարտադրվում են տեղի բնակչությանը և այդ տեսանկյունից ունեն գաղութացմանը բնորոշ «չահագործող» (exploitative) բնույթ: Ընդ որում, նշվում է այդ պարտադրանքի երկու բաղադրիչ. 1) արտաքին կառավարման կիրառումը տեղի բնակչության համաձայնությանը չի արժանանում, 2) կառավարման հիմքում ընկած քաղաքականությունը չունի լեգիտիմ բնույթ, ինչի արդյունքում հաշվի է առնվում Չատուկ ներկայացուցչի, այլ ոչ՝ տեղի

⁵⁴ The Canadian Yearbook of International Law, University of British Columbia Press, Vol. 46, 2008, p. 132

⁵⁵ Chandler D., Bosnia's New Colonial Governor, *Guardian*, 9 July, 2002, Paris R., International Peacebuilding and the "Mission civilisatrice", *Review of International Studies*, 28, 2002, pp. 637-656.

բնակչու թյան կամքը⁵⁶: Եթե մինչև սառը պատերազմի ավարտը նման պնդումները մասամբ արդարացված էին, ապա դրանից հետո միջազգային կառավարման իրավական բաղադրիչում արձանագրված տեղաշարժը, մասնավորապես՝ ընդունող պետության համաձայնության ձեռքբերման հրամայականի գիտակցումը, գաղութային համատեքստից դուրս տարածքի կառավարման ստանձնման իրավական հիմքերի ձևակերպումը, ինչպես նաև կառավարման շրջանակները սահմանափակող մեխանիզմների հստակեցումը, միջազգային կառավարման վերոնշյալ մեկնաբանությունները դարձնում են ոչ արդիական:

Վերը բերված թյուրըմբռնումներից և դրանցից բխող վտանգներից խուսափելու համար անհրաժեշտ է հստակություն մտցնել միջազգային կառավարման սահմանման մեջ՝ հաշվի առնելով դրա առանձնահատկությունները և վերը թվարկված սահմանումներում առկա մի շարք բացթողումներ, այդ թվում՝ մեխանիզմի ռազմական և քաղաքացիական բաղադրիչների հստակ տարանջատումը, հակամարտության ներքին կարգավորման բանակցություններում դերակատարության ընդգծումը, իրավական բաղադրիչում արձանագրված տեղաշարժի արտացոլումը, ինչպես նաև ինքնորոշման հակամարտության ներքին համատեքստից գատնմիջազգային կառավարման կիրառման հնարավորությունը: Ուստի, առաջարկվում է միջազգային կառավարումը սահմանել որպես որևէ վարչական տարածքում միջազգային կազմակերպության ներքին ռազմական և քաղաքացիական օրինական ներկայության ձև, որը նպատակառոտ դրված է հակամարտության գոտում խաղաղության կայուն միջավայրի ձևավորմանը, տնտեսական, սոցիալական և քաղաքական տեղական ինստիտուտների ձևավորմանը և/կամ զարգացմանը, հակամարտության կարգավորմանն ուղղված խաղաղ բանակցությունների առաջընթացին և նոր մարտական գործողությունների կանխմանը՝ ժամանակավորապես ստանձնելով ճանաչված կամ չճանաչված պետության կառավարման ամբողջական կամ մասնակի իշխանությունը:

⁵⁶ Wilde R., Colonialism Redux? Territorial Administration by International Organizations, Colonial Echoes and the Legitimacy of the International, in: Hehir A., Robinson N., (eds.) State Building: Theory and Practice, Routledge, Abingdon and New York, 2007.

1.2. Միջազգային կառավարման պատմական փուլերը և կիրառման արդյունավետությունը

Միջազգային կառավարման արակտիկայի ձևավորման ընթացքը բավական երկարատև և հակասական էր: Ըստ դեպքերի ժամանակագրության և հռչակված նպատակի, հետազոտողների մի խումբ⁵⁷ առաջարկում է առանձնացնել երեք փուլ .

1. Ազգերի Լիգայի տարածքային կառավարման նախաձեռնությունները և ավելի ուշ ձևավորված մանդատային համակարգը,
2. Սառը պատերազմի շրջանում իրականացվող միջազգային կառավարման դեպքերը,
3. ՄԱԿ-ի հետսառը պատերազմյան նախաձեռնությունները:

Առաջին փուլում միջազգային կառավարումն ուղղված էր ինքնիշխանության պահանջների բավարարմանը: Չնայած վիլսոնյան հայտնի «14 կետերում» ինքնորոշման սկզբունքի հիշատակմանը՝ դեռևս տարանջատում կար «քաղաքակիրթ» և «ոչ քաղաքակիրթ» պետությունների միջև. վերջիններս կա՛մ շարունակում էին մնալ գաղութային կարգավիճակում, կա՛մ գտնվում էին Ազգերի Լիգայի մանդատային համակարգի ներքո: Երկրորդ փուլի նախաձեռնությունները մեծապես ուղղված էին ապագաղութացմանը՝ հիմքում ունենալով Վեստֆալյան ինքնիշխանության գաղափարը: Այս փուլում ՄԱԿ-ի ներգրավվածությունն առավելապես դրսևորվում էր աջակցության առաքելությունների տեսքով, որոնք կրում էին խորհրդատվական և համագործակցային բնույթ: Ի տարբերություն նախորդ երկու փուլերի՝ հետսառը պատերազմյան փուլում միջազգային կառավարումն առավելապես կենտրոնացած էր հակամարտությունների կարգավորման և հետկոնֆլիկտային պետության կառուցման ու կայացման հարցերի վրա: Նախկինում բացառապես ներպետական իրավասության շրջանակներում դիտարկվող մի շարք հարցեր ստացան միջազգային կարևորություն,

⁵⁷ Zaum D., The Sovereignty Paradox...; Carsten S., The Law and Practice...; De Brabandere E., Post-Conflict Administrations in International Law...

ինչի արդյունքում ժողովրդավարացման, մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության համակարգի խնդիրները սկսեցին դիտարկվել անվտանգության և կայուն զարգացման ապահովման ավանդակն նպատակների հետևում յն հարթության վրա:

Ազգերի լիզայի Մանդատային համակարգը: Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքներին դիմակայելու համար ձևավորված Ազգերի լիգան ճանապարհ հարթեց միջազգային կառավարման պրակտիկայի համար: Ազգերի լիգայի մանդատում, ի թիվս այլ հարցերի, կարևոր տեղ էր հատկացված միջպետական հակամարտությանը և, մասնավորապես, դրանց կարևոր դրդապատճառ հանդիսացող տարածքային պահանջների կարգավորման հարցերին: Պատերազմի ավարտն ազդարարող Վերսալյան հաշտության պայմանագիրը հնարավորություն տվեց վերածնել Եվրոպայի քարտեզը և պատերազմում պարտության կրած տերությունների կողմից գաղութացված տարածքների վերաբաշխում կատարել: Այդ շրջանում Ազգերի լիգան ստանձնեց մի քանի տարածքների կառավարման պատասխանատվություն, ինչն աննախդեպ իրադարձություն էր միջազգային հանրության համար:

Ազգերի լիգայի շրջանում արձանագրվեցին տարածքային կառավարման երեք դեպքեր, որոնք հակամարտությանը և ներքին կարգավորմանն ուղղված ջանքերի անմիջական հետևանք էին: Դրանք էին Գերմանիայի նախկին տարածքներ Սաարի մարզի կառավարման, Դանցիգ քաղաքի խնամակալության և նախկին կոլումբիական տարածք՝ Լետիցիայում ներգրավման դեպքերը: Միջազգային կառավարման պատմության մեջ վերոնշյալ երեք տարածքներից առավել տեսական և լայնամասշտաբ պրակտիկան եղել է Սաարի մարզի կառավարումը (1920-1935 թթ.)⁵⁸: Ազգերի լիգան ստանձնել էր տարածքի կառավարումը Վերսալյան համաձայնագրով, ինչը, որոշ վերապահումներով, կարելի է համարել *միջազգային կառավարման իրավական ձևակերպման առաջին փաստաթուղթը*:

1919թ. հունիսի 28-ին կնքված Վերսալյան պայմանագրի գլխավոր նպատակն էր ստեղծել անհրաժեշտ պայմաններ միջազգային խաղաղության և անվտանգության համար: Վերսալյան պայմանագրով

⁵⁸ Stahn C., The Law and Practice..., p. 163.

ամրագրվեց, որ Սաարի մարզը պետք է դրվի Ազգերի լիգայի կառավարման ներքո ⁵⁹ : Մարզը նախկինում պատկանում էր Գերմանիային, սակայն Ֆրանսիային իրավունք էր վերապահված շահագործելու Սաարի հանքերը: Դա այն գնի մի մասն էր, որը Գերմանիան ստիպված էր վճարել պատերազմի և դրա արդյունքում Ֆրանսիայի քարածխի հանքերի ոչնչացման համար: Պայմանագրով հաստատվեց, որ Գերմանիան Սաարի ավազանում տեղակայված ածխի հանքերը պետք է հանձնի Ֆրանսիայի վերահսկողությանը՝ Ֆրանսիայի հյուսիսում գտնվող ածխի հանքերի ոչնչացման և, ընդհանուր առմամբ, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում պատճառած վնասները փոխհատուցելու նպատակով ⁶⁰ : Կառավարման ժամկետը լրանալուց հետո մարզի բնակիչները պետք է որոշեին իրենց հետագա ճակատագիրը՝ միավորում Ֆրանսիայի հետ կամ վերամիավորում Գերմանիայի հետ:

Միջազգային վարչակազմը ստանձնել էր մարզի կառավարման լիարժեք իշխանությունը, ընդհուպ՝ պետական մարմինների նշանակումն ու ազատումը, վարչական և ներկայացուցչական մարմինների ստեղծումը ⁶¹ , ինչը նախկինում վերապահված էր Գերմանիային: Իշխանության իրականացման վրա մեծապես ազդում էր մարզի անորոշ ապագա կարգավիճակը, ինչը Լիգային գերծ էր պահում այնպիսի միջոցառումների իրականացումից, որոնք կարող էին ընկալվել որպես Ֆրանսիայի կամ Գերմանիայի տարածքային պահանջների բավարարման փորձ: Ուստի, պատահական չէ, որ Սթահնը Ազգերի լիգայի կառավարման մանդատը բնորոշում է որպես «հավասարակշռության և չեզոքացման առաքելություն» ⁶² . մի կողմից հանձնաժողովը նպատակ ուներ թուլացնել Գերմանիայի ուժեղ ազդեցությունը մարզի վրա, մյուս կողմից՝ ամրապնդել միջազգային կառավարումը: Վերջինի կարևոր նպատակն էր ստեղծել նպաստավոր միջավայր 1935թ. հանրաքվեի անցկացման համար, որի արդյունքում պետք է որոշվեր տարածքի ապագա կարգավիճակը: Այդ

⁵⁹ The Treaty of Versailles, Part 3, Section 4, http://foundingdocs.gov.au/resources/transcripts/cth10_doc_1919.pdf, 25.09.2017.

⁶⁰ Crawford J., The Cambridge Companion to International Law, US, Cambridge University Press, 2012, p. 106.

⁶¹ The Treaty of Versailles...

⁶² Stahn C., The Law and Practice..., էջ 170:

մասին է փաստում Կառավարման հանձնաժողովի (այսուհետ՝ Յանձնաժողով) տասներորդ գեկոյցը, որում Յանձնաժողովի առաջին նախագահ Ռոլթը ներկայացնում է միջազգային վարչակազմի հիմնական ռազմավարությունը: Նա նշում է, որ մարզի բնակիչները տասնհինգ տարի գտնվելու են բացառիկ կարգավիճակում, ինչը նպատակ ունի նրանց պատրաստել ինքնորոշման իրավունքի լիակատար և ազատ իրացմանը: Ռոլթը նշում էր, որ մարզի ժամանակավոր ինքնավարությունը լիարժեք չի լինի, եթե վարչական և քաղաքական կապերը, որոնցով տարածքը կապված է Գերմանական կայսրության հետ, աստիճանաբար չխզվեն, և եթե բնակչությունը շարունակի այս կամ այն չափով կախվածության մեջ լինել արտաքին իշխանություններից⁶³: Յանձնաժողովի նախագահի այս գեկոյցը հստակ ուղերձ էր Գերմանիայի և Ֆրանսիայի կառավարություններին՝ գերծմնալ միջամտությունից և սպասել 1935թ. նախատեսված հանրաքվեի արդյունքներին: Վերջինս վճռվեց հոգուտ Գերմանիայի: 1935թ. հունվարի 13-ին բնակչության շրջանում անցկացված հանրաքվեի արդյունքում (90.3% կողմ ձայն) Սաարի մարզը վերամիավորվեց Գերմանիայի հետ⁶⁴:

Սաարում հաստատված ռեժիմի հիմնական ձախողումների շարքում առավել հաճախ նշվում է տեղի բնակչությանը սահմանափակ քաղաքական մասնակցության իրավունքների և քաղաքացիական ազատությունների շնորհման խնդիրը⁶⁵: Տեղի դերակատարներն ունեին նվազագույն ազդեցություն քաղաքականության ձևավորման վրա, իսկ Յանձնաժողովն օժտված էր տարածքի կառավարման գրեթե անվերապահ իշխանությամբ: Այդ առումով առաջընթաց գրացվեց 1922թ.՝ գործող կուսակցությունների առաջնորդների նախաձեռնությամբ խորհրդատվական խորհրդի ստեղծմամբ: Այդուհանդերձ, վերջինիս վերապահված էր միայն չնչին խորհրդատվական դերակատարություն և սահմանափակ թվով հարցերում (ուժի մեջ մտած օրենքների

⁶³ Russell F., The International Government of the Saar, University of California Publications in International Relations, Vol. 1, no. 2, 2013, pp. 113-249.

⁶⁴ MacQueen N., Humanitarian Intervention and the United Nations, Edinburgh, Edinburgh University Press, 2011, p. 1.

⁶⁵ Stahn C., The Law and Practice..., էջ 167-169:

վերափոխում, ֆիսկալ համակարգում փոփոխություններ⁶⁶), ինչը հանգեցրեց բողոքի ակցիաների ընդդեմ Յանսենստոլովի ավտորիտար կառավարման:

Սաարի կառավարումը մեծամասամբ որակվում է որպես հաջողված նախաձեռնություն՝ նախևառաջ միջազգային կառավարման ինստիտուցիոնալացման տեսանկյունից՝ *առած ին պետություններին կողմից տարածքի կառավարման մինչպատերազմյան ավանդույթի փոխարինումը միջազգային կառավարման պրակտիկայով*: Մարգոլմ հաստատված միջազգային կառավարումը կարևոր պատմական իրադարձություն էր մասամբ նաև այն առումով, որ այն տարածքի իշխանությունը բաժանեց երեք մասի. տարածքի պաշտոնական կարգավիճակը, որը կապված էր գերմանիայի հետ, տնտեսական շահերը, որոնք մեծ մասամբ կցված էին Ֆրանսիային և Ազգերի լիգային վերապահված իշխանությունը⁶⁷: Դա զգալի հեռացում էր միջազգային իրավունքում ամրապնդված Վեստֆալյան՝ բացարձակ, ինքնիշխանության հայեցակարգից:

Վերսալյան պայմանագրի հիման վրա Ազգերի լիգան ժամանակավոր կառավարում իրականացրեց նաև Դանցիգ (Գդանսկ) քաղաք-պետությունում՝ վերջինիս անկախության հռչակմանը հաջորդած մի քանի տարում: Տարածքի միջազգայնացման գաղափարն առաջարկվեց Վերսալյան պայմանագրի մշակման ժամանակ՝ որպես մրցակից շահերի հաշտեցման մեխանիզմ՝ մի կողմից տարածքում մեծամասնություն կազմող գերմանացիների՝ պատմականորեն հիմնավորված ինքնավարության պահանջի, մյուս կողմից՝ նոր ստեղծված լեհական պետության՝ դեպի ծով ազատ և ապահով մոտք ունենալու ռազմավարական շահերի միջև⁶⁸: Մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը Դանցիգը գերմանական քաղաք էր, որտեղ գերակշռում էին էթնիկ գերմանացիները: Սակայն պատերազմի ավարտից անմիջապես հետո Լեհաստանը պահանջներ ներկայացրեց քաղաքի նկատմամբ, քանի որ վերջինս կենսական նշանակություն ուներ երկրի համար. դա Լեհաստանին

⁶⁶ Treaty of Versailles, Annex Saar Territory, Article 23 and 26, <https://www.loc.gov/law/help/us-treaties/bevans/m-ust000002-0043.pdf>.

⁶⁷ Chesterman S., You, the People..., էջ 19:

⁶⁸ Stahn C., The Law and Practice..., էջ 174:

հնարավորություն կտար ունենալ ազատ ու ապահովել ք դեպի ծով: Դանցիգի միջազգային կարգավիճակին մեծապես նպաստեց Վ. Վիլսոնի «Տասնչորս կետեր» հայտնի ելույթը, որում նաև կոչ էր արվում ստեղծել դեպի ծով ազատ ելք ունեցող անկախ և եհական պետություն ⁶⁹ : Պայմանագրի համաձայն, տարածքը մնում էր Գերմանիայից և Լեհաստանի նորանկախ երկրորդ Յանրապետությունից անջատ և դառնում էր կիսաանկախ պետություն՝ Ազգերի և իգայի վերահսկողության ներքո: Վերսալյան պայմանագրի 103-րդ հոդվածի համաձայն, տարածքի կառավարման համար պատասխանատու Բարձրագույն հանձնակատարի առաջնային պարտականությունն էր պայմանագրի կամ դրանում նշված կոնկրետ դրույթների կամ պայմանավորվածությունների վերաբերյալ Լեհաստանի և Դանցիգի միջև առաջացած ցանկացած հակասության կարգավորումը ⁷⁰:

Ի տարբերություն Սաարի մարզի՝ Դանցիգում պետական կառավարման հիմնական գործառնությունները կենտրոնացած էին տեղի իշխանությունների ձեռքում, իսկ Լիգան ստանձնել էր տարածքի ինքնավարության և Լեհաստանի շահերի միջև հավասարակշռության պահպանման առաքելությունը: Դանցիգը վայելում էր դե \$ակտո և դեյուրե ինքնավարություն իր ներքին հարցերում: Ազգերի և իգայի կողմից նշանակված Բարձրագույն հանձնակատարը չունեցողակի իշխանությունն քաղաքի գործադիր և օրենսդիր ինստիտուտների վրա: Գործադիր իշխանությունը սահմանադրությամբ վերապահված էր տասներկու անդամներից բաղկացած Սենատին, որը պատասխանատու էր օրենքների ընդունման, բյուջեի նախագծման, պետական ծառայողների նշանակման և հանրային անվտանգության ապահովման համար ⁷¹: Կառավարումն ավարտվեց 1920թ. նոյեմբերին, որից հետո Ազգերի և իգան պարտավորվում էր ապահովել քաղաք-պետության անկախ կարգավիճակը ⁷² : Սակայն այդ կարգավիճակը երկար չպահպանվեց, և 1939թ. նացիստական Գերմանիան նվաճեց

⁶⁹ Wilson, "Fourteen Points", https://avalon.law.yale.edu/20th_century/wilson14.asp, 15.08.2018.

⁷⁰ Treaty of Versailles, Article 103.

⁷¹ Stahn C., The Law and Practice..., pp. 176-177.

⁷² Willigen N., նշվ. աշխ.

քաղաքը⁷³: Դա Ազգերի լիգայի առավել լայնամասշտաբ ձախողման և
Եվրոպայում պատերազմի վերսկսման մի մասն էր:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Ազգերի
լիգան ստանձնեց նաև մի քանի այլ տարածքների միջազգային
կառավարումը, որոնցից նշանակալի էր Լետիցիայի դեպքը (1933-1934
թթ.): Մի շարք հետազոտողներ Պերուի և Կոլումբիայի միջև
հակամարտության պատճառ դարձած այդ տարածքը բնորոշում են
որպես Ազգերի լիգայի կառավարման առավել հաջող դեպք⁷⁴: 1932թ.
Կոլումբիական քաղաք Լետիցիայի՝ պերուական ուժերի գրավումից
հետո, Ազգերի լիգան վճռեց, որ Պերուն տարածքի կառավարումը
պետք է հանձնի Ազգերի լիգայի հանձնաժողովին մեկ տարի
ժամկետով: Մեկ տարի անց Ազգերի լիգան տարածքը խաղաղ
ճանապարհով վերախնդրեց Կոլումբիայի կազմ⁷⁵: Թերևս հաշվի
առնելով այն հանգամանքը, որ Լետիցիայի բնակչությունը այդ մեկ
տարվա ընթացքում գրեթե քառապատկվեց, կարելի է ենթադրել, որ
Ազգերի լիգայի կառավարման այդ շրջանն իսկապես հաջող ընթացք
ունեցավ:

Առաջինից երկրորդ համաշխարհային պատերազմների միջև
ընկած ժամանակահատվածում միջազգային կառավարման գաղափարի
ինստիտուցիոնալ նախատիպ էր *Ազգերի լիգայի մանդատային
համակարգը*, որը զգալիորեն տարբերվում էր Ազգերի լիգայի՝
տարածքի ուղղակի կառավարման, առանձին
նախաձեռնություններից:

Պատերազմի արդյունքում մի շարք նախկին գաղութներ այլևս
ինքնիշխան պետությունների վերահսկողության տակ չէին, և
Ազգերի լիգան վճռեց, որ նորանկախ տարածքները որոշ ժամանակի
վիճակի չեն լինի ինքնուրույն դիմակայել նոր կարգավիճակով
պայմանավորված խնդիրներին ու մարտահրավերներին⁷⁶: Դրանք մեծ
մասամբ Առաջին համաշխարհային պատերազմում պարտության կրած
երկու գերտերությունների՝ Գերմանիայի և Օսմանյան

⁷³ Wilde R., From Danzig to East Timor and Beyond: the Role of International Territorial Administration, American Journal of International Law, vol. 95, no. 3, 2001, pp. 583-606.

⁷⁴ De Brabandere E., Post-Conflict Administrations in International Law...; Stahn C., The Law and Practice...

⁷⁵ Stahn C., The Law and Practice..., p. 235.

⁷⁶ Matz N., Civilization and the Mandate System under the League of Nations as Origin of Trusteeship, Max Planck UNYB, vol. 9, 2005, pp. 54-55, http://www.mpil.de/files/pdf2/mpunyb_matz_9_47_95.pdf.

կայ սրու թյան, նախկին գաղութներ էին: Լիգայի Կանոնադրության 22-րդ հոդվածով սահմանվում էր կառավարման անուղղակի ձև. մանդատային տարածքներն անցնում էին առանձին պետությունների կառավարման ներքո, որոնք գործում էին Լիգայի անունից: Վերջինս ձևավորել էր Մշտական մանդատային հանձնաժողով, որին կառավարումը ստանձնած երկրները պետք է տարեկան զեկույց ներկայացնեին մանդատային տարածքների առաջընթացի և գրանցած հաջողությունների մասին⁷⁷:

Մանդատային համակարգի դեպքում, ի տարբերություն միջազգային կառավարման առանձին նախաձեռնությունների, Ազգերի Լիգայի դերակատարությունը սահմանափակված էր վերահսկողական գործառնության իրականացմամբ այն պետությունների նկատմամբ, որոնք ստանձնել էին ուղղակի կառավարում: Ազգերի Լիգայի Կանոնադրության 22-րդ հոդվածի մշակման նախապատմությունը ցույց է տալիս, որ Դաշինքի երկրների միջև կային որոշ տարակարծություններ մանդատային կառավարման ձևի վերաբերյալ: Վ. Վիլսոնի պատրաստած Ազգերի Լիգայի Կանոնադրության նախնական տարբերակներից մեկում նախատեսվում էր Ազգերի Լիգայի կողմից ուղղակի միջազգային կառավարման հնարավորություն: 1919թ. հունվարի 10-ի «Փարիզի առաջին նախագիծը» Ազգերի Լիգային շնորհում էր Լիարժեք վերահսկողական իշխանություն և նախատեսում էր տարածքների կառավարումը հանձնել կամ որևէ առանձին պետության, կամ անմիջապես Ազգերի Լիգային: Վերջին տարբերակի ակտիվ ջատագովն էր միայն Գերմանիան, որը հույս ուներ «Ազգերի Լիգայի ձեռքով» ստանձնել մանդատային Լիգորություններ: Այդուհանդերձ, երկար բանակցություններից հետո նախապատվություն տրվեց անուղղակի կառավարման ձևին⁷⁸: Առանձնացվում է երեք հիմնական գործոն, որոնք նպաստեցին Փարիզի կոնֆերանսի ժամանակ ուղղակի միջազգային կառավարման մերժմանը: Դրանք են

• Դաշինքի երկրները ցանկանում էին պահպանել անխոչընդոտ վերահսկողություն այն տարածքների նկատմամբ, որոնք

⁷⁷ The Covenant of the League of Nations, Article 22, <https://history.state.gov/historicaldocuments/frus1919Parisv13/ch10subch1>, 12.12.2017.

⁷⁸ Stahn C., The Law and Practice..., էջ 76-78:

օկուպացրել էին կամ հանձնվել էին իրենց հովանու ներքո: Դա ավելի ուշ հաստատեց Ֆ. Սայրեն՝ Խնամակալության խորհրդի առաջին նախագահը, ով նշում էր, որ միջազգային կառավարման ուղղակի ձևի մերժումը ոչ այնքան դրա հաստատման անհնարինության, որքան պետությանների՝ միջազգային մարմիններին վերահսկողության իրական իշխանության լծակների տրամադրման դժկամության արդյունք է:

- Կառավարման տարբեր մոդելների ընտրությունը մի կողմից մանդատային տարածքների, մյուս կողմից՝ Սաարի մարզի և Դանցիզի դեպքում, պայմանավորված էր կառավարման մասշտաբների տարբերությամբ: Մանդատային տարածքների կառավարումը Ազգերի Լիգային հանձնելը կնշանակեր միջազգային վերահսկողության հանձնել այնպիսի ինքնիշխան պետություններ, ինչպիսիք են Սիրիան կամ Իրաքը, ինչը կարող էր գերազանցել Ազգերի Լիգայի կարողությունները:

- Այն ժամանակ, երբ Վերսալում որոշումներն էին կայացվում, Ազգերի Լիգան չէր կարող հղում անել Դանցիզի, Սաարի, Լետիցիայի, Մեմելի դեպքերի համար արձանագրված վարչական փաստաթղթերին: Այդ դեպքերից հետո միայն ուղղակի միջազգային կառավարման գաղափարը ստացավ լայն ճանաչում միջազգային իրավական համակարգում:

Չնայած ապագաղութացումն ուղղակիորեն չի նշվում, այդուհանդերձ Կանոնադրության 22-րդ հոդվածում ամփոփված ընդհանուր գաղափարը կարելի է դիտարկել որպես գաղութային համակարգի տապալմանն ուղղված առաջին դրսևորում: Ազգերի Լիգան որոշում էր մանդատը ստանձնած երկրի կողմից մանդատային տարածքի նկատմամբ վերահսկողության մակարդակը, ինչի արդյունքում ձևավորվել էր մանդատային տարածքների երեք խումբ.

- Առաջին խմբի մեջ էին նախկինում Օսմանյան կայսրության վերահսկողության տակ գտնվող տարածքները (Իրաք, Սիրիա, Լիբանան, Պաղեստին), որոնք հասել էին զարգացածության մի մակարդակի, որում դրանց գոյությունն անկախ պետության

կարգավիճակով կարող էր ճանաչվել միայն տարածքի կառավարման մանդատը ստանձնած երկրի կողմից խորհրդատվության և աջակցության տրամադրման պայմանով այնքան ժամանակ, քանի դեռ այդ տարածքներն ի վիճակի չէին լինի ստանձնել լիարժեք ինքնակառավարում: Կառավարման մանդատը ստանձնող պետության ընտրության հարցում պետք էր պարտադիր կերպով հաշվի առնել այդ համայնքների ցանկությունը: Այս խմբի բոլոր երկրները մինչև 1949թ. ձեռք բերեցին լիակատար անկախություն:

- Երկրորդ դասի մանդատային տարածքները նախկինում Գերմանիայի վերահսկողության տակ գտնվող Արևմտյան և Կենտրոնական Աֆրիկայի երկրներն էին, որոնք պահանջում էին վերահսկողության ավելի բարձր մակարդակ:

- Երրորդ դասի տարածքներն ունեին զարգացածության առավել ցածր մակարդակ: Դրանց թվում էին Յարավարևմտյան Աֆրիկայի երկրներ, որոնք ևս Գերմանական կայսրության գաղութներ էին:⁷⁹

Ոչ առանձին մանդատային համաձայնագրերը, ոչ Լիգայի Կանոնադրության 22-րդ հոդվածը չէին պարունակում հստակ դրույթ մանդատի կասեցման վերաբերյալ, թեև 22-րդ հոդվածում նշվում էր, որ «լիազորությունների, վերահսկողության կամ կառավարման աստիճանը, եթե նախքան այդ համաձայնեցված չէ Ազգերի Լիգայի անդամների կողմից, ապա յուրաքանչյուր առանձին դեպքում հստակ սահմանում է Ազգերի Լիգան»⁸⁰: Առաջին դասի մանդատային տարածքները հռչակեցին անկախություն 1946թ.՝ նախքան Ազգերի Լիգայի կազմալուծումը: Դրանցից միայն Իրաքի կառավարման մանդատն ավարտվեց նոր պետության ստեղծման վերաբերյալ համաձայնագրի ստորագրմամբ՝ մանդատը ստանձնած Բրիտանիայի և Ազգերի Լիգայի խորհրդի միջև, մնացած երեք դեպքերի ավարտն ազդարարվեց առանց Ազգերի Լիգայի խորհրդի համաձայնության: Միաժամանակ, հարկ է նշել, որ Ազգերի Լիգայի խորհրդի համաձայնության ձեռքբերումը մանդատի կասեցման պարտադիր պայման չէր: Վերջինս կապված էր մանդատի հիմնական նպատակի իրագործման և արդյունավետ ինքնակառավարման մակարդակի հետ:

⁷⁹ The Covenant of the League of Nations...

⁸⁰ Նույն տեղում:

Խորհրդի համաձայնության բացակայության դեպքում առանձին պետությունների կողմից ճանաչումը և Գլխավոր Ասամբլեայի համապատասխան գործողությունները իրավական տեսանկյունից համարվում էին բավարար մանդատը դադարեցնելու համար⁸¹ : Յատկանշական է, որ 1919թ. Ազգերի Լիգայում քննարկման է դրվել նաև Յայաստանի մանդատը ԱՄՆ-ին հանձնելու հարցը: Սակայն Յայաստանում խորհրդային կարգերի հաստատման, ինչպես նաև հարցի վերաբերյալ ԱՄՆ Կոնգրեսի բացասական դիրքորոշման արդյունքում Վիլսոնը հրաժարվեց ստանձնել մանդատը⁸²:

Կարելի է արձանագրել, որ այսօրվա առանձնահատուկ կարևոր էր միջազգային կառավարման ինստիտուցիոնալացման տեսանկյունից՝ առանձին պետությունների կողմից տարածքի կառավարման մինչպատերազմյան ավանդույթը փոխարինելով միջազգային կառավարման պրակտիկայով: Ինչպես Ազգերի Լիգայի առանձին նախաձեռնությունները, այնպես էլ Մանդատային համակարգը, Ազգերի Լիգայի դերակատարության ու գործառնությունների տեսանկյունից ունեցան առանձնահատուկ նշանակություն: Առաջինի դեպքում կառավարման, վերահսկողության և օրենքի պահպանման «դասական» գործառնությունները, երկրորդի դեպքում՝ ժողովուրդների ինքնակառավարման և զարգացման տարբեր փուլերի նկատմամբ վերահսկողության իրականացումը միջազգային կառավարման պրակտիկայի մեկնակետն էին:

Միջազգային կառավարման իրականացումը ստորաբաժնային շրջանում: Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում ՄԱԿ-ի առջև ծառայան ոչ միայն պարտված պետությունների կառավարման և վերակառուցման, այլև դրանց վերահսկողության ներքո գտնվող տարածքների ճակատագրի և, որպես Ազգերի Լիգայի իրավահաջորդ, Մանդատային համակարգի արդյունավետ հանգուցալուծման հարցերը: Առաջակվող լուծումն ունեցրեցին բաղադրիչ. 1) ՄԱԿ Կանոնադրության 11-րդ գլխում ամրագրված «Չինքնակառավարվող տարածքների մասին հռչակագիրը», որը

⁸¹ Crawford J., The Creation of States in International Law, US., Oxford University Press, 2010.

⁸² Գոյան Է., Անդրկովկասի հանրապետությունների՝ Ազգերի Լիգային անդամակցելու հարցը, Լրաբեր հասարակական գիտությունների, 3, 2011, էջ 55-64:

վերաբերում էր այն տարածքների կառավարմանը, որոնք դեռևս չուներին ինքնակառավարման բավարար մակարդակ, 2) ՄԱԿ Կանոնադրության 12-րդ և 13-րդ գլուխներում ամրագրված ինամակալության համակարգը, որի գործառույթներն իրականացնելու համար ձևավորվեց ինամակալության խորհուրդը: Ի տարբերություն վերոնշյալ ՅՈՋակագրի, որում վերջնականապես սահմանափակվում էր ինքնակառավարմամբ, ինամակալության համակարգին վերաբերող դրույթներում արձանագրվում էր նաև այդ տարածքների համար լիարժեք անկախություն:

Ինամակալության համակարգի հիմքերը դրվել էին դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում տարվող բանակցությունների ժամանակ: Միացյալ Նահանգները և Խորհրդային Միությունը կողմ էին նախկին եվրոպական կայսրությունների մասնատմանը և դեռևս 1942թ. նախածեռնել էին երկկողմ բանակցություններ ապագաղութացման հարցի վերաբերյալ: Գաղութային քաղաքականության վերահսկման միջազգային ֆորումի ստեղծման վերաբերյալ առաջին առաջարկը ներկայացրել էր ԱՄՆ Պետդեպարտամենտը: «Ազգերի անկախության մասին ՄԱԿ-ի հռչակագիրը» անունով հայտնի նախագծում առաջարկվում էր ինամակալության միջազգային համակարգի ստեղծում, որը կազմված կլինի ՄԱԿ-ի ներկայացուցիչներից, շահագրգիռ երկրներից և ինամարկյալ տարածքներից: Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլն ակնհայտորեն դեմ էր այդ գաղափարին՝ այն դիտելով որպես Բրիտանական կայսրությունը պառակտելու գործիք: Իրավիճակը փոխվեց 1945թ. փետրվարին անցկացված «Մեծ եռյակի կոնֆերանսի» ժամանակ, որտեղ Խորհրդային Միության, Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարները համաձայնության եկան ինամակալության համակարգի փոփոխված ձևաչափի վերաբերյալ⁸³, որի համաձայն ինամակալության պետք է հանձնվեին միայն այն տարածքները, որոնք պատկանում են հետևյալ երեք խմբերից որևէ մեկին.

⁸³ Stahn C., The Law and Practice..., էջ 92-93:

• Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ազգերի Լիգայի կողմից ձևավորված Մանդատային տարածքները,

• Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով «թշնամի պետությունների» կողմից բռնագրավված տարածքները,

• տարածքի կառավարման համար պատասխանատու երկրի կողմից ինամակալության խորհրդի վերահսկողության տակ ինքնակամ դրված տարածքները⁸⁴:

Նոր համակարգում տարբերակվում էին ինամարկյալ տարածքների երկու դաս՝ ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներ՝ ՄԱԿ Անվտանգության խորհրդի և ոչ հատուկ նշանակության տարածքներ ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի ներքո: Չնայած Ազգերի Լիգայի Մանդատային համակարգի հետ ունեցած տարբերություններին՝ երկուսն էլ հետապնդում էին միևնույն նպատակը, այն է՝ «տարբեր տարածքների ժողովուրդների բարեկեցության և զարգացման խթանումը» և «իրական առաջընթացը ինքնակառավարման կամ անկախության ուղղությամբ», թեև երկրորդ նպատակն ուղղակիորեն արձանագրված է միայն Ազգերի Լիգայի Կանոնադրության մեջ: Երկուսում էլ նշվում էր կառավարումը ստանձնած պետության միջազգային պատասխանատվության սկզբունքը՝ Ազգերի Լիգայի Կանոնադրության և ՄԱԿ Կանոնադրության «Կառավարման երաշխիքներ» բաժնում և առանձին համաձայնագրերում: Երկուսն էլ մերժում էին պատերազմում հաղթանակ տարած պետություններին պատկանող տարածքների բռնակցումը և նախատեսում միջազգային ներկայության ապահովում անկախացման գործընթացի ավելի վաղ փուլերում: Մասնավորապես, ինքնորոշման իրավունքը, ինչպես Արդարադատության միջազգային դատարանը բազմիցս վերահաստատել է, կիրառվել է մանդատային և ինամակալության համակարգի ներքո գտնվող տարածքների նկատմամբ՝ դառնալով ինքնորոշվող տարածքի առաջին հստակ կատեգորիա⁸⁵:

⁸⁴ UN Charter, chapter 12, International Trusteeship System, <http://www.un.org/en/decolonization/its.shtml>.

⁸⁵ UN SC Resolution 301 (1971) on Namibia, 20 October 1971, [https://undocs.org/S/RES/301\(1971\)](https://undocs.org/S/RES/301(1971)); UN SC Resolution 379 (1975) on Western Sahara, [https://undocs.org/S/RES/380\(1975\)](https://undocs.org/S/RES/380(1975)).

Խնամակալ ության խորհրդի վերահսկողության տակ էին տասնմեկ տարածքային միավորներ, որոնց մի մասը ձեռք բերեց լիակատար անկախություն և դարձավ ՄԱԿ-անդամ, իսկ մյուս մասը միավորվեց ինքնիշխան պետության հետ: Վերջին տարածքի՝ Պալաուի, անկախության հռչակմամբ Անվտանգության խորհուրդը 1994թ. եզրափակեց ՄԱԿ Խնամակալ ության համաձայնագիրը: Վերջին տարածքի ժամանակավոր կառավարումն իրականացնում էր Միացյալ Նահանգները: Պալաուն հռչակեց իր անկախությունը 1993 թվականի հանրաքվեով, իսկ 1994թ. դարձավ ՄԱԿ-ի 185-րդ անդամը⁸⁶:

Չնայած Խնամակալ ության միջազգային համակարգը կարելի է դիտարկել որպես 20-րդ դարի երկրորդ կեսում տարածքի միջազգայնացման երկրորդ ինստիտուցիոնալ մեխանիզմ, այդուհանդերձ միջազգային կառավարման ներկայումս կիրառվող մոդելի և սահմանման շրջանակներում տեղավորվում են ապագադու թացման համատեքստում ՄԱԿ-ի ավելի ուշ նախաձեռնությունները: Այդ շրջանում միջազգային հարաբերություններում գերիշխող էին չմիջամտության և պետության ինքնավարության սկզբունքները, իսկ պետությունների ու միջազգային կազմակերպությունների պրակտիկայի հիմքում Վեստֆալյան ինքնիշխանության գաղափարն էր, ինչն առավել ցայտուն արտահայտվեց «Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին» 1960թ. դեկտեմբերի 14-ի հռչակագրում (Գլխավոր Ասամբլեայի 1514 (1960) բանաձև)⁸⁷:

Չոմն առանձնացնում է սառը պատերազմյան շրջանում իրականացվող առաքելությունների մի քանի ընդհանրական հատկանիշներ: Առաջին, միջազգային կառավարումը մեծ մասամբ իրականացվում էր գաղութային կառավարումից՝ ինքնակառավարմանն անցումը դյուրացնելու համար: Երկրորդ, միջազգային կառավարման իրականացման համար պարտադիր պայման էր վերահսկողության տակ գտնվող տարածքի ժողովրդի կամ

⁸⁶ Stahn C., International Territorial Administration in the Former Yugoslavia: Origins, Developments and Challenges Ahead, Max-Planck-Institut für ausländisches öffentliches Recht und Völkerrecht, 2001, p. 118.

⁸⁷ Declaration on the Granting of Independence to Colonial Countries and Peoples, General Assembly Resolution 1514 (XV) of 14 December 1960, <http://www.un.org/en/decolonization/declaration.shtml>.

տարածքի կառավարման համար պատասխանատու պետության համաձայնության ձեռքբերումը: Երրորդ, առաքելության ունեննելն ավարտվում էին ընտրության ունեննելի կամ ժողովրդական հանրաքվեների անցկացմամբ, որոնք դիտվում էին որպես ժողովրդի ինքնորոշման կամարտահայտության⁸⁸:

Ընդհանուր առմամբ, ի տարբերություն հետաառըպատերազմյան փուլին բնորոշ չափազանց «հավակնոտ» մանդատների՝ ՄԱԿ-ի ներգրավվածությունը սառըպատերազմյան շրջանում առավելապես դրսևորվում էր աջակցության առաքելության ունեննելի տեսքով, որոնք կրում էին խորհրդատվական և համագործակցային բնույթ: Վերջիններս գլխավորապես ուղղված էին դյուրացնելու ապագադուրացման և նախկին կախյալ տարածքների ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման գործընթացը: Այդ նպատակով ՄԱԿ-ի առաջին նախաձեռնություններն իրականացվեցին Լիբիայում և Երիթրեայում: Երկուսն էլ նախկին իտալական գաղութներ էին, որոնց կարգավիճակը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շարունակում էր մնալ անորոշ: ՄԱԿ-ի դերակատարությունը Լիբիայի անկախության ձեռքբերման գործում սահմանափակ էր, սակայն կազմակերպությունը կարևոր նշանակություն ունեցավ նորանկախ պետության սահմանադրական համակարգի ձևավորման գործում: Երբ 1948թ. ՄԱԿ Գլխավոր Ասամբլեային հայց ներկայացվեց որոշելու տարածքի ապագա կարգավիճակը, Լիբիան շարունակում էր գտնվել անգլո-ֆրանսիական ռազմական վերահսկողության ներքո: Լիբիայի՝ անկախության հասնելու ճանապարհի վերաբերյալ կային որոշ տարակարծություններ. Յնդկաստանը և Խորհրդային Միությունն առաջարկում էին ՄԱԿ-ի ուղղակի կառավարում և Յատուկ ներկայացուցչի նշանակում, մի քանի պետություններ կողմ էին Միացյալ Թագավորություն-ֆրանսիա-իտալիա դաշինքի կողմից տարածքի ինամակալության ստանձնմանը: Արդյունքում հաստատվեց Դաշինքի երկրների և ՄԱԿ-ի համատեղ կառավարում: Գլխավոր ասամբլեայի 289 (1949) բանաձևով Լիբիայում նշանակվեց ՄԱԿ-ի հանձնակատար և ՄԱԿ-ի տասը անդամ երկրների ներկայացուցիչներից կազմված Խորհրդատվական խորհուրդ, որը

⁸⁸ Zaum D., The Sovereignty Paradox..., էջ 54-55:

պետք է աջակցեր սահմանադրության մշակման գործընթացին⁸⁹: 1951թ. դեկտեմբերի 24-ին Լիբիան դարձավ անկախ պետություն:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Երիթրեայի կարգավիճակը շանուկանում էր մնալ անորոշ: Գլխավոր ասամբլեան մերժեց Երիթրեայի անկախացման պահանջը և առաջ քաշեց դաշնային մոդելի տարբերակը՝ 390 (1950) բանաձևի հիման վրա տարածքն ինտեգրելով Եթովպիայի կազմ: Ուստի, ի տարբերություն Լիբիայի, Գլխավոր ասամբլեան անուղղակիորեն սահմանում էր տարածքի ապագա կարգավիճակը: Որոշումն ընդունվեց առանց համաժողովրդական հանրաքվեի, քանզի նշվում էր, որ Երիթրեան դեռևս չի հասել զարգացման այն մակարդակի, որպեսզի որոշի իր ապագա կարգավիճակը⁹⁰: Չարկ է նշել, որ Գլխավոր ասամբլեայի 390 (1950) բանաձևն աննախադեպ էր նախկին գաղութային տարածքների ներքին գործերին միջամտության առավել «հավակնոտ» մանդատի տեսանկյունից: Բանաձևում ոչ միայն նշվում էր, որ Երիթրեան պետք է դառնա ինքնավար միավոր Եթովպիայի կազմում, որը ներպետական հարցերում վայելելու է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորություններ, այլ և սահմանվում էին արդարադատությանը վերաբերող հստակ դրույթներ, նոր սահմանադրության մեջ նախատեսվող մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ցանկը, երկու տարածքների միջև մաքսային միության ձևավորման անհրաժեշտությունը և այլն: Արդյունքում ինքնորոշման իրավունքի սկզբունքի և ժողովրդի ազատ կամարտահայտության անտեսումը հանգեցրեց զանգվածային ապստամբությունների ընդդեմ Եթովպիայի, որի վերջնարդյունքը եղավ 1962թ. դաշնության կազմալուծումը⁹¹:

Լիբիայում և Երիթրեայում իրականացրած առաքելություններից հետո կառավարման աջակցության ոլորտում

⁸⁹ General Assembly Resolution 289 (1949) on the question of the disposal of the former Italian Colonies, <https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/051/08/IMG/NR005108.pdf?OpenElement>, 15.01.2019.

⁹⁰ Բրիտանական հանձնախումբը նշում էր, որ ավելի զարգացած հասարակություններում այդ գործընթացը կունդեկցվեր ժողովրդավարական պետությանը հատուկ ընթացակազմով, սակայն Երիթրեան չի հասել զարգացման այդ փուլին, UN Doc. A/AC.38/SR.55.

⁹¹ Stahn C., The Law and Practice..., էջ 213-219:

ՄԱԿ-ի ակտիվությունն աստիճանաբար նվազեց: Գերակշռող էին բացառապես ռազմական մանդատով խաղաղապահ գործողությունները՝ պայմանավորված սառը պատերազմի շրջանում առկա լարվածությամբ և ինքնիշխանության պետականակենտրոն մոտեցմամբ: Միջազգային կառավարման ոլորտում ՄԱԿ-ի առաքելությունները նոր թափստացան մոտերկու տասնամյակ անց: Այդ փուլում հարկ է առանձնացնել Նամիբիայում ձևավորված ՄԱԿ-ի անցումային աջակցության խումբը (UNTAG) և Արևմտյան Սահարայում հանրաքվե անցկացնելու նպատակով ձևավորված ՄԱԿ-ի առաքելությունը (MINURSO):

Առաջինը ստեղծվել էր Նամիբիայի լիարժեք ապագաղութացումն ապահովելու համար՝ Յարավաֆրիկյան կառավարությունից Նամիբիայի ժողովրդին իշխանության խաղաղ փոխանցման ճանապարհով: Թեև ՄԱԿ-ն օժտված էր սահմանափակ իշխանությամբ, այդուհանդերձ դա «նոր սերնդի» խաղաղապահ առաքելության համար բացառիկ երևույթ էր՝ հաշվի առնելով ՄԱԿ-ի լիազորությունների ընդլայնումը ռազմական և անվտանգության ավանդական գործառնություններից մինչև ընտրությունների անցկացում, զարգացման ռազմավարության մշակում, մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ հարցեր և այլն: Ուստի, հենց այս փուլում էր, որ արձանագրվեց զգալի տեղաշարժ միջազգային կառավարման ռազմական և քաղաքացիական բաղադրիչների հարաբերակցության մեջ՝ երկրորդի զգալի ամրապնդմամբ: UNTAG-ը հաստատվել էր Անվտանգության խորհրդի 632 (1989) բանաձևով, որը երաշխավորում էր «այնպիսի պայմանների ստեղծում, որոնք թույլ կտան Նամիբիայի ժողովրդին ազատորեն մասնակցել ընտրական գործընթացին՝ ՄԱԿ-ի վերահսկողության ներքո»⁹²: Չնայած դրան՝ ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Մարտի Ահտիսաարին, օժտված էր սահմանափակ լիազորություններով, իսկ ընտրությունների կազմակերպումն ու իրականացումը մեծամասամբ վերապահված էին Յարավաֆրիկյան Յանրապետության Յատուկ ներկայացուցչին, ով, իր հերթին, հաշվետու էր ՄԱԿ-ի ներկայացուցչին: Ի տարբերություն նախորդ փուլերում կիրառվող

⁹² UN SC Resolution 632 (1989), 16 February 1989, <https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/557/69/IMG/NR055769.pdf>, 01.06.2019.

խաղաղապահ առաքելությունների ավանդական գործունեության շրջանակի՝ ՄԱԿ-ն ունեցավ զգալի քաղաքական ներգրավվածություն, մասնավորապես՝ ժողովրդավարական ընտրություններին ընդառաջ խաղաղ և չեզոք միջավայրի ձևավորման գործում: Ընտրությունների հաջող անցկացման անմիջապես հաջորդեց անկախ Նամիբիայի համար Սահմանադրության մշակման գործընթացը, որում ևս ՄԱԿ-ի առաքելությունն ունեցավ զգալի դերակատարություն⁹³:

Արևմտյան Սահարայում հանրաքվե անցկացնելու նպատակով ձևավորված ՄԱԿ-ի առաքելությունը (MINURSO) հաստատվեց երկու տարի անց: Առաքելության նպատակն էր վերջ դնել Նախկին իսպանական գաղութի կարգավիճակի շուրջ Մարոկկոյի, Մալրիտանիայի և Արևմտյան Սահարայի ազատագրման ազգային ճակատի (POLISARIO) միջև պատմական թշնամանքին: ՄԱԿ-ի առաքելության համար հիմք հանդիսացավ POLISARIO-ի և Մարոկկոյի միջև ձեռք բերված համաձայնությունը՝ «Կարգավորման ծրագիրը», ժողովրդական հանրաքվեի անցկացման վերաբերյալ, որի արդյունքը պետք է լիներ կա՛մ ինտեգրում Մարոկկոյի կազմում, կա՛մ լիարժեք անկախություն: Առաքելությունը խորհրդանշական էր նրանով, որ դրա հաջող ընթացքը պետք է ազդարարեր ապագաղութացման գործընթացի ավարտը, քանզի դա ՄԱԿ-ի հովանու ներքո գտնվող չապագաղութացված վերջին խոշոր տարածքն էր: Չնայած հանրաքվեն Նախատեսված էր անցկացնել 1992թ., սակայն այն այդպես էլ տեղի չունեցավ⁹⁴: 1991թ. առայսօր MINURSO-ի մանդատը երկարացվել է քառասունմեկ անգամ, իսկ տարածքի կարգավիճակը շարունակում է մնալ վիճելի: Կարգավորման ծրագրով երկու կողմերի ստանձնած պարտավորությունների պարբերաբար ձախողման պատճառով ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի՝ Անվտանգության խորհրդին 2002թ. ներկայացրած չորս ելքերից մեկն էր «դադարեցնել MINURSO-ի առաքելությունը՝ այդպիսով ճանաչելով և ընդունելով, որ ավելի քան տասնմեկ տարի անց և գրեթե կես միլիարդ գումար ծախսելուց հետո ՄԱԿ-ը մտադիր չէ լուծել Արևմտյան Սահարայի խնդիրը՝ առանց պահանջելու, որ

⁹³ Stahn C., The Law and Practice..., էջ 220-225:

⁹⁴ Chesterman S., You, The People..., էջ 68-70:

հակամարտության կողմերն անեն մի բան, որը չեն ցանկանա ինքնակամ անել»⁹⁵:

ՄԱԿ-ի հետաառըպատերազմյան նախածեռնությունները: Սառը պատերազմի ավարտից հետո ՄԱԿ Անվտանգության խորհուրդը «միջազգային խաղաղության և անվտանգության սպառնալիքները» սկսեց ընկալել ավելի լայն շրջանակներում: Արդյունքում, նախկինում բացառապես պետությունների ներքին իրավասության շրջանակներում գտնվող մի շարք խնդիրներ սկսեցին ստանալ միջազգային կարևորություն՝ ճանապարհ հարթելով ավելի լայնամասշտաբ ու բազմակողմ միջազգային ներգրավվածության համար: Դրատեսական հիմքերը դրվեց ՄԱԿ Գլխավոր քարտուղար Բուտրոս Դալիի ներկայացրած «խաղաղության օրակարգ» գեկոլյցով, որը զարգացրեց հետկոնֆլիկտային տևական խաղաղության հաստատման գաղափարը, ինչը հետագայում ամրապնդվեց «Ժողովրդավարացման օրակարգ» գեկոլյցում:

Հետաառըպատերազմյան փուլում զգալիորեն ընդլայնվեցին օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները՝ ներառելով գործող օրենսդրության վերանայման և փոփոխման, դատական համակարգի գործունեության վերահսկման, պետական պաշտոնյաների նշանակման կամ ազատման իրավասությունները: Կառավարման ձևաչափի փոփոխությունների հիմքում ընկած էր այն համոզմունքը, որ ազատական-ժողովրդավարական կառավարման մեխանիզմների արմատավորումն անցումային շրջանում գտնվող տարածքներում կայուն խաղաղության հաստատման լավագույն միջոցն է: Պատերազմի բացակայությունը կամ զինված հակամարտության պայմանական դադարը դեռևս խաղաղության ու կայունության երաշխիք չէ: Ակնհայտ դարձավ, որ ապակայունացման հավանականության նվազեցման գործում կարևոր են ոչ միայն կարճաժամկետ ձեռքբերումները (տարածքից ռազմական ուժերի դուրսբերում, ժամանակավոր հրադադարի հաստատում և այլն), այլև ավելի խորքային խնդիրներին արձագանքումը (կարգավիճակի,

⁹⁵ Report of the Secretary-General on the situation concerning Western Sahara of 19 February 2002, UN Doc. S/2002/179,

արդյունավետ կառավարման հետ կապված խնդիրներ և այլն)⁹⁶ :
Յետաանը պատերազմյան փուլը վճռորոշ էր նաև միջազգային
կառավարման իրավական հիմքերի սահմանման տեսանկյունից: Եթե
նախքան այդ կառավարումն իրականացվում էր առանց իրավական
հիմքերի, ուներ մեծամասամբ իրավիճակային (ad hoc) բնույթ և
կառավարվող տարածքի կամ մետրոպոլիայի համաձայնության
ձեռքբերումը պարտադիր պայման չէր, ապա այդ փուլում
ձևավորվեցին հստակ իրավական հիմքեր, իսկ կողմերի
համաձայնության ձեռքբերումը դարձավ հրամայական՝
արդյունավետ կառավարման տեսանկյունից:

Ձգալ իորեն մեծացավ նաև Սառը պատերազմի ընթացքում փակուղի
մտած ՄԱԿ Անվտանգության խորհրդի դերակատարությունը:
Անվտանգության խորհրդի ներսում համագործակցության բարձր
մակարդակը դրսևորվեց 1990թ. Իրաքի՝ Քուվեյթ ներխուժման դեպքի
առնչությամբ: Դա, իր հերթին, համընկավ այնպիսի կարևոր
իրադարձությունների հետ, ինչպիսիք են Խորհրդային Միության
փլուզումը, Յարավսլավիայի կազմալուծումը և Բալկաններում
պատերազմի բռնկումը, Գերմանիայի վերամիավորումը և
Մասաթրիխտի դաշնագրի կնքումը: 1990-1991թթ. Անվտանգության
խորհուրդն ընդունել է տասներկու բանաձև Իրաքի ժգնածամի
վերաբերյալ, որոնցում ՄԱԿ Կանոնադրության խախտության
խախտման կամ ագրեսիայի գործողություններին վերաբերող 7-րդ
գլխի հիման վրա լիազորվում էր համապատասխան պատժամիջոցների
կիրառում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ ուժի կիրառում:
Իրաքի ճգնածամի առավել նշանավոր ասպեկտներից էր նախագահ
Բուշի հանձնառությունը օգտագործել Անվտանգության
խորհուրդը՝ լեգիտիմացնելու Սադամ Յուսեյնի դեմ
գործողությունները և ստեղծելու միջազգային կոալիցիա: 1990թ.
սեպտեմբերի Կոնգրեսի համատեղ նստաշրջանի իրելույթում Բուշը
բարձր գնահատեց նոր աշխարհակարգի ստեղծումը և հայտարարեց, որ
իրենք ներկայումս գտնվում են այնպիսի ՄԱԿ-ի տեսադաշտում, որը

⁹⁶ Կիրակոսյան Մ., Միջազգային կառավարումը՝ որպես հակամարտության
կարագավորման հնարավորություն՝ և, թե՞ խոչընդոտ. Կոսովո և Լեռնային
Ղարաբաղ, «ԼՂ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի
մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի
ժողովածու, Երևան, ԱԵԳՄՄ, 2016, էջ 206-211:

գործում է իր հիմնադիրների տեսլականին համապատասխան ⁹⁷ : Միջազգային կառավարման տեսանկյունից հատկանշական էր 1483 (2003) բանաձևը՝ որով Անվտանգության խորհուրդը լիազորում էր Միացյալ Նահանգներին և Միացյալ Թագավորությանը «ապահովել իրաքի ժողովրդի բարեկեցությունը տարածքի ժամանակավոր կառավարման ճանապարհով...»⁹⁸:

Հետաառը պատերազմյան շրջանում ՄԱԿ-ի՝ ինքնիշխան պետության ուղղակի կառավարման, առաջին փորձը եղավ Կամբոջայում 1991թ., որի համար հիմք հանդիսացան Փարիզի հաշտության պայմանագրերը: Կառավարման մանդատը ներառում էր փախստականների ապահով վերադարձ, զինված ուժերի վերաբաշխում, մարդու իրավունքների պաշտպանության մոնիտորինգ, ընկտությունների կազմակերպում և առանցքային պետական ինստիտուտների նկատմամբ վերահսկողություն՝ ազատ և չեզոք ընտրական միջավայր ձևավորելու համար: Առաքելությունը պետք է իրականացներ վերահսկողություն պաշտպանության, արտաքին գործերի, ազգային անվտանգության և ֆինանսների նախարարությունների նկատմամբ ⁹⁹ : Ընտրությունների հաջող անցկացմանը հաջորդեց 1993թ. նոր սահմանադրության ընդունումը, ինչն առաքելության գլխավոր ձեռքբերումներից էր: Սակայն անկայուն քաղաքական մթնոլորտի և խմեր Ռուժի ¹⁰⁰ հետ համագործակցության բացակայության պատճառով անվտանգությանն առնչվող խնդիրները շարունակում էին մնալ օրակարգում ¹⁰¹:

Միջազգային կառավարման պատմության մեջ եզակի էր բազմաէթնիկ Բոսնիայի խորհրդանիշ հանդիսացող քաղաք՝ Մոսթարի, կառավարումը, որն իրականացնում էր Եվրոպական միությունը (ԵՄ): Թեև հետագայում ԵՄ-ի ներգրավման դեպքեր ևս եղել են, սակայն կամ ՄԱԿ-ի և/կամ այլ միջազգային կամ տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցային սկզբունքով, կամ

⁹⁷ Oudenaren J., Effectiveness and Ineffectiveness of the UN Security Council in the Last Twenty Years: A US Perspective, Documenti IAI 09/30, Instituto Affari Internazionali, November 2009, <https://www.iai.it/sites/default/files/iai0930.pdf>, 10.11.2018.

⁹⁸ UN SC Resolution 1483 (2003), 22 May, 2003, http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/1483%20%282003%29, 01.06.2019:

⁹⁹ Zaum D., The Sovereignty Paradox..., էջ 56:

¹⁰⁰ Կամբոջայում կոմունիստական հոսանքի հետևորդների ոչ պաշտոնական անվանումը, որոնց գաղափարախոսությունը հենվում է մարիզմի վրա:

¹⁰¹ Stahn C., International Territorial Administration in the Former Yugoslavia..., էջ 125-126:

մարդու իրավունքներին, ժողովրդավարությանն ու իրավունքի գերակայությանն առնչվող սահմանափակ մանդատով: Գտնվելով երկու խառը վարչատարածքային միավորներից մեկի սրտում՝ Մոսթարը մեծապես տուժել էր բոսնիական հակամարտության հետևանքով՝ վերածվելով մահմեդականների ու խորվաթների թիրախներից մեկը: 1992թ. խորվաթները հարավային քաղաքը հռչակեցին մայրաքաղաք, իսկ մահմեդականներին արտոգրեցին երկրի արևմտյան մասեր: 1993 թվականից դաժան պայքար սկսվեց ոչ միայն այդ տարածքին, այլև հարակից տարածքներին տիրելու համար: Բոսնիական պատերազմն ավարտվեց բոսնիացիների և խորվաթների միջև 1994թ. մարտին Վաշինգտոնյան համաձայնագրի ստորագրմամբ, որով նախատեսվում էր խորվաթամահմեդական դաշնության ստեղծում: Համաձայնագրի հիման վրա Մոսթարում հաստատվեց ԵՄ-ի ժամանակավոր կառավարում՝ քաղաքի վերականգնման, ինստիտուտների վերագործարկման, ինչպես նաև համայնքների վերափոխման գործընթացի հաջող իրականացումն ապահովելու համար: Հարկ է նշել, որ Վաշինգտոնյան համաձայնագրի առավել կարևոր կետերից մեկը միավորված բազմաէթնիկ Մոսթարի ստեղծումն էր¹⁰²: Այդ տարածքում հակամարտության կարգավորումն էապես կարևորվում էր այլ քաղաքներում էթնիկ խորականության և իշխանության նկատմամբ վստահության վերականգնման տեսանկյունից: Միջազգային ճգնաժամային խմբի ղեկույցում նույնիսկ նշվում էր, որ «Հարավսլավիայի ֆեդերատիվ միության ապագան մեծապես կախված է Մոսթարից: Եթե միջազգային հանրությանը կարողանա հաջողությամբ ավարտել Մոսթարի միավորման գործընթացը, ապա Միությանն իսկապես կգործարկվի»¹⁰³:

ՄԱԿ-ի լիարժեք՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ներգրավման առաջին դեպքը եղավ Արևելյան Սլովենիայում, որը հաճախ որակվում է որպես ՄԱԿ-ի առավել

¹⁰² Suri S., Two Cities with no Soul: Planning for Division and Reunification in Post-War Mostar, 48th The International Society of City and Regional Planners (ISOCARP) Congress, 2012.

¹⁰³ ICG Balkans Report no 90, Reunifying Mostar: Opportunities for Progress, Sarajevo/Washington/Brussels, 19 April, 2000, <https://www.refworld.org/pdfid/3de203df4.pdf>, 16.10.2018.

հաջողված նախաձեռնություն ¹⁰⁴: Տարածքը նախկինում պատկանում էր Կրայինայի Սերբական Հանրապետությանը, որը պատերազմի ժամանակ վերահսկում էր խորվաթիայի տարածքի մեկ երրորդը: Պատերազմի ավարտից հետո Երդու թի համաձայնագրով Արևելյան Սլովենիայում հաստատվեց ՄԱԿ-ի ժամանակավոր կառավարումը՝ (UNTAES) տարածքը խաղաղ ճանապարհով խորվաթիայի կազմ վերափոխելու գրման մանդատով ¹⁰⁵: Դեպքն առանձնահատուկ էր նաև միջազգային կառավարման իրավական բաղադրիչի տեսանկյունից: Կառավարումը հաստատվեց ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա, որը վերաբերում է խաղաղության խախտման, սպառնալիքի կամ ագրեսիայի գործողությունների առնչությամբ կիրառվող միջոցների (ավելի մանրամասն անդրադարձ է կատարվում ատենախոսության երկրորդ գլխում): Կառավարումը նախատեսված էր երկու տարի ժամկետով, որից հետո տարածքը լիարժեքորեն ինտեգրվեց խորվաթիայի կազմ ¹⁰⁶:

Հետառը պատերազման շրջանում եզակի էր Բոսնիայում հաստատված միջազգային կառավարումը, ինչն ընդգծվում է նույնիսկ Անվտանգության խորհրդի 1031(1995) բանաձևում. «Բոսնիայում ստեղծված իրավիճակի եզակի, բացառիկ և բարդ բնույթը պահանջում է առանձնահատուկ լուծում» ¹⁰⁷: Դեպքի առանձնահատուկության տեսանկյունից հարկ է նշել երեք բաղադրիչ. ուղղակի միանձնյա կառավարումից շեղում, Դեյթոնի խաղաղության համաձայնագրի ինստիտուցիոնալ շրջանակները և Մոսթար քաղաքի առանձնահատուկ կարգավիճակը: Միջազգային վերահսկողության հիմքերն ընկած էին Դեյթոնյան խաղաղության համաձայնագրի հիմքում, որը հետապնդում էր երկու, միմյանց հետ բարդ համադրելի՝ ժողովրդավարական պետության ստեղծման և երեք էթնիկ խմբերի՝ բոսնիացիների, սերբերի և խորվաթների, խաղաղ համագոյակցության ապահովման նպատակներ: Այդ նպատակները պետք է իրագործվեին երկու իրավասուբյեկտներից (Բոսնիա և

¹⁰⁴ Novokmet R., նշվ. աշխ.; Lowe V., Roberts A., Welsh J., Zaum D., The United Nations Security Council and War: The Evolution of Thought and Practice since 1945, US, Oxford University Press, 2010.

¹⁰⁵ Novokmet R., նշվ. աշխ.:

¹⁰⁶ De Wet E., նշվ. աշխ.:

¹⁰⁷ UN SC Resolution 1031 (1995) on Bosnia and Herzegovina and multinational Implementation Force (IFOR), [https://undocs.org/S/RES/1031\(1995\)](https://undocs.org/S/RES/1031(1995)), 01.06.2019:

Յերցեգովինայի Դաշնություն, Սերբական Հանրապետություն) բաղկացած դաշնային ժողովրդավարական հանրապետության ստեղծման ճանապարհով: 10-րդ հավելվածի համաձայն, «հաշվի առնելով համակարգային բարդություններն ու մարտահրավերները՝ կողմերը հայցում էին Բարձրագույն ներկայացուցչին շանակում՝ ՄԱԿ ԱԽ-ի բանաձևերին համապատասխան ընթացակարգով, ով կաջակցի կողմերին և կհամակարգի խաղաղության համաձայնագրի քաղաքացիական բաղադրիչի համար պատասխանատու կառույցներին¹⁰⁸: Համաձայնագրի իրավական շրջանակները բազմիցս արժանացել են քննադատությունների՝ պայմանավորված մի քանի հանգամանքով: Դրանցից առավել ակնառուն Համաձայնագրի՝ առանց վավերացման ուժի մեջ մտնելու հարցն է: Երկրորդ, Սահմանադրությանը նախատեսվում էր էթնիկ պատկանելիության մեխանիզմի վրա հիմնված ներկայացուցչականություն՝ նպաստելով հասարակության ներսում պառակտման խորացման, այլ ոչ թուլացմանը: Երրորդ, Բարձրագույն ներկայացուցչին վերապահված իրավասությունների լայն շրջանակը հակասում է ժողովրդավարական զարգացման սկզբունքներին¹⁰⁹: 2008 հունիսին Բոսնիան ստորագրեց ԵՄ-ի Կայունության և ասոցացման համաձայնագիրը, ինչը ԵՄ-ի ընդլայնման հարցերով հանձնակատարն արձանագրեց որպես «կարևոր իրադարձություն, որն ազդարարում է Բոսնիա-ԵՄ հարաբերությունների նոր փուլ և ԵՄ-ի լիարժեք անդամ դառնալու նախադրյալ է»¹¹⁰: 2008թ. փետրվարին Բոսնիայի համար առաջադրվեցին մի քանի նախապայմաններ, որոնք բավարարելու դեպքում միայն կփակվի Բարձրագույն ներկայացուցչի ինստիտուտը և հնարավոր կլինի հայտ ներկայացնել ԵՄ-ին անդամակցության համար: Նախապայմանների թվում էին Կայունության և ասոցացման համաձայնագրի ստորագրումը (ավարտվել է 2008թ. հունիսի 16-ին) և խաղաղության համաձայնագրի իրականացման համար պատասխանատու Ղեկավար խորհրդի դրական գնահատականը Բոսնիայում տիրող իրավիճակի վերաբերյալ¹¹¹:

¹⁰⁸ Constitution of Bosnia and Herzegovina, General Framework Agreement for Peace, Annex 4, preamble.

¹⁰⁹ Novokmet R., նշվ. աշխ.:

¹¹⁰ Barber T., Bosnia Signs EU Accord, Financial Times, 17 June 2008.

¹¹¹ 37th Report of the High Representative for Implementation of the Peace Agreement on Bosnia and Herzegovina to the Secretary-General of the United Nations, <http://www.ohr.int/?p=34494>, 16.05.2017.

Կարևոր չ գրված նախապայման է նաև առավել կարևոր՝ սահմանադրական բարեփոխումների իրականացումը, որն այսօր դարձել է Գլխավոր խոչընդոտ Դեյթոնից Բոյոսել անցում կատարելու համար:

Ավելի նշանակալից էին ՄԱԿ-ի առաքելության ներքին Կոսովոյում և Արևելյան Թիմորում, որտեղ տարածքի կառավարման համար պատասխանատու մարմինն՝ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչին վերապահված էին տարածքի լիարժեք կառավարման՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ներքին: Եթե Կոսովոյում տարածքի կարգավիճակն անորոշ էր, ապա Թիմորում միջազգային կառավարումը հաստատվեց անկախության հանրաքվեից հետո՝ նախկինում ինքնակառավարման փորձի իսպառ բացակայության պայմանավորված խնդիրներին ու մարտահրավերներին արձագանքելու համար: Քանզի այդ երկու դեպքերն աննախադեպ էին միջազգային կառավարման պատմության նոր փուլում՝ մասնավորապես կառավարման շրջանակների, մասշտաբների ու իրավական հիմքերի տեսանկյունից, դրանց ավելի մանրամասն անդրադարձ է կատարվում ատենախոսության երրորդ գլխում:

1.3. Հակամարտության ներքին կարգավորման գործընթացում միջազգային կառավարման կիրառման անհրաժեշտությունը

Հակամարտության ներքին կարգավորման ժամանակ միջազգային կառավարման գաղափարի զարգացման տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունեցան ՄԱԿ Գլխավոր քարտուղարի երկու զեկուլյացները՝ «խաղաղության օրակարգ»¹¹² և «Ժողովրդավարացման օրակարգ» խորագրերով ¹¹³ : Առաջինում խաղաղապահ գործունեությունը և դրա դրսևորման տարբեր ձևերը դիտարկվում էին որպես սուր հակամարտության ներքին կարգավորման գործիք: Ընդգծվում էր, որ պետությունների միջև պատերազմի կամ զինված

¹¹² An Agenda for Peace: Preventive Diplomacy and Related Matters, 18 Dec., 1992, <http://www.un.org/documents/ga/res/47/a47r120.htm>, 10.04.2018.

¹¹³ Boutros Gh., An Agenda for Democratization, New York, United Nations Department of Public Information, 1996.

հակամարտության ընդդեմի քաղաքացիական պայքարի շարունակումը դեռևս միջազգային խաղաղության և անվտանգության երաշխիք է, ուստի անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն խնդիրներին, որոնք կարող են դրանց բռնկման անմիջական պատճառ դառնալ: Արդյունքում, Անվտանգության խորհուրդը «միջազգային խաղաղությանն ու անվտանգությանն ուղղված վտանգները» սկսեց դիտարկել ավելի և և շրջանակներում, և նախկինում բացառապես պետության ընդդեմի ներպետական իրավասությանը վերագրվող մի շարք խնդիրներ սկսեցին աստիճանաբար ձեռք բերել միջազգային նշանակություն: «Ժողովրդավարացման օրակարգում» ընդգծվում էր, որ ժողովրդավարական ինստիտուտները և գործընթացները մրցակցային շահերը տեղափոխում են խոսույթի հարթություն և տրամադրում փոխզիջման հասնելու միջոցներ, որոնք պետք է հարգեն բանավեճի բոլոր կողմերը՝ այդպիսով նվազագույնի հասցնելով շահերի տարբերությունների կամ հակասությունների վերաճումը զինված բախումների կամ առճակատման: Չեկոսլովակիայում մատնանշվում էր նաև ՄԱԿ-ի աճող դերակատարությունը ժողովրդավարացման գործընթացներում, մասնավորապես՝ ընտրությունների և աջակցության և ժողովրդավարական ինստիտուտների կառուցման գործում:

Վերոնշյալ զեկոսլովակիայի քաղաքական ու աշխարհաքաղական նոր իրողությունները, ինչպես նաև միջազգային իրավունքում արձանագրված տեղաշարժերը պատճառ դարձան նրան, որ եթե նախքան 1990-ական թվականների երկրորդ կեսը հակամարտությունների տարածքներում միջազգային կազմակերպությունների գործողությունները կարելի է առավելապես որակել որպես աջակցության և խորհրդավական առաքելություններ, ապա դրանից հետո արձանագրվեց ՄԱԿ-ի որդեգրած չեզոքության սկզբունքի աստիճանական անկում և հակամարտությունների գոտիներում ավելի ակտիվ ներգրավվածություն՝ ընդհուպ ժողովրդավարական պետության կառուցման գործընթացին և այն ամասշտաբ աջակցություն: Դրան նպաստող առավել ցայտուն գործոններն էին մի քանի տարածքներում ցեղասպանության կանխման հնարավորության ձախողումը, ինքնորոշման

հակամարտության ու ներքին աճող թիվը, պետության ինքնիշխանության սկզբունքի վերափոխմաստավորումը, տնական խաղաղության հաստատման համար ժողովրդավարական կառավարման առաջնահերթության գիտակցումը և 1990-ականներին նոր աշխարհակարգի ձևավորման համար մղվող պայքարը:

1995թ. Բալկաններում (Սրբբրինիցա քաղաք) և 1994թ. Ռուանդայում իրագործված ցեղասպանության ներքին մասամբ պատճառ դարձան չմիջամտության սկզբունքի վերանայման և միջազգային կազմակերպության ու ներքին՝ հակամարտության տարածքներում ավելի ակտիվ և ավելի վաղ փուլերում ներգրավման համար: Ընդ որում, երկու դեպքում էլ հակամարտության նյա նքան հասունացած էր, որ առնվազն կարելի էր կանխատեսել ռազմական բախումների հավանականությունը: 1999թ. սեպտեմբերին ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի 54-րդ նստաշրջանին ՄԱԿ Գլխավոր քարտուղար Բոֆի Անանն անդրադարձավ ազգային անվտանգության և միջամտության հեռանկարներին՝ մատնանշելով վերոնշյալ տարածքներում Անվտանգության խորհրդի ձախողումը և կոչ անելով անդամ երկրներին ՄԱԿ Կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքների շրջանակում գտնել ընդհանուր հիմք՝ նման դեպքերին արձագանքելու համար: Ի պատասխան 1990-ականների կեսերին խաղաղապահ առաքելության ներքին իրականացման գործում ՄԱԿ-ի ձախողման դեպքերին՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը բարձր մակարդակի փորձագետների խմբին հանձնարարեց պատրաստել ՄԱԿ-ի համակարգային թերությունների վերաբերյալ զեկոլյց և ներկայացնել իրատեսակական առաջարկություններ իրավիճակի բարելավման ուղղությամբ: ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելության ներքին վերաբերյալ 2000թ. օգոստոսին հրապարակված զեկոլյցը հայտնի դարձավ «Բրահիմիի զեկոլյց» անվամբ՝ ի պատիվ հանձնախմբի նախագահ և ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ Լախար Բրահիմիի ¹¹⁴ : Չեկոլյցում ամփոփվում էր նախորդ առաքելության ներքին ց քաղած դասերը՝ խաղաղության հաստատումը (peacebuilding), վերահաստատումն (peacemaking) ու պահպանումը (peacekeeping) դիտարկելով որպես ՄԱԿ-ի խաղաղապահ

¹¹⁴ Durch W., Holt V., Earle C., Shanahan M., The Brahimi Report and the Furture of UN Peace Operations, The Henry L. Stimson Center, 2003.

առաքելություններին անկյունաքարեր: Չեկոլյցում նշվում էր, որ հակամարտություններում ՄԱԿ-ի ներգրավման ավանդական մոդելը՝ խաղաղապահ առաքելությունը, ռազմական գործողություններին պարզ մոդելից վերաճել է ռազմական և քաղաքական տարբեր տարրեր պարունակող համակարգային մոդելի: Հատկանշական է, որ Չեկոլյցի առանձին բաժնում անդրադարձ էր կատարվում նաև ժամանակավոր վարչական կառավարմանը¹¹⁵: Նշվում էր, որ Կոսովոյում և Արևելյան Թիմորում ՄԱԿ-ի առջև դրված խնդիրներն ու ստանձնած պարտավորություններն ունեն բացառիկ բնույթ: Ի տարբերություն նախորդ առաքելությունների՝ ՄԱԿ-ը երբևէ ուղղակիորեն չի ստանձնել, ի թիվս այլ խնդիրների, օրենսդրության մշակման և դրա կիրառման նկատմամբ վերահսկողության, արտաքին կապիտալի ներգրավման, գույքային վեճերի կարգավորման և ռազմական գործողություններին արդյունքում կրած վնասների փոխհատուցման, քաղաքացիական հասարակության ստեղծման և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի վերահսկողության գործառնությունները: Չեկոլյցում նաև առաջ էր քաջվում այն հարցադրումը, թե արդյոք ՄԱԿ-ը պետք է զբաղվի այդ հարցերով և, եթե այո՝ արդյոք դրանք պետք է դիտարկել որպես խաղաղապահ գործողության տարրեր: Նշվում էր, որ եթե ՄԱԿ Քարտուղարությունը համարում է, որ ապագայում այդպիսի ժամանակավոր վարչակազմերի ստեղծումը կդառնա ոչ թե բացառություն, այլ նմանօրինակ դեպքերին արձագանքելու կանոնավոր մեխանիզմ, ապա ՄԱԿ-ի կառուցվածքի շրջանակներում անհրաժեշտ է ստեղծել համապատասխան ենթակառուցվածք, որը կզբաղվի այդ հարցերով: Հատկապես ընդգծվում էր ժամանակավոր կողմնորոշման մշակման անհրաժեշտության մասին, որը կներառի ինչպես օրենսդրական, այնպես էլ դատավարական նորմեր և կլինի կիրառելի նախքան հակամարտության տարածքներում իրավունքի գերակայության հաստատումը:

2000թ. սեպտեմբերին Կանադայի կառավարությունը ևս արձագանքեց Գլխավոր քարտուղարի վերոնշյալ ելույթին՝

¹¹⁵ Comprehensive review of the question of peacekeeping operations in all their aspects, section “The challenge of transitional civil administration”, UN General Assembly fifty-fifth session, 21 August, 2000, <http://undocs.org/en/A/55/305>, 18.02.2018.

հայ տարարելով Միջամտության և պետական ինքնիշխանության հարցերով անկախ միջազգային հանձնաժողովի ստեղծման մասին: Հանձնաժողովի օրակարգային խնդիրների թվում էին մարդու իրավունքների պաշտպանության նպատակով իրականացվող միջամտության և ինքնիշխանության համադրության խնդիր լուծումը: Հանձնաժողովն առաջ քաշեց «պաշտպանելու պատասխանատվության» սկզբունքը, որը ենթադրում է միջազգային դերակատարների ներգրավվածությունն ներպետական հարցերում, այն դեպքերում «երբ բնակչությունը լուրջ վնասներ է կրում քապատերազմի, ապստամբության, ճնշումների կամ պետության ձախուղման հետևանքով և գործող իշխանությունը չի կարողանում կամ չի ցանկանում դադարեցնել կամ կանխել այդ իրավիճակը»¹¹⁶: 2005թ. ՄԱԿ համաշխարհային գազաթափոխության Գլխավոր ասամբլեայի եզրափակիչ փաստաթղթով¹¹⁷ պետությունների ղեկավարներն ընդունեցին «պաշտպանելու պատասխանատվության» սկզբունքը, որի հիմքում ընկած են.

1. պետությունների հիմնական պատասխանատվությունը՝ համապատասխան և անհրաժեշտ միջոցներով պաշտպանել սեփական բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ գտումներից և մարդկության դեմ այլ հանցագործություններից,

2. միջազգային հանրության պատասխանատվությունը՝ խրախուսել և աջակցել պետություններին՝ իրականացնելու այդ պատասխանատվությունը,

3. միջազգային հանրության պատասխանատվությունը՝ ՄԱԿ Կանոնադրության համաձայն, ձեռնարկել դիվանագիտական, մարդասիրական և այլ խաղաղ միջոցներ՝ բնակչությանը վերը նշված հանցանքներից պաշտպանելու համար այն դեպքում, երբ խաղաղ միջոցները բավարար չեն, իսկ պետությունն ակնհայտորեն ձախուղել է սեփական բնակչության պաշտպանությունը վերոհիշյալ չորս հանցագործություններից:

¹¹⁶ Report of the International Commission on Intervention and State Sovereignty, The Responsibility to Protect, International Development Research Centre, December 2001.

¹¹⁷ 2005 World Summit Outcome, Doc. A/RES/60/1, UN General Assembly, http://www.un.org/en/development/desa/population/migration/generalassembly/docs/globalcompact/A_RES_60_1.pdf, 16.05.2017.

2009 թվականին գլխավոր քարտուղար Պան Գի Մուենն իր՝ «Պաշտպանելու պատասխանատվության իրականացում» թեմայով զեկուլյցում¹¹⁸ պարզաբանեց 2005 թվականի համաձայնագրի բնույթը և առաջարկեց միջոցներ, որոնց հիման վրա ՄԱԿ-ը, առանձին պետությունները, տարածաշրջանային կազմակերպությունները պետք է իրականացնեն պաշտպանելու պատասխանատվության վերոհիշյալ երեք հիմնասյուները:

Պաշտպանելու պատասխանատվության սկզբունքը ժխտում է ինքնիշխանության՝ որպես բացարձակ հասկացության, գաղափարը և այն դիտարկում է որպես պետականության կարևոր պայման, որը պետք է վաստակել: Ինքնիշխանությունը ենթադրում է երկակի պատասխանատվություն. արտաքին՝ հարգել այլ պետությունների ինքնիշխանությունը, և ներքին՝ հարգել պետության տարածքում բոլոր մարդկանց արժանապատվությունը և հիմնական իրավունքները¹¹⁹: Այնտեղ, որտեղ քաղաքացիական պատերազմի, ապստամբության, ճնշման կամ պետության ձախողման հետևանքով բնակչությունը կրում է լուրջ վնաս և տվյալ պետությունը չի ցանկանում կամ ի գործ է դնում քաղաքացիական կանխարգելել այն, չմիջամտելու սկզբունքն իր տեղը զիջում է պաշտպանելու պատասխանատվությանը¹²⁰: Հատկանշական է, որ ինքնիշխանության այդ մոտեցումը նոր չէ: Դեռևս Յոհան Կոնստին Կոնստինի «Լևիատան» աշխատության մեջ նշում էր, որ «եթե պետությունն այլևս չի կարողանում արդյունավետ կերպով իրականացնել իրեն վերապահված գործառնականությունը, ապա այն այլևս չի որակվում որպես ինքնիշխան»¹²¹: Ներկայումս նույնիսկ գործածության մեջ է «վաստակած ինքնիշխանություն» (earned sovereignty) հասկացությունը, որն օգտագործվում է միջազգային վերահսկողության ներքո գտնվող այն տարածքային միավորի համար, որը պետք է համապատասխանի մի շարք չափանիշների՝ իր կարգավիճակը հաստատելու (ճանաչված պետություններ) կամ համապատասխան

¹¹⁸ Implementing the Responsibility to Protect, Report of The Secretary-General, UN General Assembly, 2009, pp. 8-9, <http://responsibilitytoprotect.org/implementing%20the%20rto.pdf>, 01.05.2017.

¹¹⁹ Մուրադյան Լ., Մարդասիրական միջամտության իրականացման իրավական հիմքերը և կիրառման խնդիրները, Հայկական քաղաքագիտական հանդես, 1, 9, 2018, էջ 89-110:

¹²⁰ Report of the International Commission...

¹²¹ Hobbes T., Leviathan, Cambridge, Cambridge University Press, 1991.

կարգավիճակ հայցելու (չճանաչված պետություններ) համար: Ինքնիշխանություն և միջազգային կառավարման հարաբերակցությանն ավելի մանրամասն անդրադարձ է կատարվում թեկնածուական ատենախոսություն երկրորդ գլխում:

1990 թվականից ի վեր քաղաքացիական պատերազմների գրեթե կեսը ծագել է ի պատասխան ավելի լայն ինքնավարության կամ պետականության ձգտող էթնիկ խմբերին¹²²: Ընդ որում, գրեթե յուրաքանչյուր երկրորդ ինքնորոշման հակամարտության դեպքում զինված բախումները վերսկսվում են կարգավորման բանակցությունների առաջին հինգ տարիների ընթացքում¹²³: Դա փաստում է, որ երբեմն հակամարտության կողմերի միջև ձեռք բերված խաղաղությունը միայն պայմանական է, և զինված բախումների վերսկսման կանխման նպատակով անհրաժեշտ է միջազգային համայնքի առավել ակտիվ ներգրավվածություն: Խնդիրն առավել ապես վերաբերում է այն ինքնորոշման հակամարտություններին, որոնցում ինքնորոշման հայտ ներկայացրած տարածքի կարգավիճակը շարունակում է դուրս մնալ միջազգային հանրության օրակարգային խնդիրների շարքից: Դրա առավել ցայտուն օրինակներից են Կոսովոյում «նախա օրինակներ, ապա՝ կարգավիճակ» ռազմավարության արդյունքում 2004թ. մարտին վերսկսված ռազմական բախումները, 2016թ. արցախ-ադրբեջանական քառօրյա կամ ապրիլյան պատերազմը: Խնդիրն էլ ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ թեև ինքնորոշման հակամարտությունները ծավալվում են կոնկրետ տարածքի սահմաններում, դրանք ուղղակիորեն կապված են տարածաշրջանային և աշխարհաքաղաքական զարգացումների հետ:

1990-ական թվականներին նոր աշխարհակարգի համար մղվող պայքարը՝ ուղղված ազդեցության գոտիների վերաբաժանմանը, ևս խթանեց միջազգային դերակատարների ավելի ակտիվ ներգրավվածությունը հակամարտությունների տարածքներում: Միաժամանակ, խնդիրը բարդացնում էր այն հանգամանքը, որ գործում

¹²² Toft M., Self-Determination, Secession, and Civil War, Terrorism and Political Violence, 24, 4, 2012, pp. 581-600.

¹²³ Biersteker T. J., Prospects for the UN Peacebuilding Commission, Disarmament Forum, no. 2, 2007, p. 37.

Ե հակադարձ կապ՝ հակամարտության ունենրի կարգավորման գործընթացների վրա Եական ազդեցություն ունի տարածաշրջանում աշխարհաքաղաքական մրցակցությունը: Եթե Բալկաններում այդ պայքարն ավարտվել է Միացյալ Նահանգների գրեթե անվերապահ հաղթանակով, ապա Հարավային Կովկասում Միացյալ Նահանգները և Ռուսաստանը շարունակում են պայքարը ¹²⁴: Պատահական չէ, որ Կոսովոյում միջազգային կառավարում հաստատվեց միայն այն բանից հետո, երբ ՆԱՏՕ-ի մարդասիրական միջամտությունից հետո Ռուսաստանը դադարեցրեց իր մասնակցությունը հակամարտության կարգավորմամբ զբաղվող Շփման խմբի աշխատանքներին: Ութեն հետագայում ևս Մոսկվան շարունակում էր վճռականորեն մերժել Կոսովոյի անկախության ճանաչումը, Ռուսաստանի բացակայությունը հանգեցրեց միակողմանի միջնորդության՝ ի դեմս Միացյալ Նահանգների, ինչն առանցքային նշանակություն ունեցավ Կոսովոյի հակամարտության կարգավորման համար ¹²⁵:

Չճանաչված, նորանկախ կամ դյուրաբեկ պետություններում պետության կառուցման գործընթացին ակտիվ աջակցությունը՝ միջազգային կառավարման ճանապարհով, պայմանավորված է նաև այդ տարածքներում ժողովրդավարական վարչակարգի հաստատման վերջնական պատակով: Քանզի հետկոնֆլիկտային հասարակությունները, որպես կանոն, չունեն համապատասխան պետական կառույցներ, գործարկվող ժողովրդավարական ընթացակարգեր, որոնք կերաշխավորեն քաղաքացիների մասնակցությունը քաղաքական կյանքին և պարունակում են նոր ռազմական բախումների վերսկսման վտանգ, արտաքին ժողովրդավարացումը դառնում է խաղաղության հաստատման գործընթացի մաս: Նույնիսկ ձևավորված են դրատեսակական հիմքերը՝ «ժողովրդավարական խաղաղության տեսությունը» ¹²⁶, որի համաձայն ժողովրդավարական արժեքներ դավանող հասարակություններում պատերազմների ու լայնամասշտաբ բռնությունների տեղի

¹²⁴ Torosyan T., The Return of Turkey, Russia in Global Affairs, vol. 3, 2009, pp. 120-129.
¹²⁵ Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2012, էջ 205-206:
¹²⁶ Danilovic V., Clare J., The Kantian Liberal Peace (Revisited), American Journal of Political Science, vol. 51, no. 2, 2007, pp. 397-414.

ուև նենալ ու հավանականությունն անհամեմատ ցածր է: Յատկանշական է, որ 1990թ. գոյություն ունեցող ժողովրդավարությունների երկու երրորդն առաջացել է արտաքին դերակատարների ռազմական և/կամ քաղաքացիական միջամտության արդյունքում¹²⁷: Գրիմը և Մերկելն առանձնացնում են «արտաքին ժողովրդավարացման» չորս ձև.

1) ժողովրդավարացման խթանում հետպատերազմյան օկուպացիայի երկարաժամանակյա ճանապարհով (Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պարտված երկրների տևական օկուպացման, մասնավորապես Գերմանիայի, ճապոնիայի և Ավստրիայի նկատմամբ արտաքին քաղաքական վերահսկողության իրականացման դեպքերը):

2) Ընտրված իշխանության վերականգնում ռազմական միջամտության ճանապարհով (Պանամա, Յայիթի):

3) միջամտությունն շարունակական կոտորածներին և քաղաքացիական պատերազմներին՝ զինված ուժերի կիրառմամբ (Կամբոջա, Արևելյան Թիմոր, Կոսովո և այլն):

4) ժողովրդավարության պարտադրում պատերազմի միջոցով (Աֆղանստան, Իրաք և այլն)¹²⁸:

Տարածքի միջազգային կառավարումը տեղավորվում է երրորդ ձևի շրջանակներում, որը ռազմական բաղադրիչից զատ ներառում է նաև քաղաքացիական բաղադրիչ:

Միջազգային կառավարումը լիազորող մանդատում ապագա քաղաքական վարչակարգին վերաբերող ձևակերպումներում միջազգային վարչակազմը, որպես կանոն, ձեռնպահ է մնում ուղղակիորեն սահմանել ժողովրդավարությունը և դրա այս կամ այն մոդելը որպես միակ հնարավոր տարբերակ: ՄԱԿ Գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին 1996թ. «ժողովրդավարացման օրակարգ» զեկուլյցում նշում է, որ «գոյություն չունի բոլոր հասարակությունների համար կիրառելի ժողովրդավարության մեկ մոդել: Յուրաքանչյուր հասարակությունն ինքը պետք է վճռի՝

¹²⁷ Tansey O., Regime Building: Democratization and International Administration, US, Oxford University Press, 2009, pp. 40-41.

¹²⁸ Grimm S., Merkel W., War and Democratization: Legality, Legitimacy and Effectiveness, Democratization, 2008, vol. 15, no. 3, pp. 457-471.

արդյոք սկսել ժողովրդավարացման գործընթաց (եթե այո՝ երբ), որոշի դրա բնույթը և տեմպը: Ժողովրդավարությունը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ՝ կախված հասարակությունների առանձնահատկություններից և ստեղծված հանգամանքներից»¹²⁹: Ավելին, ինչպես նշում է Ս. Յանթինգտոնը, մտայնությունը, որ «արևմտյան քաղաքակրթությանը չպատկանող ժողովուրդները պետք է ընդունեն արևմտյան արժեքները, ինստիտուտները և մշակույթը, անբարոյական է իր հետևանքներով, քանզի արդիականացումն ու տնտեսական զարգացումը չեն պահանջում մշակութային վեստերնիզացիա: Ընդհանուր դեպքում արևմտյան ուղու ընտրությունը չի կարող լինել միակ և անգամ ճիշտ ճանապարհը: Ավելին, ցանկացած գործողություն ուղղված արևմտյան մոդելի պարտադրմանը հակասում է ինքնորոշման և ժողովրդավարության արևմտյան արժեքներին»¹³⁰: Այդուհանդերձ, թեև ժողովրդավարացումը ՄԱԿ-ի առաքելությունների հռչակված նպատակներից չէ, մի շարք դեպքերում ՄԱԿ-ը նախաձեռնել է ռազմական կամ քաղաքական միջամտություն և ժողովրդավարական կառավարում հաստատելու կամ վերահաստատելու նպատակով (Յայիթի, Սիերա Լեոնե, Արևելյան Թիմոր, Աֆղանստան, Իրաք և այլն)¹³¹: Վերջին շրջանում մասնագիտական գրականության մեջ հաճախ արծարծվում է «ոչ արևմտյան ժողովրդավարության» հայեցակարգը¹³²: Դրա անհրաժեշտությունը հիմնավորելու համար առանձնացվում են մի քանի գործոններ, այդ թվում.

- 1) որոշ երկրներում Արևմտյան լիբերալ ժողովրդավարության վատ գործարկումը,
- 2) ոչ արևմտյան գերտերությունների աճը կամ բազմաբևեռ աշխարհակարգի խորացումը,
- 3) արտաքին միջամտության ձախողումը որոշ հետկոնֆլիկտային տարածքներում, ինչը ցույց է տվել, որ դյուրաբեկ պետություններում միևնույն՝ «արևմտյան ժողովրդավարության»,

¹²⁹ Boutros Gh., նշվ. աշխ.:

¹³⁰ Huntington S., *The West: Unique, not Universal, Foreign Affairs*, vol. 75, no. 6, 1996, 28-46.

¹³¹ Wolfrum R., *International Administration in Post-Conflict Situations by the United Nations and Other International Actors*, *Max Planck Yearbook of United Nations Law*, vol. 9, 2005, 649-96.

¹³² Stepan A., Linz J., *Democratization Theory and the 'Arab Spring'*, *Journal of Democracy*, vol. 24, 2013, pp. 15-30; Harrison E., McLaughlin M. S., *The Triumph of Democracy and the Eclipse of the West*, London, Palgrave Macmillan, 2014;

մոդելի ներմուծումը՝ առանց հաշվի առնելու տվյալ հասարակության պատմական անցյալն ու առանձնահատկությունները, կարող է լինել վտանգավոր¹³³:

Պարտադրված ժողովրդավարության վտանգներն առավել ցայտուն դրսևորվել են Մերձավոր Արևելքի երկրների դեպքում՝ Արաբական գարնան գործընթացների արդյունքում, ինչն առանձին ուսումնասիրության առարկա է:

Ժողովրդավարացման հաջողությունը ինքնորոշման հակամարտությունների դեպքում առավել ապես պայմանավորված է նաև օրակարգային խնդիրների՝ մասնավորապես կարգավիճակի ու ժողովրդավարացման առաջնություն, սահմանամբ: Այն դեպքում, երբ ժողովրդավարացումը դառնում է «քաղաքական պայմանականություն»¹³⁴ գործիք միջազգային իշխանությունների ձեռքում, մեծանում է նաև ռազմական բախումների վերսկսման հավանականությունը: Օրինակ, 2003թ. ընդունվեց «Չափորոշիչներ Կոսովոյի համար» փաստաթուղթը, որը սահմանում էր այն ութ չափորոշիչները, որոնք բավարարելու դեպքում նախատեսվում էր, որ Կոսովոյում ոչ միայն կձևավորվեն ժողովրդավարական կառույցներ ու հարաբերություններ, քաղաքացիական հասարակություն, այլև կստեղծվեն հիմքեր Կոսովոյի պաշտպանության ու սերբերի միջև առկա լարվածությունը թուլացնելու համար¹³⁵: Չնայած այդ պայմանականությունը որոշակիորեն ամրապնդեց Կոսովոյի ինքնակառավարման ժամանակավոր ինստիտուտների և միջազգային վարչակազմի միջև համագործակցությունը՝ առաջընթացը գլխավորապես արհեստական էր, իսկ չափորոշիչներին բավարարելու հանձնառությունը՝ սահմանափակ: Պատահական չէ, որ Գլխավոր քարտուղարի հատուկ բանագնաց Մարտի Ահտիսաարին Կոսովոյի կարգավիճակի վերաբերյալ իր Համապարփակ ծրագրում նշում էր, որ կարգավիճակի անորոշությունը դարձել է գլխավոր խոչընդոտ Կոսովոյի

¹³³ Youngs R., Exploring “Non-Western Democracy”, Journal of Democracy, vol. 21, no. 4, 2015, <https://carnegieeurope.eu/2015/10/25/exploring-non-western-democracy-pub-61825>, 18.03.2019.

¹³⁴ Երկկողմ գործընթաց դրսևոր և շահառու պետությունների միջև, որը ներառում է տնտեսական կամ քաղաքական շահի որոշակի ձև՝ միայն ի պատասխան ժողովրդավարական գարգացման ուղղությամբ ներպետական հստակ գործողությունների:

¹³⁵ Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո..., էջ 212:

Ժողովրդավարական զարգացման և պատասխանատվության ճանապարհին ¹³⁶ : Ուստի, միայն ռազմավարության վերանայումից հետո հակամարտության կարգավորման գործընթացում գրանցվեց դրական տեղաշարժ, որի արդյունքում 2008թ. փետրվարի 17-ին ընդունվեց Կոսովոյի անկախության հռչակագիրը:

Այսպիսով, միջազգային կառավարման հասկացության հստակ սահմանումն ունի առանցքային նշանակություն, քանզի բազմաթիվ փորձեր են արվում այն աղավաղելու և ներկայացնելու տարածքի զավթման, նեոգաղութացման և նմանատիպ այլ հասկացությունների կողքին: Եթե մինչսառըպատերազմային փուլում դրանց միջև հնարավոր էր անցկացնել որոշ գուճահեռներ, ապա հետսառըպատերազմային փուլում միջազգային կառավարման հասկացության նույնականացումը տարածքի զավթման հետ չունի որևէ հիմք, ինչը պայմանավորված է ընդունող պետության համաձայնության ձեռքբերման հրամայականով, գաղութային համատեքստից և Խնամակալության համակարգից դուրս տարածքի կառավարման ստանձնման իրավական հիմքերի ձևակերպմամբ, ինչպես նաև կառավարման շրջանակները սահմանափակող մեխանիզմների հստակեցմամբ: Միջազգային հարաբերություններում և միջազգային իրավունքում արձանագրված մի քանի առանցքային փոփոխությունների արդյունքում ներկայումս միջազգային կառավարումը կարող է կիրառվել է ոչ միայն խաղաղապահ առաքելության շրջանակներում՝ որպես ռազմական բախումների կանխման մեխանիզմ, այլև տևական հակամարտությունների կարգավորման և ժողովրդավարացման գործընթացներում: Այդ փոփոխությունները պայմանավորող գործոնների թվում էին մի քանի տարածքներում ցեղասպանության կանխման հնարավորության ձախողումը, ինքնորոշման հակամարտությունների աճող թիվը, պետության ինքնիշխանության սկզբունքի վերափոխմաստավորումը, տևական խաղաղության հաստատման համար ժողովրդավարական կառավարման առաջնահերթության գիտակցումը և 1990-ականներին նոր աշխարհակարգի ձևավորման համար մղվող պայքարը:

¹³⁶ Report of the Special Envoy of the Secretary-General on Kosovo's Future Status, UN Doc. S/2007/168, 26 March, 2007.

**ԳԼՈՒԽ 2. ՄԻՋԱԶԳՍՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՄԱՐՏԱՅՐՈՎԵՐՆԵՐԸ**

2.1. Միջազգային կառավարման իրավական հիմքերն ու իրականացման սահմանները

Վերսալյան պայմանագիրը հաճախ նշվում է որպես միջազգային կառավարման առաջին իրավական փաստաթուղթ, որի հիման վրա Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ազգերի լիգան նախաձեռնեց մի քանի վիճելի տարածքների ժամանակավոր կառավարում: Յետագայում այդ իրավասությունը ստանձնեց ՄԱԿ-ը՝ Կանոնադրության 81-րդ հոդվածի հիման վրա՝ Խնամակալության համակարգի, ապա նաև ապագաղութացման համատեքստում՝ տարածքի կառավարման առանձին նախաձեռնությունների շրջանակում: Յետառըպատերազմյան փուլում միջազգային կառավարման ավելի բազմաչափ ու համընդգրկուն նախաձեռնությունները՝ ուղղված հակամարտությունների կարգավորմանն ու տևական խաղաղության հաստատմանը, պահանջում էին միջազգային իրավունքի շրջանակներում հստակ իրավական աղբյուրների մատնանշում, որոնք թույլ կտան հիմնավորել միջազգային կառավարման

կիրառման նպատակահարմարությունը, որոշել կիրառման սահմաններն ու շրջանակները: Խնդիրն էլ ավելի էր բարդացնում ՄԱԿ Կանոնադրության մեջ միջազգային կառավարման վերաբերյալ ուղղակի հղման բացակայությունը և, ինքնիշխան պետություններում կիրառվելու դեպքում, միջազգային իրավունքի շրջանակներում ամրագրված պետությունների ներքին գործերին չմիջամտության և ինքնիշխանության սկզբունքների ու միջազգային կառավարման հարաբերակցությունը: Ուստի, անհրաժեշտ էր որոշել քաղաքական ու աշխարհաքաղաքական նոր իրողություններում դրանց համատեղելիության հնարավորությունները:

Միջազգային կառավարման իրավական հիմքերը: 1945 թվականից ի վեր մարդու իրավունքների ոլորտում մի շարք միջազգային համաձայնագրերի կնքումն ամրապնդեց այն թեզը, որ պետությունը և դրա ղեկավար մարմինները եսակենտրոն միավորներ չեն: Միջազգային իրավունքը սկսեց աստիճանաբար շեղվել պետության ներքին գործերին վերաբերող հարցերում ավանդական չեզոք քաղաքականությունից: Չակամարտության տարածքներում ժամանակավոր կառավարման իրականացումը դարձավ անհրաժեշտ մեխանիզմ, մասնավորապես՝ հաշվի առնելով միջազգային կազմակերպությունների ձախողման արդյունքում Ռուանդայում և Բոսնիայում իրականացված ցեղասպանությունները: Միաժամանակ, կային հակասություններ միջազգային կառավարման իրավական հիմքերի վերաբերյալ, որոնք առայսօր ակտիվ բանավեճերի առարկա են:

Իրավական տեսանկյունից միջազգային կառավարման իրականացումը մշտական բանավեճերի առարկա է, քանզի ՄԱԿ Կանոնադրությունն ուղղակիորեն չի անդրադառնում ՄԱԿ-ի՝ տարածքի կառավարում ստանձնելու, իրավասությանը: Միջազգային կառավարման միակ ուղղակի հղումն արվում է ՄԱԿ Խնամակալության համակարգի շրջանակներում: Կանոնադրության 81-րդ հոդվածում նշվում է, որ Խնամակալության համակարգի շրջանակներում տարածքի կառավարումը կարող է իրականացվել ինչպես մեկ կամ ավել պետությունների, այնպես էլ ՄԱԿ-ի

գլխավորությամբ¹³⁷: Խնամակալության համակարգից դուրս տարածքի կառավարումը իրականացնելու գաղափարի ամենաակտիվ քննադատներից էր Յանս Կելսենը: Անդրադարձնալով Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Իտալիայի և Յարավսլավիայի միջև կռվախնձոր դարձած Տրիեստ ազատ տարածքի ՄԱԿ-ի կառավարմանը՝ Կելսենը նշում էր, որ «Խնամակալության համակարգն այն միակ օղակն է, որի շրջանակներում ՄԱԿ-ը լիազորված է ժամանակավոր հիմունքներով ստանձնել ինքնիշխանությունն որևէ տարածքի նկատմամբ»¹³⁸: Յատկանշական է, որ հենց այդ դեպքի առնչությամբ ՄԱԿ Կանոնադրության 24-րդ հոդվածը, որով ՄԱԿ անդամ պետությունները միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման պատասխանատվությունը վերապահում են Անվտանգության խորհրդին, ծառայեց որպես այդ տարածքում միջազգային կառավարման իրականացման իրավական հիմնավորում¹³⁹:

Սակայն Խնամակալության համակարգին անդրադարձող ՄԱԿ Կանոնադրության 12-րդ գլուխը չի կարող ծառայել որպես ներկայումս իրականացվող միջազգային կառավարման դեպքերի իրավական հիմք, քանզի այն սահմանում է Խնամակալության համակարգի կիրառումը կոնկրետ տարածքների նկատմամբ: Դրանք են

1. Ազգերի լիգայի նախկին «մանդատային տարածքները»,
2. Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ բռնազրավված տարածքները,
3. Կոնկրետ տարածքի համար պատասխանատու պետության կամ պետությունների խմբի կողմից Խնամակալության համակարգի ներքո ինքնակամ դրված տարածքները¹⁴⁰:

Բացի այդ, Խնամակալության համակարգը դադարեցրել է իր գործունեությունը այն բանից հետո, երբ 1994թ. հռչակվեց վերջին խնամարկյալ տարածք Պալաուի անկախությունը:

¹³⁷ Charter of the United Nations, Chapter 12: International Trusteeship System, <https://www.un.org/en/documents/charter/chapter12.shtml>.

¹³⁸ Kelsen H., The Law of the United Nations, London, Stevens & Sons Limited, 1951.

¹³⁹ De Brabandere E., Post-Conflict Administrations in International Law: International Territorial Administration, Transitional Authority and Foreign Occupation in Theory and Practice, Leiden, Boston, Martinus Nijhoff Publishers, 2009, p. 56.

¹⁴⁰ Charter of the United Nations, Article 77.

Միջազգային կառավարում ստանձնելու այլընտրանքային հիմքերն ընկած են ՄԱԿ-ի, այսպես կոչված, կանխենթադրելի կամ սովորութային լիազորությունների (customary powers) շրջանակներում: Նման լիազորությունների տրամադրման հիմքում միջազգային կազմակերպությունների գործունեության ընթացքում համանման գործողությունների պարբերաբար կրկնությունն է, որոնք բնորոշվում են ճանաչման համընդհանրությունամբ և իրավաբանորեն պարտադիր բնույթով¹⁴¹: Այդ առումով հատկանշական է 1949թ. Արդարադատության միջազգային դատարանի խորհրդակցական կարծիքը, որում նշվում է, որ միջազգային կազմակերպությունները չեն կարող արդյունավետ իրականացնել իրենց գործառնությունները դինամիկ զարգացող աշխարհում, եթե դրանց տրամադրվող լիազորությունների շրջանակը սահմանափակվի միայն նրանցով, որոնք նախանշվել են կազմակերպության ստեղծման պահին¹⁴²: Դրա առավել վառ օրինակ է Անվտանգության խորհրդի՝ ոչ ընթացակարգային հարցերում որոշումներ ընդունելու իրավասությունը, նույնիսկ այն դեպքերում, երբ դրա մեկ կամ ավել մշտական անդամ ձեռնպահ է մնում քվեարկության ժամանակ: Չնայած դա չի համապատասխանում ՄԱԿ Կանոնադրության 27-րդ հոդվածի 3-րդ կետին¹⁴³, սակայն Արդարադատության միջազգային դատարանը հայտարարել է, որ այդ պրակտիկան պարբերաբար կիրառվել է Անվտանգության խորհրդի կողմից և գործնականում ընդունվել անդամ պետությունների կողմից¹⁴⁴:

Չատկանշական է, որ ՄԱԿ Անվտանգության խորհրդին կառավարման լիազորություններով օժտելու խնդրին այն տարածքներում, որտեղ տեղի են ունենում ռազմական գործողություններ և որոնց իրավական կարգավիճակը

¹⁴¹ Shaw M., International Law, Fifth Edition, US, Cambridge University Press, 2003.

¹⁴² Reparation for Injuries Suffered in the Service of the United Nations, Advisory Opinion, ICJ Reports 1949, <http://www.icj-cij.org/docket/files/4/1835.pdf>.

¹⁴³ ՄԱԿ Կանոնադրության 27-րդ հոդվածի 3-րդ կետով նշվում է, որ ՄԱԿ Անվտանգության խորհրդի որոշումները ոչ ընթացակարգային հարցերով համարվում են ընդունված, երբ ԱԽ-ի բոլոր ինը անդամները քվեարկում են դրանց օգտին:

¹⁴⁴ Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 246 (1970), Advisory Opinion, ICJ Reports, 1971, <http://www.icj-cij.org/docket/files/53/5597.pdf>, 15.02.2019.

վիճահարույց է, անդրադարձ է կատարվել դեռևս ՄԱԿ Կանոնադրույթի նախնական տարբերակի քննարկման ժամանակ: Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսի ժամանակ Նորվեգիայի ներկայացուցիչն առաջարկում էր փոփոխություններ մտցնել ՄԱԿ Կանոնադրույթի 7-րդ գլխի՝ Անվտանգության խորհրդի լիազորություններին առնչվող դրույթներում: Առաջարկվում էր Անվտանգության խորհրդին օժտել տարածքի ժամանակավոր կառավարման իրավասությամբ այն դեպքերում, երբ օկուպացիա իրականացնող պետությունը ենթադրվում է, որ ներկայացնում է վտանգ կամ վտանգի սպառնալիք միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: Այդուհանդերձ, առաջարկը մերժվեց, և ժամանակավոր կառավարումը չներառվեց ՄԱԿ Կանոնադրույթի վերջնական տարբերակում¹⁴⁵:

Ներկայումս միջազգային կառավարման օրինականությունը կարող է ապահովվել հետևյալ երեք դեպքերից որևէ մեկով.

- Կանոնադրույթի 7-րդ գլխի հիման վրա Անվտանգության խորհրդի ընդունած բանաձև,
- Չակամարտության կողմերի միջև խաղաղության համաձայնագրի կնքում, որով կողմերը հայցում են միջազգային կառավարման հաստատում,
- Այդ երկու մեխանիզմների միաժամանակյա առկայություն՝ «երկակի օրինականացում»¹⁴⁶:

1996 թվականից ի վեր միջազգային կառավարման իրավական հիմնավորման համար գերազանցապես հղում է արվում ՄԱԿ Կանոնադրույթի 7-րդ գլխին, որն անդրադառնում է խաղաղության խախտման, սպառնալիքի կամ ագրեսիայի գործողությունների առնչությամբ կիրառվող միջոցներին: ՄԱԿ Անվտանգության խորհուրդը, որպես կանոն, նախընտրում է ձեռնպահ մնալ ՄԱԿ Կանոնադրույթի միջազգային կառավարման հաստատման համար հիմք հանդիսացող, կոնկրետ հոդված մատնանշելուց: Գերակշիռ դեպքերում հղում է արվում միայն Կանոնադրույթի 7-րդ գլխին՝ առանց հետագա պարզաբանումների: Կանոնադրույթի 7-րդ գլխի

¹⁴⁵Lowe V., Roberts A., Welsh J., Zaum D., նշվ. աշխ., էջ 568:

¹⁴⁶Wolfrum R., նշվ. աշխ.:

համաձայն, Անվտանգության խորհուրդը կարող է կիրառել երկու տեսակի միջոցներ՝ գործողություններ, որոնք կապված չեն ռազմական ուժի կիրառման հետ (41-րդ հոդված¹⁴⁷) և ռազմական գործողություններ, որոնք կարող են իրականացվել ցամաքային, ծովային և օդային ուժերի կողմից (42-րդ հոդված¹⁴⁸): Չնայած Անվտանգության խորհուրդն ուղղակիորեն չի նշում 41-րդ հոդվածը որպես միջազգային կառավարման հաստատման իրավական հիմք, սակայն ակնհայտ է, որ ՄԱԿ-ի միջառք առաքելություններ կարող են որակվել որպես հենց այդ հոդվածի հիման վրա իրականացվող նախաձեռնություններ: 41-րդ հոդվածը սահմանում է, որ Անվտանգության խորհուրդը իրավասու է որոշել ինչպիսի միջոցներ (ոչ ռազմական) պետք է կիրառվեն ՄԱԿ Անվտանգության խորհրդի որոշումների իրականացման համար և կարող է պահանջել ՄԱԿ անդամ պետություններից այդ միջոցների անվերապահ կիրառում: Դրանք կարող են ներառել տնտեսական հարաբերությունների, երկաթուղային, ծովային, օդային, փոստային և հաղորդակցման այլ միջոցների մասնակի կամ ամբողջական խզում, ինչպես նաև դիվանագիտական հարաբերությունների խզում: Այս՝ արդեն իսկ ոչ ամբողջական թվարկումը, Անվտանգության խորհրդին հնարավորություն է տալ իսկ ձեռնամուխ լինել այնպիսի միջոցների կիրառմանը, որոնք մատնանշված չեն 41-րդ հոդվածով:

Նախքան Անվտանգության խորհրդի՝ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա միջոցներ ձեռնարկելը, անհրաժեշտ է ապահովել երկու նախապայմանների առկայություն: Նախ, Կանոնադրության 39-րդ հոդվածի համաձայն, Անվտանգության խորհուրդը պետք է արձանագրի «խաղաղության նկատմամբ ցանկացած սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի գործողության» առկայությունը, երկրորդ՝ Անվտանգության խորհրդի սահմանած միջոցները պետք է ծառայեն «միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանը կամ վերականգնմանը»¹⁴⁹: Առաջին

¹⁴⁷ Charter of the United Nations, Chapter 7, Article 41, <http://www.un.org/en/documents/charter/chapter7.shtml>, 9.02.2014.

¹⁴⁸ Նույն տեղում, հոդված 42:

¹⁴⁹ Baskin M., Between Exit and Engagement: On the Division of Authority in Transitional Administrations, Global Governance, vol. 10, no. 1, 2004, pp. 119-137.

նախապայմանի որոշումը մշտապես հակասությանն ենթարկվում է դառնում, քանզի ՄԱԿ Կանոնադրության հստակ սահմանված չեն այն չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվի Անվտանգության խորհուրդը միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնալիք ներկայացնող իրավիճակների որոշման հարցում ¹⁵⁰ : Պատմականորեն նման սպառնալիքներն ասոցացվել են թշնամական գործողությանն ենթարկելու, մասնավորապես՝ մեկ կամ ավել պետությանն ենթարկող կողմից մեկ այլ պետության նկատմամբ կիրառվող ագրեսիայի դեպքերի հետ: Յետագայում՝ մասնավորապես 1990-ական թվականներին, խաղաղությանն նկատմամբ սպառնալիքի շրջանակները փոփոխության ենթարկվեցին: Դա հատկապես պայմանավորված էր Ռուսաստանում և Բոսնիայում ցեղասպանության կանխման հնարավորության ձախողմամբ, պետությանն ենթարկող գործերին չմիջամտության և ինքնիշխանության սկզբունքների վերախախտմամբ, նոր թեզերի առաջ քաշմամբ («Ժողովրդավարական խաղաղության տեսություն»), «պաշտպանելու պատասխանատվություն» և այլն: Այդ շրջանում զգալի թիվ էին կազմում հատկապես մարդու իրավունքների զանգվածային խախտումներով ուղեկցվող կոնֆլիկտային իրավիճակները, որոնք, եթե նախկինում գլխավորապես ներպետական խնդիրների շարքին էին դասվում, ապա ներկայումս ներառվում են նաև միջազգային կազմակերպությանն ենթարկող օրակարգում: Օրինակ, ինքնորոշման իրավունքի իրացմանը մետրոպոլիայի խոչընդոտումը միջազգային կազմակերպությանն ենթարկող կողմից գերակշիռ դեպքերում չի դիտվել որպես միջամտության բավարար հիմք: Մինչդեռ հարկ է նշել, որ հենց դա է պատճառ դառնում, որ միջազգային կազմակերպությանն ենթարկող «հապաղելու» արդյունքում ինքնորոշվող ժողովուրդը ենթարկվում է բռնությանն ենթարկող, էթնիկ զտումների, անգամ առաջանում է ցեղասպանության վտանգ ¹⁵¹ : Նման օրինակ դեպք գրանցվեց Արևելյան Թիմորում, որտեղ ՄԱԿ-ի ժամանակավոր կառավարման մարմնի (UNTAET) հաստատման հարցում

¹⁵⁰ Spain A., The UN Security Council's Duty to Decide, Harvard National Security Journal, 4, 2013, pp. 320-384.

¹⁵¹ Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, Տիգրան Մեծ, 2008, էջ 124:

վճռական դերակատարություն ունեցան ոչ թե մարդու իրավունքների պարբերական բնույթ ստացած խախտումները՝ քսանչորս տարի տևած զավթման արդյունքում, որոնք միտված էին սահմանափակելու թիմորցիների ինքնորոշման իրավունքն, այլ առաջինի անմիջական հետևանք հանդիսացող ցեղասպանության փորձը:

Անվտանգության խորհրդի բանաձևը, որի հիման վրա կազմավորվում է միջազգային վարչակազմը, հաստատվում է նաև Գլխավոր ասամբլեայի բանաձևով: Վերջինս նման դեպքերում կա՛մ բացահայտ արտահայտում է իր աջակցությունն Անվտանգության խորհրդի նախաձեռնություններին, կա՛մ անուղղակիորեն՝ ճանաչելով, օրինակ, ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմի ծախսերը որպես «Կազմակերպության ծախսեր»¹⁵²: Հատկանշական է, որ միջազգային կառավարման պատմության մեջ արձանագրվել է նաև այնպիսի դեպք, երբ Գլխավոր ասամբլեան է նախաձեռնել միջազգային կառավարման իրականացումը, ինչը չունի իրավական մեծ հիմքեր: 1966թ. ՄԱԿ Գլխավոր ասամբլեան Նամիբիայի հարավաֆրիկյան վարչակազմը ճանաչեց ոչ լեգիտիմ և ձևավորեց Նամիբիայի խորհուրդը, որի գլխավոր նպատակ էր հռչակվել տարածքի նախապատրաստումն անկախության՝ ապահովելով այդ գործընթացում բնակչության առավելագույն մասնակցության մակարդակ¹⁵³: Սակայն Հարավաֆրիկյան հանրապետությունը խոչընդոտեց Նամիբիայի խորհրդին իրականացնել իր գործառնությունները՝ կասկածի տակ դնելով դրա ձևավորման իրավական հիմքերը: Միայն 1980-ական թվականներին հնարավոր եղավ իրականացնել Նամիբիայի ժամանակավոր կառավարման գործընթացն Անվտանգության խորհրդի՝ ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա ընդունած 435 (1978) բանաձևով¹⁵⁴: Գլխավոր ասամբլեայի գործունեության շրջանակները սահմանափակ են այն առումով, որ այն չի կարող նախաձեռնել ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա իրականացվող գործողությունները, քանզի դրանք գտնվում

¹⁵² De Wet E., նշվ. աշխ.

¹⁵³ Udogu I., *Liberating Namibia: The Long Diplomatic Struggle between the United Nations and South Africa*, North Carolina, Jefferson Mcfarland, 2012, pp. 74-75.

¹⁵⁴ UN SC Resolution 435 (1978), 29 September, 1978, <http://unscr.com/en/resolutions/435>.

Են բացառապես Անվտանգության խորհրդի լիազորության շրջանակներում: Բացի այդ ՄԱԿ Կանոնադրության 11-րդ հոդվածի 2-րդ կետով նշվում է, որ Գլխավոր ասամբլեան լիազորված է քննարկել միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման բոլոր այն հարցերը, որոնք դրված են նրա առջև ցանկացած անդամ պետության, Անվտանգության խորհրդի կամ 35-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն պետության կողմից, որը ՄԱԿ անդամ պետությունն չէ և բացառությամբ 12-րդ հոդվածով նախատեսված դեպքերից ¹⁵⁵ : Վերջինս սահմանում է, որ «այն ընթացքում, երբ Անվտանգության խորհուրդը որևէ վեճի կամ իրավիճակի առնչությամբ իրականացնում է Կանոնադրությամբ իրեն վերապահված գործառնությունները, Գլխավոր ասամբլեան այդ վեճի կամ իրավիճակի վերաբերյալ չի կարող որևէ հանձնարարական ներկայացնել, եթե Անվտանգության խորհուրդը չդիմի այդպիսի խնդրանքով ¹⁵⁶»:

Գլխավոր ասամբլեան վերոնշյալ հարցերի առնչությամբ կարող է տալ խորհրդատվություն Անվտանգության խորհրդին, շահագրգիռ պետությանը կամ երկուսին միաժամանակ: Նշվում է նաև, որ ցանկացած այնպիսի հարց, որի ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել գործնական միջոցներ, Գլխավոր ասամբլեան պարտավոր է փոխանցել Անվտանգության խորհրդին դրա քննարկումից առաջ կամ հետո: Ուստի, կարելի է արձանագրել, որ Գլխավոր ասամբլեայի գործունեությունը (միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման շրջանակներում) սահմանափակվում է օրակարգային հարցերի քննարկմամբ և խորհրդատվության տրամադրմամբ:

ՄԱԿ Անվտանգության խորհուրդը կարող է ստանձնել տարածքի ժամանակավոր կառավարում նաև կողմերի ընդունած համաձայնագրի հիման վրա: Օրինակ, Անվտանգության խորհրդի 745 (1992) բանաձևը ¹⁵⁷, որն ընդունվեց Կամբոջայում ՄԱԿ-ի անցումային կառավարման (UNTAC) ստեղծման վերաբերյալ, չէր պարունակում ո՛չ

¹⁵⁵ Charter of the United Nations, Chapter 4: The General Assembly, <https://www.un.org/en/documents/charter/chapter4.shtml>.

¹⁵⁶ Նույն տեղում, 12-րդ հոդված:

¹⁵⁷ UN SC Resolution 745, 28 February 1992, http://www.lcil.cam.ac.uk/sites/default/files/LCIL/documents/transitions/Cambodia_7_UNSC_Resolution_745.pdf, 01.06.2019.

անվտանգությանն ու խաղաղությանը վտանգ ներկայացնող իրավիճակի հղում, ո՛չ հռչակագիր, որ Անվտանգության խորհուրդը գործում է հիմք ընդունելով ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլուխը: Այն անդրադառնում է միայն Կամբոջայի հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ Փարիզի համաձայնագրին, որում նշվում էր միաժամանակ ռազմական և քաղաքացիական տարրեր պարունակող ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմի ստեղծման անհրաժեշտության մասին: Անվտանգության խորհուրդը Կամբոջայի դեպքում չօգտագործեց Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա վերապահված լիազորությունները, քանզի տարածքի վարչական լիազորությունները ՄԱԿ-ին վերապահվել էին երկրի Գերագույն ազգային խորհրդի կողմից, որը հանդիսանում էր sui generis (հատուկ) միավորում: Այն ստեղծվել էր Քաղաքական կարգավորման համապարփակ համաձայնագրի հիման վրա և հատուկ կարգավիճակ էր ստացել միջազգային համայնքի կողմից՝ ամրագրված ինչպես Յամապարփակ քաղաքական համաձայնագրով, այնպես էլ Անվտանգության խորհրդի բանաձևով¹⁵⁸: Յետևաբար, չնայած Կամբոջայի ժամանակավոր կառավարման (UNTAC) հիմնադիր «գործիքը» համաձայնագրին էր, վարչական գործառնությունների ստանձնման իրավասությունը փաստացի շնորհեց տեղական մարմինը:

Անվտանգության խորհուրդը կարող է ստանձնել հետկոնֆլիկտային տարածքների կառավարումը նաև ներգրավված կողմերի համաձայնության հիման վրա: Սակայն այդ դեպքերում ևս Անվտանգության խորհուրդը հավանություն է տալիս կողմերի միջև կնքված համաձայնագրերին և ՄԱԿ-ի ներգրավմանը՝ համապատասխան բանաձևեր ընդունելուց հետո միայն: Անվտանգության խորհրդի նման որոշումը նախնառաջ պրագմատիկ քաղաքականության արդյունք է, քանզի միայն Անվտանգության խորհրդի բանաձևերի հիման վրա կարող են ընդունվել կարևոր բյուջետային որոշումներ, ինչպես նաև ստեղծվել անհրաժեշտ ներքին ենթակառուցվածքներ հակամարտության գոտիներում: Միջազգային կառավարման դեպքերի գերակշիռ մեծամասնության ժամանակ ձեռք է բերվել մետրոպոլիայի (ինքնորոշման հակամարտությունների

¹⁵⁸ Verdirame G., *The UN and Human Rights: Who Guards the Guardians*, US, Cambridge University Press, 2011, pp. 237-239.

դեպքում) կամ ճանաչված պետության համաձայնությունը: Կամբոջայի իշխանությունները համաձայնեցին ՄԱԿ-ի անցումային կառավարմանը Կամբոջայում, Բոսնիա և Հերցեգովինան՝ արտաքին կառավարմանը Մոսթարում, Խորվաթիան՝ Արևելյան Սլովենիայում, Հարավսլավիայի ֆեդերատիվ հանրապետությունը՝ Կոսովոյում, և այլն¹⁵⁹: Որոշ դեպքերում առանձնահատուկ խոցելի իրավիճակը և արտաքին ճնշումները հանգեցնում են «պարտադրված համաձայնության» ձեռքբերմանը: Օրինակ, Կոսովոյի դեպքը հաճախ որակվում է որպես «հարաբերականորեն լեգիտիմ»՝ հիմքում ունենալով այն փաստարկը, որ Կոսովոյի համաձայնագիրը, որը կնքվեց 1999թ. հունիսի 9-ին միջազգային անվտանգության ուժերի (KFOR) և Հարավսլավիայի ֆեդերատիվ հանրապետության միջև, և, որին անմիջապես հաջորդեց Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևը, ձեռք բերվեց արտաքին պարտադրանքի ճանապարհով¹⁶⁰: Համաձայնագիրը կնքվեց ՆԱՏՕ-ի ռազմական միջամտությունից անմիջապես հետո, որը հավանաբար կշարունակվեր, եթե Հարավսլավիայի ֆեդերատիվ հանրապետությունը հրաժարվեր այն ստորագրել: Նման տեսակետն արդարև գոյություն իրավունք ունի, բայց ևս այնպես չի կարող ծառայել որպես Կոսովոյում ժամանակավոր կառավարման օրինականության հակափաստարկ, քանզի առաքելությունը հաստատվել էր Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա՝ որպես տարածաշրջանում խաղաղության և անվտանգության վերականգնման համար անհրաժեշտ նախաձեռնություն:

Հետևյալն էլ ի կտային պառակտված հասարակություններում համաձայնության ձեռքբերումն, անշուշտ, այնպիսի պայման է, որին միշտ չէ, որ գործնականում հնարավոր է հասնել: Թեև դա փոխզիջումային լուծման հասնելու նախնական երաշխիքներից է, սակայն հակամարտության ընթացքով, կողմերի առանձնահատկություններով և երրորդ կողմի շահերով պայմանավորված կառավարումը կարող է հաստատվել առանց երկկողմ համաձայնության (հատկապես՝ ինքնորոշման

¹⁵⁹ Wilde R., Colonialism Redux?...

¹⁶⁰ Zaum D., The Sovereignty Paradox...

հակամարտությանը ներհանդերձ, նույնիսկ այն դեպքերում, երբ մետրոպոլիան ընդդիմացել է միջազգային կառավարմանը, որի ելքը, որպես կանոն, անկախության հռչակումն է, միջազգային համայնքը, համաձայնությանը ձեռք է բերել «այլընտրանքային ճանապարհով»։ Օրինակ, Արևելյան Թիմորի դեպքում միայն այն բանից հետո, երբ ՄԱԿ-ը նախազգուշացրեց Ինդոնեզիային, որ կարող է վերջինիս պատասխանատվության ենթարկել ցեղասպանության համար, Ինդոնեզիան համաձայնեց Թիմորում հանրաքվե անցկացնելուն և անկախացման օգտին քվեարկելու դեպքում՝ ժամանակավոր միջազգային կառավարման հաստատմանը ¹⁶² : Ընդ որում, եթե ինքնորոշման հակամարտությանը ներհանդերձ մետրոպոլիայի համաձայնության ձեռքբերումն օբյեկտիվ պատճառներով ոչ միշտ է հնարավոր, ապա ինքնորոշվող ժողովրդի դեպքում դա պարտադիր պայման է՝ առաջին հերթին ապահովելու միջազգային և տեղի իշխանությանը ներհանդերձ համակցությունը։ Այն դեպքում, երբ այդ երկուսի միջև առաջանում է պառակտում, ինչն առավել հաճախ օրակարգային հարցերի ոչ հստակ սահմանման և, արդյունքում, կառավարման տևական բնույթի պատճառ է, հնարավոր է նաև զինված բախումների վերսկսում, ինչպես դա եղավ Կոսովոյում 2004թ.:

Որոշ դեպքերում ՄԱԿ-ն ապահովում է երկակի լեգիտիմություն՝ կողմերի համաձայնությունն ամրապնդելով ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա ՄԱԿ Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևով (Բոսնիա, Արևելյան Սլովենիա, Արևելյան Թիմոր և այլն):

Բոսնիայում ձևավորված ՄԱԿ-ի ժամանակավոր կառավարումն ի սկզբանե հիմնված էր կողմերի միջև կնքված խաղաղության համաձայնագրի վրա, որը, սակայն, հետագայում ամրապնդվեց ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևերով։ Բոսնիական պատերազմը ավարտվեց Դեյթոնյան համաձայնագրի կնքմամբ 1995 թվականի վերջին։ Վերջինս ցույց տվեց նոր՝ հետաառը պատերազմյան, մոտեցում

¹⁶¹ Կիրակոսյան Մ., Տարածքի ժամանակավոր միջազգային կառավարման արդյունավետության ...

¹⁶² Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղի հակամարտության ...

միջազգային միջամտությանը, որի արդյունքում տեղի ունեցավ միջազգային կազմակերպության ներքին երկարատև ակտիվ ներգրավում պետության կառավարման և ժողովրդավարական ինստիտուտների ստեղծման գործընթացներում: Ժամանակավոր կառավարումը Դեյթոնյան համաձայնագրով նախատեսված Երիրականցնել մեկ տարի նախնական ժամկետով: Առաքելությանը (United Nations Mission in Bosnia and Herzegovina (UNMIBH)) կազմավորվեց Անվտանգության խորհրդի 1035 (1995) բանաձևի հիման վրա: Դրամանդատը ներառում էր մարդասիրական աջակցություն, ականազերծում, մարդու իրավունքների մոնիտորինգ, ինչպես նաև տնտեսական վերակառուցում¹⁶³: UNMIBH-ի քաղաքականությունը համաձայնեցվում էր Բոսնիա և Հերցեգովինայի Բարձրագույն ներկայացուցչի և ՄԱԿ-ի միջազգային ոստիկանական ուժերի հետ: Ուստի այս դեպքում կիրառվեց երկակի լեգիտիմացում՝ առկա էր և՛ խաղաղության համաձայնագիրը (Դեյթոնյան համաձայնագիր), և՛ Անվտանգության խորհրդի բանաձևը (1035 (1995)):

Արևելյան Սլովենիայում ժամանակավոր կառավարման իրականացման համար ևս առկա էին լեգիտիմության երկակի հիմքեր (ՄԱԿ ԱԽ-ի 1037 (1996) բանաձև և Երդուլթի համաձայնագիր): Պետք է նկատել, որ չնայած այն հանգամանքին, որ Արևելյան Սլովենիան ՄԱԿ-ի համեմատաբար վաղ նախաձեռնություններից է, և առաջին անգամ Կանոնադրության 7-րդ գլուխը կիրառվեց որպես ժամանակավոր վարչակազմի ձևավորման հիմք, այդուհանդերձ այն հաճախ դիտարկվում է որպես ՄԱԿ-ի միջազգային կառավարման առավել հաջող օրինակներից¹⁶⁴: Երդուլթի համաձայնագրով (նոյեմբերի 12, 1995) կողմերը հայցում էին Անվտանգության խորհրդին Արևելյան Սլովենիայի՝ Սերբական Կրայինայի հանրապետությունից խորվաթիայի կազմվերափոխությունից հետո, ստանձնել տարածքի ժամանակավոր կառավարումը: ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմը Արևելյան Սլովենիայում ստանձնեց միջարք գործառնություններ, որոնցից թերևս առավել կարևորը տեղական կառավարական մարմինների ընտրությունների անթերի

¹⁶³ UN SC Resolution 1035, 21 December, 1995, <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N95/413/60/PDF/N9541360.pdf>, 01.06.2019.

¹⁶⁴ Stahn C., The Law and Practice...; Novokmet R., նշվ. աշխ.; Zaum D., նշվ. աշխ.:

կազմակերպումն էր: Առաքելությունն ավարտը հաստատվեց Անվտանգության խորհրդի 1145 (1997) բանաձևով այն բանից հետո, երբ Գլխավոր քարտուղարը գեկույց ներկայացրեց ժամանակավոր վարչակազմի արդյունքների վերաբերյալ. ՄԱԿ-ի ժամանակավոր վարչակազմը իրականացրեց իր գլխավոր առաքելությունը, այն է՝ տարածքի խաղաղ վերահստեգրումը հորվաթիայի իրավական և սահմանադրական համակարգ¹⁶⁵:

Ընդհանուր առմամբ, միջազգային կառավարման պրակտիկան ցույց է տալիս, որ այն դեպքերում, երբ միջազգային կառավարումն իրականացվում է քաղաքակիրթ ձևով (կողմերի համաձայնությամբ և Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևով), նույնիսկ միջազգային համայնքը, որն այլ դեպքերում միգուցե կասկածի տակ առներ ժամանակավոր կառավարման օրինականությունը՝ մատնանշելով ՄԱԿ Կանոնադրության մեջ դրա ուղղակի հղման բացակայությունը, հավանություն է արժանացնում ՄԱԿ-ի նախածեռնությունները:

Միջազգային կառավարման սահմաններն ու սահմանափակման մեխանիզմները:

Միջազգային կառավարման իրականացման սահմանների հարցը քննարկումների առարկա դարձավ հատկապես ՄԱԿ-ի վերջին առաքելություններից (Բոսնիա և Հերցեգովինա, Կոսովո, Արևելյան Թիմոր) հետո, երբ կազմակերպությունը ստանձնեց ոչ միայն օրենքի պահպանման և խաղաղության վերականգնման պատասխանատվությունն, այլ և իշխանության բոլոր թևերի նկատմամբ վերահսկողությունը, մասնավորապես՝ նախկին օրենսդրության վերանայում և փոփոխում, պետական պաշտոնյաների նշանակում ու ազատ արձակում և ներպետական իրավասության շրջանակներում գտնվող մի շարք այլ գործառնությունների իրականացում: Դրա արդյունքում անհրաժեշտ դարձավ ճշգրտել այն սահմանները, որի շրջանակներում պետք է իրականացվի միջազգային կառավարումը, ինչպես նաև զսպման մեխանիզմները, որոնք պետք է երաշխավորեն արդյունավետ կառավարում:

Միջազգային կառավարման իրականացման իրավական սահմանափակումները կարելի է պայմանականորեն բաժանել երկու

¹⁶⁵ Novokmet R., նշվ. աշխ.:

խմբի. սահմանափակումներ, որոնք ներառված են միջազգային կառավարման մանդատում և նրանք, որոնք սահմանված են ՄԱԿ փաստաթղթերով:

Առաքելության մանդատը սահմանում է ՄԱԿ Անվտանգության խորհուրդը՝ համապատասխան բանաձևի ընդունմամբ, ինչը դիտարկվում է որպես «ինքնասահմանափակման» ձև: Անվտանգության խորհուրդը միակ կառավարական մարմինն է, որն իրավասու է որոշել այն միջոցները, որոնք անհրաժեշտ են միջազգային խաղաղության և անվտանգության վերականգնման համար: Միաժամանակ, հարկ է նշել, որ ՄԱԿ Կանոնադրությամբ հստակ սահմանված չէ, թե ինչ չափորոշիչներով պետք է առաջնորդվի Անվտանգության խորհուրդը միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնալիքներ կայացնող իրավիճակների սահմանման, համապատասխան միջոցների ընտրության հարցում, և թե որոնք են այն սահմանափակումները, որոնց պետք է ենթարկվի Անվտանգության խորհուրդը ժամանակավոր կառավարում իրականացնելիս¹⁶⁶:

ՄԱԿ Անվտանգության խորհուրդն առանձնահատուկ ինստիտուտ է մի քանի չափումներով: Այն իրականացնում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորություններ, գործունեությունը սահմանափակված է իրավաբանորեն պարտադիր հակաշփոթների և զսպումների բավական սեղմ շրջանակով, ունի միջազգային խաղաղությանն ու անվտանգության պահպանմանն ուղղված լայն լիազորություններ, միակ մարմինն է, որն իրավասու է լիազորել ուժի կիրառում, իսկ որոշումներն ունեն պարտադիր բնույթ ՄԱԿ անդամ պետությունների համար՝ անկախ նրանց ուղղակի համաձայնություններից կամ այլ համաձայնագրերով ստանձնած պարտավորություններից: Անվտանգության խորհրդի ստեղծման հիմքում ի սկզբանե ընկած էր կոլեկտիվ անվտանգության գաղափարը, որն ուղղված էր բացառելու նոր համաշխարհային պատերազմի հնարավորությունը: Միաժամանակ նոր ինստիտուտի շրջանակներում անհրաժեշտ էր հավասարակշռություն հաստատել երկու կարևոր խնդիրների միջև. գերտերությունների համար ստեղծել անհրաժեշտ խթան պարտավորվելու հետևել ՄԱԿ-ի

¹⁶⁶ Spain A., նշվ. աշխ.

ռեժիմին (Անվտանգության խորհրդում վետոյի իրավունքի շնորհման ճանապարհով) և հավաստիացնել ՄԱԿ անդամ այլ պետություններին, որ նրանց շահերն, այդուհանդերձ, անվերապահորեն պաշտպանվելու են ՄԱԿ Կանոնադրության առաջին և երկրորդ հոդվածներում ամրագրված սկզբունքներին և նպատակներին համապատասխան¹⁶⁷:

Այն համոզմունքը, որ Անվտանգության խորհրդի՝ ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա ընդունած միջոցները ոչ մի իրավական սահմանափակում չունեն, և խորհուրդը կարող է գործել միջազգային իրավունքի շրջանակներից դուրս, առավել հաճախ հիմնված է ՄԱԿ Կանոնադրության 25-րդ և 103-րդ հոդվածների մեկնաբանության վրա:

ՄԱԿ Կանոնադրության 25-րդ հոդվածի համաձայն, «անդամ-երկրները պարտավորվում են ենթարկվել Անվտանգության խորհրդի որոշումներին և իրագործել դրանք»¹⁶⁸: Իսկ Կանոնադրության 103-րդ հոդվածով նշվում է, որ «այն դեպքերում, երբ Կազմակերպության անդամների պարտավորությունները կհայտնվեն հակասության մեջ այլ միջազգային համաձայնագրի հետ ունեցած իրենց պարտավորությունների հետ, գերակայություն կունենան ՄԱԿ Կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները»¹⁶⁹: Սակայն մեկնաբանությունը, որ Կանոնադրության վերոնշյալ հոդվածները ՄԱԿ-ին օժտում են անսահմանափակ իշխանությամբ, թյուր է հետևյալ պատճառներով.

1. ՄԱԿ Կանոնադրության 24-րդ հոդվածի համաձայն, Անվտանգության խորհրդի բոլոր որոշումներն ու գործողությունները պետք է համապատասխանեն ՄԱԿ-ի սկզբունքներին և նպատակներին, որոնք շարադրված են ՄԱԿ Կանոնադրության առաջին և երկրորդ հոդվածներում¹⁷⁰: Դրանք ստեղծում են էական սահմանափակումներ ՄԱԿ-ի գործունեության

¹⁶⁷ Whittle D., The Limits of Legality and the United Nations Security Council: Applying the Extra-Legal Measures Model to Chapter VII Action, The European Journal of International Law, vol. 26, no. 3, 2015, pp. 671-698.

¹⁶⁸ Charter of the United Nations, Chapter 5: The Security Council, Art. 25.

¹⁶⁹ Charter of the United Nations, Chapter 16: Miscellaneous Provisions, Art. 103.

¹⁷⁰ Charter of the United Nations, Chapter 5: Functions and Powers, Article 24.

իրականացման ժամանակ՝ ապահովելով արտաքին կառավարման արդյունավետ ու խաղաղ ելք:

2. Իրավական նորմեր, որոնք ունեն *jus cogens* (համապարտադիր, անվերապահ կիրառվող) բնույթ: Այդ նորմերն ամրապնդված են Վիեննայի կոնվենցիայի 53-րդ և 64-րդ հոդվածներում: *Jus cogens* բնույթ ունեցող նորմը համապարտադիր է միջազգային իրավունքի շրջանակներում, և յուրաքանչյուր պետությանը և պարտավոր է հարգել այդ նորմը: Վերջինս անդրադառնում է այն հիմնարար և անձեռնմխելի իրավունքներին ու պարտականություններին, որոնք ոչ մի համաձայնագրով հնարավոր չէ շրջանցել: Յետևաբար, ՄԱԿ Անվտանգության խորհուրդը ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա հարկադիր գործողություններ կիրառելիս նույնպես պարտավոր է ձեռնպահ մնալ *jus cogens* բնույթ ունեցող նորմերի խախտումից¹⁷¹:

Իրավական սահմանափակում է պարունակում նաև ՄԱԿ Կանոնադրության 2-րդ հոդվածի 7-րդ կետը, որի համաձայն «ՄԱԿ Կանոնադրության ոչ մի դրույթ Միավորված ազգերի կազմակերպությանը չի լիազորում միջամտել որևէ պետության ներքին իրավասության հարցերին և չի պահանջում անդամներից նմանօրինակ հարցերը ներկայացնել լուծման Կանոնադրության կարգով...»: Սակայն սապետք է դիտարկել ՄԱԿ Կանոնադրության 39-րդ հոդվածի լույսի ներքո, որն Անվտանգության խորհրդին լիազորում է որոշել միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը վտանգ ներկայացնող իրավիճակները: Ուստի, Անվտանգության խորհուրդն է որոշում այս կամ այն իրավիճակի ներպետական լինելու հարցը՝ այդպիսով իմաստավորելով 2-րդ հոդվածի 7-րդ կետով նշված սահմանափակումը: Նման սպառնալիքի որոշման դեպքում այդ սահմանափակումը *ipso facto* այլ ևս կիրառելի չէ տվյալ իրավիճակի համար:

¹⁷¹ Boon K., Legislative Reform in Post-Conflict Zones: Jus Post Bellum and the Contemporary Occupant's Law-Making Powers, McGill Law Journal, 2005, pp. 285- 326, http://www.lawjournal.mcgill.ca/userfiles/other/3723133-1225241342_Boon.pdf, 13.04.2018.

Որոշ հետազոտողներ այս ցանկում նշում են նաև միջազգային մարդասիրական իրավունքը¹⁷², որը կարող է սահմանվել որպես «միջազգային օրենքների ու նորմերի շրջանակ՝ նպատակաուղղված լուծելու միջազգային կամ տարածաշրջանային զինված հակամարտությանների արդյունքում ծագող մարդասիրական խնդիրները և որը, մարդասիրական նպատակով, սահմանափակում է հակամարտության մեջ ներգրավված կողմերի իրավունքները՝ օգտագործելու իրենց ընտրությամբ այնպիսի միջոցներ, որոնք կարող են անցանկալի կամ անդառնալի հետևանքներ ունենալ հակամարտության ընթացքի վրա»¹⁷³։ Հետազոտողների մի խումբ օկուպացիայի և միջազգային կառավարման մի շարք ընդհանրություններից էլ նեղվ՝ նշում են, որ միջազգային մարդասիրական իրավունքը պետք է վերաբերի նաև ՄԱԿ-ի առաքելություններին, քանզի այն նույնպես պարունակում է օկուպացիայի տարրեր։ Միաժամանակ, ՄԱԿ-ի առաքելությունների՝ օկուպացիայի նկատմամբ ունեցած առավելությունը դիպուկ մատնանշել է ՄԱԿ-ում մարդասիրական հարցերով ավագ իրավաբան Դաֆնա Շրագան. «Օկուպացիայի վերաբերող միջազգային օրենքները երբեք դեյուրե չեն տարածվել ՄԱԿ-ի գործողությունների վրա։ ՄԱԿ-ի առաքելությունները Կոնգոյում, Սոմալիում, Կիպրոսում լիազորված էին աջակցելու կառավարությանը կամ տեղի իշխանություններին, այլ ոչ ստանձնելու ինքնիշխանություն և գոյություն ունեցող համակարգը փոխարինելու կառավարման սեփական համակարգով»¹⁷⁴։ Միջազգային մարդասիրական իրավունքի հիմնական փաստաթղթեր հանդիսացող Ժնևյան կամ Հաագայի կոնվենցիաները սահմանափակում են միայն ստորագրող կողմերին։ Մինչդեռ ՄԱԿ-ը ո՛չ համապատասխան կարգավիճակ ունի նման կոնվենցիաներ ստորագրելու, ո՛չ էլ Ժնևյան համաձայնագրով ստանձնած պարտավորությունները կարող են անդամ պետություններից մեխանիկորեն անցնել Անվտանգության խորհրդին։

¹⁷² Zwanenburg M., *Accountability of Peace Support Operations*, Leiden and Boston: Martinus Nijhoff Publishers, 2005.

¹⁷³ Kondoch B., *The United Nations Administration of East Timor*, *Journal of Conflict & Security Law*, vol. 6, no. 2, 2001, pp. 245-265.

¹⁷⁴ McRae D., de Mestral A., *Canadian Yearbook of International Law*, vol. 46, 2008, pp. 131-132.

Միջազգային մարդասիրական իրավունքի փաստաթղթերը կարող են տարածվել ՄԱԿ-ի առաքելությունների վրամիայն այն դեպքում, երբ վերջինս տարածքի կառավարման կոնկրետ դեպք իրականացնելիս ինքնակամ ստանձնի միջազգային մարդասիրական իրավունքի այս կամ այն փաստաթղթին հավատարիմ մնալու սկզբունքը: Օրինակ, խաղաղապահ գործողությունների իրականացման ժամանակ ՄԱԿ-ը պարտավորվել է հարգել մարդասիրական իրավունքի սկզբունքները: Դա պաշտոնապես ճանաչվել է ՄԱԿ-ի զինված ուժերի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի պահպանման վերաբերյալ փաստաթղթում¹⁷⁵, որով ՄԱԿ-ը ճանաչում է, որ զինված հակամարտություններին վերաբերող մարդասիրական իրավունքի հիմնարար նորմերը տարածվում են նաև ՄԱԿ-ի հարկադիր գործողությունների վրա: Դա արտացոլված է նաև ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների իրականացման համար անձնակազմ և սարքավորումներ տրամադրող ՄԱԿ անդամ պետությունների և ՄԱԿ-ի միջև մոդելային համաձայնագրում¹⁷⁶: Վերջինս սահմանում է, որ ՄԱԿ-ի ցանկացած խաղաղապահ առաքելությունն պետք է պահպանի և հարգի ռազմական գործողություններին առնչվող միջազգային կոնվենցիաների հիմնարար սկզբունքները, այդ թվում՝ 1949թ. օգոստոսի 12-ի ժնևի չորս կոնվենցիաները և դրա լրացուցիչ արձանագրությունները (1977թ. հունիսի 8): Միաժամանակ, ո՛չ Արելյան Թիմորի, ո՛չ Կոսովոյի ժամանակավոր վարչակազմերն իրենց հիմնադիր փաստաթղթերում չեն պարտավորվել հետևել միջազգային մարդասիրական իրավունքին: Ավելին, երկու դեպքում էլ ՄԱԿ-ի առաքելությանը վերապահված էր ողջ՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորությունները:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե հիմնադիր փաստաթղթերը ոչ մի սահմանափակում չեն դրել միջազգային առաքելությունների վրա: Նույնիսկ Արևելյան Թիմորի ժամանակավոր կառավարման մանդատում նշվում էր, որ Անվտանգության խորհուրդը վերջինիս լիազորում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները իր

¹⁷⁵ UN Secretary-General's Bulletin on the Observance by United Nations Forces of International Humanitarian Law, 6 August, 1999, ST/SGB/1999/13, <http://www.refworld.org/docid/451bb5724.html>.

¹⁷⁶ Model Agreement between the United Nations and Member States Contributing Personnel and Equipment to United Nations Peace-Keeping Operations: Report of the Secretary General, May 23, 1991, <http://dag.un.org/handle/11176/184843>.

մանդատում նախանշված նպատակների իրականացման համար ¹⁷⁷ : Սակայն, ինչպես արդեն նշվել է, ՄԱԿ Կանոնադրության 24-րդ հոդվածի համաձայն, Անվտանգության խորհրդի բոլոր որոշումներն ու գործողությունները պետք է համապատասխանեն ՄԱԿ-ի սկզբունքներին և նպատակներին, որոնք առաջին հերթին ուղղված են մարդու իրավունքների պաշտպանությանը, օրենքի գերակայությանը, ժողովրդավարությանը: Ուտի, մանդատում միջազգային մարդասիրական իրավունքին հետևելու պարտավորության «բացթողումը» ՄԱԿ-ին չի դարձնում «ամենաթող» կազմակերպություն: Դրա օբյեկտիվ պատճառն այն է, որ ՄԱԿ-ի փաստաթղթերը ցանկացած այլ միջազգային փաստաթղթերի նկատմամբ ունեն գերակայող ուժ:

Յետաքրքրական է, որ եթե սառը պատերազմի ընթացքում Անվտանգության խորհուրդը մշտապես քննադատության էր արժանանում ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա կառույցին վերապահված լիազորությունները չօգտագործելու համար, ապա 1990-ական թվականների սկզբին կարծիքներ էին հնչում, որ միջազգային խաղաղությունն ու Անվտանգությանը կարող են վտանգվել Անվտանգության խորհրդի ակտիվ գործողությունների արդյունքում ևս ¹⁷⁸: Անվտանգության խորհրդի գործողությունների նկատմամբ իրավական սահմանափակումների հարցի տեսանկյունից հետաքրքրական է Դ. Ուիթլի հոդվածը, որում Անվտանգության խորհրդի՝ ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա ստանձնած լիազորությունները դիտարկվում են արտակարգ լիազորությունների տեսության շրջանակներում: Դրանք այն հատուկ լիազորություններն են, որոնք շնորհվում են կառավարություններին կամ պետական պաշտոնյաներին՝ արտակարգ իրավիճակներին, լուրջ վտանգներին և առկա սպառնալիքներին արձագանքելու համար: Արտակարգ լիազորությունները ենթադրում են «բացառիկ իրավիճակ», որի արդյունքում գործող օրենքներն առնվազն մասնակիորեն կասեցվում են, իսկ գործադիրի իշխանությունն ընդլայնվում է՝ այդ սպառնալիքներին

¹⁷⁷ UN SC Resolution 1272 (1999) on the situation in East Timor, 25 October, 1999, <http://www.un.org/en/peacekeeping/missions/past/etimor/docs/9931277E.html>, 01.06.2019.

¹⁷⁸ Farrall J., United Nations Sanctions and the Rule of Law, US, Cambridge University Press, 2007.

արձագանքելու համար: Միաժամանակ նշվում է, որ նման լիազորություններն ինքնին կարող են վտանգ ներկայացնել հիմնարար արժեքների և գործող իրավակարգի համար: Երբ իշխանությունը կենտրոնացված է, իսկ վերահսկողությունը՝ սահմանափակ, իշխանության չարաչափան հնարավորություններն ավելի մեծ են¹⁷⁹: Այդ համատեքստում առանցքային նշանակություն ունի այսպես կոչված «բացառիկ իրավիճակի» սահմանումը, այլ կերպ ասած՝ խաղաղության նկատմամբ սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայությունը, ինչը հաճախ դիտվում է որպես քաղաքական, այլ ոչ իրավական որոշում:

ՄԱԿ Անվտանգության խորհրդի գործողությունների նկատմամբ ուղղակի սահմանափակումներից բացի մեկ այլ կարևոր հարց է այն, թե որ մարմինը կարող է որոշել խորհրդի գործողությունների իրավաչափությունը: Այլ կերպ ասած, ինչպես ապահովել Անվտանգության խորհրդի՝ այդ իրավական սահմանափակումներին ենթակա լինելը: Յետագոտողների մի ստվար զանգված նախապատվություն է տալիս դատական վերահսկողությանը: Սակայն Անվտանգության խորհրդի նկատմամբ ինստիտուցիոնալ ացված դատական վերահսկողությունը (օրինակ՝ Արդարադատության միջազգային դատարանի կողմից) մերժվեց ՄԱԿ Կանոնադրության նախնական տարբերակների քննարկման ժամանակ: Թեև Արդարադատության միջազգային դատարանի խորհրդատվական կարծիքներն ունեն էական կշիռ, դրանք չունեն իրավաբանորեն պարտադիր բնույթ, և քաղաքական տեսանկյունից երբեմն բարդ է Արդարադատության միջազգային դատարանից նման կարծիքներ հայցելը¹⁸⁰: Դատարանը չունի Անվտանգության խորհրդի որոշումների օրինականությունը ուղղակիորեն վերանայելու իրավասություն (դատական հայցի կողմ կարող են լինել միայն առանձին պետություններ), սակայն այդ իրավասությունը կարող է անուղղակիորեն առաջ գալ, եթե միջպետական կոնֆլիկտը կախված է Անվտանգության խորհրդի որոշակի գործողություններից: Այդ

¹⁷⁹ Whittle D.,..., էջ 671-698:

¹⁸⁰ Nasu H., Who guards the guardian? Towards regulation of the UN Security Council's Chapter 7 powers through dialogue, in Farall J., Rubenstein K. (eds) Sanctions, accountability and governance in a globalized world, 2019.

առուվով հարկ է անդրադառնալ Արդարադատության միջազգային դատարանի քննարկմանը ներկայացված Լոքեթթի դատական գործը, որը թեև ուղղակի կապ չունի հետազոտության առարկայի հետ, սակայն հետաքրքրական է Անվտանգության խորհրդի սահմանափակումների հարցի քննարկման շրջանակներում: Դատական գործը հարուցել էր Լիբիան Միացյալ Նահանգների և Միացյալ Թագավորության դեմ՝ ի պատասխան այդ երկրների՝ Անվտանգության խորհրդի միջոցով Լիբիայի դեմ պատժամիջոցներ առաջադրելուն: Լիբիան պնդում էր, որ ռմբակոծման առնչությամբ իր պարտավորությունները կարգավորվում են օդային ահաբեկչության վերաբերյալ Մոնրեալի կոնվենցիայով, և որ Միացյալ Նահանգներն ու Միացյալ Թագավորությունը չեն կարող օրինականորեն այլ բան պահանջել Անվտանգության խորհրդի միջոցով: Ուստի, Արդարադատության միջազգային դատարանի առջև ծառայել էր այն հարցը, թե արդյոք Անվտանգության խորհուրդը կարող է օրինական ճանապարհով չեղարկել գործող պայմանագրային պարտավորությունները¹⁸¹: Թեև հարցի պատասխանը թվում է ակնհայտ, առավել հաշվի առնելով ՄԱԿ Կանոնադրության վերոնշյալ 103-րդ հոդվածը, այդուհանդերձ դացույց տվեց, որ կամեկ այլ իրավական ինստիտուտ, որը կարող է վիճարկել Անվտանգության խորհրդի որոշումները:

Բացի ՄԱԿ Կանոնադրության մեջ արձանագրված սահմանափակումներից միջազգային վարչակազմերն ունեն նաև մի շարք ընթացակարգային պարտավորություններ, որոնք այս կամ այն չափով զսպող դեր են կատարում ժամանակավոր կառավարման ընթացքում: Նախևառաջ, Անվտանգության խորհուրդը Գլխավոր քարտուղարից պահանջում է պարբերական զեկույցներ ներկայացնել հակամարտության տարածքում կառավարման ընթացքի վերաբերյալ: Ի հավելումն այդ զեկույցների, Անվտանգության խորհուրդը հաճախ պահանջում է նաև միջազգային կառավարումը ստանձնած մարմիններից խորհրդին անմիջականորեն իրազեկել իրավիճակի մասին: Այլ միջազգային կամ տարածաշրջանային կազմակերպությունները, որոնք ուղղակիորեն կամ

¹⁸¹ Hurd I., The UN Security Council and the International Rule of Law, The Chinese Journal of International Politics, vol. 7, no. 3, 2014, pp. 1-19.

անուղղակիորեն մասնակցում են տարածքի կառավարմանը (Յամախարիայի ն բանկ, ԵԱՅԿ, ՆԱՏՕ և այլն), նույնպես պարտավորվում են զեկուլյցներ ներկայացնել¹⁸² : Չեկուլցումը որպես պատասխանատվության և հաշվետվողականության մեխանիզմ կիրառվում էր դեռևս Մանդատային համակարգի, հետագայում նաև՝ Խնամակալության համակարգի շրջանակներում՝ այն հիմնական տարբերությամբ, որ Խնամակալության խորհրդի կազմում էին նաև կառավարության ներկայացուցիչները¹⁸³:

Միջազգային պատասխանատվության մեծացման տեսանկյունից առավել կարևոր ինքնավար ինստիտուտը մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտն է¹⁸⁴ : Բացի պարբերաբար ներկայացվող զեկուլյցներից, միջազգային կառավարման ներքո գտնվող տարածքներում նշանակվում է մարդու իրավունքների պաշտպան, ով գլխավորապես ներգրավված է մարդու իրավունքների խախտման դեպքերի բացահայտման գործընթացում: Սակայն մարդու իրավունքների պաշտպանը կարող է նաև լիազորված լինել տվյալ տարածքի բնակչությանը ստանալու և հետաքննելու բողոքներ միջազգային կառավարման գործընթացի վերաբերյալ (ընթացակարգային խախտումներ, մանդատով ստանձնած պարտավորությունների կատարման ձախողում և այլն) և տրամադրելու համապատասխան խորհրդատվություններ¹⁸⁵ : Չնայած նրան, որ մարդու իրավունքների պաշտպանը չի կարող չեղարկել միջազգային վարչակազմի որոշումները, այդուհանդերձ, այդ խորհրդատվությունները կարող են զգալի կշիռ ունենալ : Գլխավոր ինդիքն այն է, որ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը հաճախ դիտվում է որպես կառավարման գործընթացի ոչ էական բաղադրիչ, իսկ որոշ դեպքերում դրա իրավասության շրջանակները բավական նեղ են: Օրինակ, Բոսնիա և Հերցեգովինայում մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեությունը սահմանափակված էր միայն բոսնիական իշխանությունների

¹⁸² Lowe V., Roberts A., Welsh J., Zaum D., նշվ. աշխ.

¹⁸³ Momirov A., *Accountability of International Territorial Administrations: A Public Law Approach*, Netherlands, Eleven International Publishing, 2011, pp. 83-85.

¹⁸⁴ Caplan R., *International Governance of War-Torn Territories*, Oxford, Oxford University Press, 2005, p. 200.

¹⁸⁵ Նույն տեղում:

նկատմամբ ստացված բողոքներով ¹⁸⁶ : Կոսովոյի դեպքում ինստիտուտը կարող էր ստանալ և հետաքննել բողոքներ՝ UNMIK-ի, ինչպես նաև կենտրոնական ու տեղական ինստիտուտների կողմից իշխանության չարաչափման վերաբերյալ, մինչդեռ առաքելության ռազմական բաղադրիչի համար պատասխանատու մարմինը (KFOR)՝ ՆԱՏՕ-ի վերահսկողության մեջ, ինստիտուտի իրավասության շրջանակներից դուրս էր ¹⁸⁷:

Միջազգային վարչակազմի պատասխանատվությանը մեծացնելու հաջորդ մեխանիզմը պետական բարձր ասյանի դատարանների ընդարձակ իրավասությանն է: Այն դեպքում, երբ ներպետական դատարանները ցույց են տալիս, որ ի վիճակի են խնդիրները լուծել արդար և անկողմնակալ կերպով, կարող են լայն լիազորություններ ստանալ վերանայելու միջազգային իշխանության ներքին գործունեությունը, եթե դրանք անհամատեղելի են գործող պետական օրենսդրության հետ: Օրինակ, Բոսնիայի Սահմանադրական դատարանն իրավասու էր քննել այն հարցերը որոնք վերաբերում էին այս կամ այն օրենքի՝ սահմանադրության հետ համատեղելիությանը, մարդու իրավունքների միջազգային նորմերին, միջազգային հանրային իրավունքի ընդհանուր նորմերին ¹⁸⁸ : 2000թ. նոյեմբերին Դատարանը վերանայեց Բարձրագույն ներկայացուցչի ընդունած որոշումը միասնական սահմանային ծառայության ստեղծման վերաբերյալ, ինչը դարձավ տեղական ինստիտուտի կողմից միջազգային ակտի օրինականության վիճարկման նախադեպ ¹⁸⁹:

Հատկանշական էր նաև 2005թ. դեկտեմբերին ձևավորված ՄԱԿ-ի խաղաղապահ հանձնաժողովը, որը նույնպես հանդես է գալիս որպես միջազգային կառավարման գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող միջկառավարական մարմին: Վերջինս ձևավորել է ՄԱԿ Կանոնադրության 29-րդ հոդվածի հիման վրա, որի համաձայն Անվտանգության խորհուրդը կարող է ձևավորել այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք անհրաժեշտ կհամարի իր

¹⁸⁶ Wolfrum R., նշվ. աշխ.:

¹⁸⁷ Lemay-Hébert, N., State-Building...

¹⁸⁸ Բոսնիան Հերցեգովինայի սահմանադրության 6-րդ հոդված:

¹⁸⁹ Constitutional Court of Bosnia and Herzegovina, Decision U 9/00, 3 Nov. 2000.

գործառույթները և իրաժեք իրականացնելու համար ¹⁹⁰ :
Յանձնաժողովի հիմնական գործառույթների թվում են
հետևյալի կտային տարածքներում վերականգնողական
նազմավարության մշակումը, անհրաժեշտ խորհրդատվության
տրամադրումը, երկարատև զարգացման ծրագրի մշակումը և այլն:
Յետևյալի կտային երկրների ներկայացուցիչները կարող են
մասնակցել հանձնաժողովի կոնկրետ երկրներին առնչվող
հանդիպումներին, որոնց ընթացքում քննարկվում են ճգնաժամից
դուրս գալու ուղիները ¹⁹¹:

2.2. Չմիջամտության և ինքնիշխանության սկզբունքների տրանսֆորմացիան միջազգային իրավունքում ու միջազգային հարաբերություններում

Պետության ներքին գործերին չմիջամտության և
ինքնիշխանության սկզբունքները միջազգային իրավական
համակարգի առավել կարևոր ու միաժամանակ բարդ սահմանվող
սկզբունքների թվում են: Խնդիրը պայմանավորված է միջազգային
հարաբերություններում և միջազգային իրավունքում տեղի
ունեցած զարգացումների արդյունքում դրանց բովանդակության
փոփոխությամբ: Այդ փոփոխությունը պայմանավորող առավել
ազդեցիկ գործոնների թվում էին 1990-ական թվականներին մի քանի
տարածքներում իրագործված ցեղասպանության դեպքերը, որոնց
արդյունքում ակնհայտ դարձան «չմիջամտության» ու
«չեզոքության» սկզբունքների նույնականացման և
ինքնիշխանության՝ որպես բացարձակ ու անբեկանելի գաղափարի,
կիրառման վտանգները: Այլ պատճառների թվում են ինքնորոշման
հակամարտությունների աճող թիվը, տնական խաղաղության
հաստատման համար ժողովրդավարական կառավարման
առաջնահերթության գիտակցումը և 1990-ականներին նոր
աշխարհակարգի ձևավորման համար մղվող պայքարը: Միաժամանակ,

¹⁹⁰ Sharland L., How Peacekeeping Policy Gets Made: Navigating Intergovernmental Processes at the UN, Providing for Peacekeeping, 18, May 2018.

¹⁹¹ Chesterman S., Peacebuilding: Problems and Prospects, Asia Pacific Civil-Military Centre of Excellence, 2/2011, pp. 10-12.

այսօր ինքնիշխանության և չմիջամտության սկզբունքների բովանդակության և կոնկրետ դեպքում դրանց մեկնաբանության հետ կապված խնդիրները շարունակում են մնալ օրակարգային, քանզի դրանք բազմաչափ ու բազմակողմ սկզբունքներ են, որոնց վրա ազդում են տարբեր գործոններ: Ուստի հոդվածում փորձ է արվում խնդիրը դիտարկել եռաչափ հարթությունում՝ իրավական և քաղաքական քաղադրիչների, ինչպես նաև խնդրի վերաբերյալ գիտական մոտեցումների ու դրանց կիրառական դրսևորումների շրջանակում:

Չմիջամտության սկզբունքի բովանդակությունը միջազգային իրավունքում:

Չմիջամտության սկզբունքը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է, որն ամրագրված է ՄԱԿ Կանոնադրության մեջ և ամրապնդված պետությունների արակտիկայում և միջազգային սովորության իրավունքում: Սկզբունքն առաջին անգամ ներկայացվել է 1648թ. Վեստֆալյան պայմանագրում, այնուհետև 1793թ. ներառվել Ֆրանսիայի Սահմանադրության մեջ (1793թ. Ֆրանսիայի Սահմանադրություն, 119-րդ հոդված): Թեև չմիջամտության սկզբունքի սահմանման առաջին փորձերն արվել են դեռևս 18-րդ դարում, դրա բովանդակությունն ու շրջանակները շարունակում են մնալ բանավեճի առարկա:

20-րդ դարի առաջին կեսին չմիջամտության սկզբունքն արձանագրող առավել նշանավոր փաստաթղթերից էր Պետությունների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ Մոնտեվիդեոյի կոնվենցիան (1933թ.), որի 8-րդ հոդվածը սահմանում է, որ «Ոչ մի պետություն իրավունք չունի միջամտելու այլ պետության ներքին կամ արտաքին գործերին»¹⁹²: Ավելի ուշ սկզբունքն ամրապնդվեց ՄԱԿ Կանոնադրության մեջ՝ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանն ու վերականգնմանն առնչվող դրույթներում:

Բացի ՄԱԿ Կանոնադրությունից, չմիջամտության սկզբունքն ամրագրված է նաև միջազգային իրավունքի մի շարք այլ փաստաթղթերում, որոնց թվում են Պետությունների ներքին գործերին միջամտելու անթույլատրելիության և նրանց

¹⁹² Montevideo Convention on the Rights and Duties of States, Article 8, <https://www.ilsa.org/Jessup/Jessup15/Montevideo%20Convention.pdf>, 10.03.2019.

անկախություն ու ինքնիշխանություն պաշտպանություն մասին ՄԱԿ-ի հռչակագիրը (1965թ.), Պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը (1970թ.), ԵԱՀԿ ԶԵԼ սինկյան եզրափակիչ ակտը (1975թ.):

Դրանցից առաջինում՝ 1965թ. Զռչակագրում, նշվում է, որ «այլ պետության կամ պետությունների կողմից իրականացվող ռազմական միջամտությունը կամ միջամտության ցանկացած այլ ձև կամ դրա փորձ՝ ուղղված պետության կամ դրա քաղաքական, տնտեսական ու մշակութային տարրերի դեմ, դատապարտելի են...Ցանկացած պետություն ունի իր քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային համակարգերն ազատորեն ընտրելու անձեռնմխելի իրավունք»¹⁹³: Միաժամանակ, Զռչակագրի վերջին կետով ընդգծվում է, որ դրանում ներառված ոչ մի կետ չի կարող մեկնաբանվել որպես ՄԱԿ Կանոնադրության 6-րդ, 7-րդ և 8-րդ գլուխներում ամրագրված դրույթներին հակասող կետ ¹⁹⁴, որոնց շրջանակում ՄԱԿ Անվտանգության խորհուրդը կարող է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ուղղված միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման կամ վերականգնման ուղղությամբ:

1970թ. պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը վերահաստատում էր վերոնշյալ դրույթները՝ պետությունների ներպետական իրավասության շրջանակներում գտնվող հարցերին այլ անդամ պետությունների չմիջամտելու սկզբունքը ներառելով պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցությանն առնչվող յոթ սկզբունքների շարքում ¹⁹⁵:

¹⁹³Declaration on the Inadmissibility of Intervention in the Domestic Affairs of States and the Protection of their Independence and Sovereignty, 21 December 1965, <http://www.un-documents.net/a20r2131.htm>, 20.01.2019.

¹⁹⁴ՄԱԿ Կանոնադրության 6-րդ գլուխը վերաբերում է վեճերի խաղաղ կարգավորմանը, 7-րդ գլուխը՝ խաղաղության վտանգման, խախտման և ագրեսիայի առնչությամբ կիրառվող միջոցներին, 8-րդ գլուխը՝ տարածաշրջանային համաձայնությունների:

¹⁹⁵ Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations, <http://www.un-documents.net/a25r2625.htm>, 16.01.2019.

Յեւ սինկյան եզրափակիչ ակտում սահմանվում է, որ «Մասնակից պետությունները պարտավորվում են ձեռնպահ մնալ այլ մասնակից պետության ներպետական իրավասությանը վերաբերող հարցերին ցանկացած միջամտությունից՝ ուղղակի կամ անուղղակի, կոլեկտիվ կամ անհատական՝ անկախ իրենց փոխհարաբերություններից... նրանք համապատասխանաբար ձեռնպահ կմնան մյուս մասնակից պետության դեմ որևէ զինված միջամտությունից կամ դրասպառնալիքից»¹⁹⁶:

Հատկանշական է, որ վերոնշյալ բոլոր փաստաթղթերն անդրադառնում են ներքին գործերին չմիջամտության սկզբունքին բացառապես պետությունների, այլ ոչ միջազգային կամ տարածաշրջանային կազմակերպությունների մակարդակով: Միակ բացառությունն ՄԱԿ Կանոնադրությունն է, որի երկրորդ գլխի 7-րդ հոդվածը սահմանում է, որ «Կանոնադրության ոչ մի դրույթ Միավորված Ազգերի Կանոնադրությանը չի լիազորում միջամտել որևէ պետության ներքին իրավասության հարցերին և չի պահանջում անդամներից նմանօրինակ հարցերը ներկայացնել լուծման Կանոնադրության կարգով, *սակայն այդ սկզբունքը չի վերաբերում 7-րդ գլխով նախատեսված հարկադրական միջոցների կիրառմանը*»: Կանոնադրության 7-րդ գլխի 39-րդ հոդվածի համաձայն, Անվտանգության խորհուրդը որոշում է խաղաղության նկատմամբ ցանկացած սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայությունը և հանձնարարականներ է ներկայացնում կամ վճռում, թե համաձայն 41-րդ և 42-րդ հոդվածների, ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման կամ վերականգնման համար: Ավելին, ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունները միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանը նպաստելու համար պարտավորվում են, Անվտանգության խորհրդի կոչով և հատուկ համաձայնագրի կամ համաձայնագրերի համաձայն, նրան տրամադրել միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման համար անհրաժեշտ զինուժ, օժանդակություն և համապատասխան միջոցներ՝ ներառյալ սահմանը հատելու իրավունքը: Միաժամանակ, Կանոնադրության 2-րդ գլխի 7-րդ հոդվածի սահմանումն առաջ է բերում մի շարք հարցադրումներ,

¹⁹⁶Conference on Security and Co-Operation in Europe Final Act, Helsinki 1975, <https://www.osce.org/helsinki-final-act?download=true>, 18.02.2018.

որոնք լրացուցիչ մեկնաբանության կարիք ունեն ՄԱԿ-ի պրակտիկայի հիման վրա: Ո՞վ և ի՞նչ կարգով է որոշում՝ արդյոք միջամտությանը կոնկրետ դեպքում արդարացված է, թե ոչ: Որո՞նք են բացառապես ներպետական իրավասության շրջանակում գտնվող հարցերը: Ո՞ր մասնավոր իրավիճակների դեպքում կարող են կիրառվել հարկադրական միջոցներ:

Ներպետական իրավասության շրջանակում գտնվող հարցերը և դրանց մեկնաբանության քաղաքական հնարավորությունները:

«Ներպետական իրավասություն» եզրույթը միջազգային իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում նոր է: Այն ներկայացվել է դեռևս Ազգերի լիգայի Կանոնադրության մեջ: Ըստ Միջազգային իրավունքի ինստիտուտի 1954թ. ապրիլի 30-ի բանաձևի, ներպետական իրավասությունը ներառում է պետությունների իրավասության շրջանակում գտնվող բոլոր հարցերը և սահմանափակված է միջազգային իրավունքով¹⁹⁷: Սահմանումն ակնհայտորեն բավական լայն է և չի արտահայտում ներպետական հարցերի առնչությանը միջազգային սովորույթային իրավունքում արձանագրված տեղաշարժը: ՄԱԿ Կանոնադրությամբ ևս հստակ սահմանված չեն այն չափորոշիչները, որով կարելի է որոշել ներպետական իրավասության սահմաններում գտնվող հարցերը կամ իրավիճակները: Այդուհանդերձ, արտաքին միջամտության պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՄԱԿ-ն առաջնորդվում է Արդարադատության միջազգային դատարանի կարծիքի հիմքում ընկած այն մոտեցմամբ, որ ներպետական հարցերի շրջանակը հարաբերական է և կախված է միջազգային իրավունքում տեղի ունեցող զարգացումներից¹⁹⁸: Այլ կերպ ասած, գոյություն ունեցող և այնպիսի խնդիրներ, որոնք բացառապես ներպետական են իրենց բնույթով: Այն հարցերը, որոնք միջազգային իրավունքով ենթակա են պետությունների կարգավորմանը, ժամանակի ընթացքում կարող են դառնալ միջազգային կարգավորման առարկա՝ միջազգային

¹⁹⁷ Verdross A., The Plea of Domestic Jurisdiction before an International Tribunal and a Political Organ of the United Nations, Max-Planck-Institut für ausländisches öffentliches Recht und Völkerrecht, vol. 28, 1968, pp. 33-40.

¹⁹⁸ Ahmed K., The Domestic Jurisdiction Clause in the United Nations Charter: A Historical View, Singapore Yearbook of International Law, 10, 2006, pp. 175-197.

սովորութային իրավունքի նոր նորմերի առաջ գալու կամ նոր համաձայնագրերի մշակման գործընթացի արդյունքում¹⁹⁹:

Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսի ժամանակ մի շարք պետություններ ներկայացրեցին առաջարկ, որ Արդարադատության միջազգային դատարանը դառնա այն մարմինը, որը կորոշի պետությունների ներպետական իրավասության շրջանակներում գտնվող հարցերը²⁰⁰: Սակայն առաջարկը չընդունվեց, և ներկայումս այդ գործառույթը լիովին վերապահված է Անվտանգության խորհրդին:

ՄԱԿ Կանոնադրության 39-րդ հոդվածի համաձայն, Անվտանգության խորհուրդը պետք է որոշի խաղաղության նկատմամբ սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի դրսևորման առկայությունը: ՄԱԿ Կանոնադրության մեջ այս կետերի բովանդակությունը հստակեցված չէ, թեև նման փորձեր եղել են: Կանոնադրության ստեղծման պահին դա գրեթե բացառապես կապված էր ռազմական վտանգների հետ²⁰¹: Յետագայում, մասնավորապես, Սառը պատերազմից հետո, Անվտանգության խորհուրդն ընդլայնեց իր գործունեության շրջանակը, իսկ քաղաքացիական պատերազմները, ժողովրդավարության բացակայությունը և մարդու իրավունքների կոպիտ խախտումները սկսեցին դիտարկվել որպես խաղաղության նկատմամբ սպառնալիքներ: Դրան նպաստող առավել ցայտուն գործոններն էին մի քանի տարածքներում ցեղասպանության կանխարգելման հնարավորության ձախողումը (Ռուանդա, Սրեբրինիցա, Սոմալի), ինքնորոշման հակամարտությունների աճող թիվը, պետության ինքնիշխանության սկզբունքի վերախախտումը, տնական խաղաղության հաստատման համար ժողովրդավարական կառավարման առաջնահերթության գիտակցումը և 1990-ականներին նոր աշխարհակարգի ձևավորման համար մղվող պայքարը: Առանձնահատուկ նշանակություն ունեցան նաև ՄԱԿ Գլխավոր քարտուղարի երկու զեկուլյցները՝ «խաղաղության

¹⁹⁹ Gutter J., Domestic Jurisdiction and Human Rights in the United Nations, Thematic Procedures of the United Nations Commission on Human Rights and International Law: in Search of a Sense of Community, Human Rights Research Series, 2006.

²⁰⁰ Ahmed K., նշվ. աշխ., էջ 186:

²⁰¹ Cryer R., The Security Council and Article 39: A Threat to Coherence?, Journal of Conflict and Security Law, vol. 1, no. 2, 1996, pp. 161-195.

օրակարգ»²⁰²և «Ժողովրդավարացման օրակարգ» խորագրերով²⁰³, որոնց հիմքում ընդհանուր մոտեցումների հանրագումարը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. հակամարտությանն են ներկայացված բախումների բացակայությունը դեռևս անվտանգության ու խաղաղության երաշխիք է:

Խաղաղության նկատմամբ սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի սահմանման բացակայության պայմաններում առանձնահատուկ նշանակություն ունի Անվտանգության խորհրդի բանաձևերի ուսումնասիրությունը, որոնք «խորհրդի մտադրության հիմնական ցուցիչներն են և, քվեարկության ճանապարհով, քաղաքական աջակցության մակարդակի արտացոլանքը, որը վայելում է տվյալ որոշումը»²⁰⁴: Դրանց ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են խաղաղության նկատմամբ սպառնալիքի որակման հետևյալ իրավիճակները²⁰⁵.

- Մարդու իրավունքների կոպիտ խախտումներ (Իրաք, Սոմալի, Չարավսլավիա, Ռուանդա),
- Ժողովրդավարության բացակայություն (Չայիթի, Անգոլա),
- Չակահաբեկչական միջամտություններ (Սուդան, Աֆղանստան)

Խնդրի տեսանկյունից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում մարդու իրավունքների վերաբերյալ դիտարկումները: Յետագոտողների, միջազգային փորձագետների մի խումբ համարում է, որ մարդու իրավունքներին վերաբերող հարցերը չեն գտնվում պետությանն են ներկայացված իրավասության ներքո: Յիմնական փաստարկն այն է, որ եթե որևէ հարցի անդրադարձ է կատարվում ՄԱԿ Կանոնադրության դրույթներում, այն այլևս դառնում է «միջազգային մտահոգության» առարկա: «Ցանկացած խնդիր, ըստ էության, պետության ներպետական իրավասության սահմաններում է միայն այն դեպքում, եթե այն չի կարգավորվում միջազգային իրավունքով կամ ենթակա չէ նման կարգավորման...

²⁰² An Agenda for Peace: Preventive Diplomacy and Related Matters, 18 Dec., 1992, <http://www.un.org/documents/ga/res/47/a47r120.htm>.

²⁰³ Boutros Gh., An Agenda for Democratization, United Nations, New York, 1996.

²⁰⁴ Manusama K., The United Nations Security Council in the Post-Cold War Era, Nijhoff Publishers, Brill, 2006.

²⁰⁵ Serna Galván M. L., Interpretation of Article 39 of the UN Charter (Threat to the Peace) by the Security Council. Is the Security Council a Legislator for the Entire International Community?, Anuario Mexicano de Derecho Internacional, vol. 11, 2011, pp. 147-185.

Տնտեսական ու քաղաքական փոխկախվածության արդի շրջանում հարցերի մեծ մասը, որոնք առաջին հայացքից թվում են ներպետական, ժամանակի ընթացում ստացել են միջազգային կարևորություն»²⁰⁶: Այս մոտեցման հակառակորդները նշում են, որ «ՄԱԿ Կանոնադրության դրույթներում մարդու իրավունքների վերաբերյալ հիշատակումները չեն վկայում դրա պարտադիր բնույթի մասին: Դրանք ներառում են միայն սկզբունքներ, այլ ոչ՝ իրավական նորմեր...ՄԱԿ Կանոնադրության համաձայն, կողմերը միայն համաձայնվել են խթանել միջազգային համագործակցությունն այդ հարցերում»²⁰⁷: Արտաքին միջամտության համատեքստում մարդու իրավունքների վերաբերյալ զանգվածային խախտումները հաճախ ներկայացվել են որպես դրանց լեգիտիմացման փաստարկ (օրինակ, ՆԱՏՕ-ի ռազմական միջամտությունը Կոսովոյում):²⁰⁸

«Ազրեսիայի» սահմանման վերաբերյալ Գլխավոր Ասամբլեայի 3314 (1974) բանաձևի նախաբանում նշվում է, որ «ազրեսիան ուժի ապրիսի կիրառման առավել լուրջ և վտանգավոր ձև է»: Ազրեսիան սահմանվում է որպես «պետության կողմից ռազմական ուժի կիրառում այլ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության դեմ կամ ՄԱԿ Կանոնադրության հետ անհամատեղելի ցանկացած այլ կերպ»: Բանաձևի 3-րդ հոդվածում նշվում են ազրեսիայի հնարավոր ձևերը, որոնք սակայն չեն բացառում դրա դրսևորման այլ ձևեր: Դա է փաստում 4-րդ հոդվածը, որում ընդգծվում է, որ 3-րդ հոդվածում թվարկված ազրեսիայի գործողությունների ցանկը լիարժեք չէ, և Անվտանգության խորհուրդը ՄԱԿ Կանոնադրության դրույթների համաձայն կարող է որոշել դրա առկայությունը: Չնայած դրան, Անվտանգության խորհուրդն իր բանաձևերում հազվադեպ է հղում արել ազրեսիայի գործողություններին և նույնիսկ այդ

²⁰⁶ Lauterpacht H., *International Law and Human Rights*, London: Stevens and Sons, 1950, p. 178.

²⁰⁷ Abdulrahim V., *The Question of Domestic Jurisdiction and the Evolution of United Nations Law of Human Rights*, *International Studies*, 47, 2010, pp. 247-265.

²⁰⁸ Istrefi R., *International Security Presence in Kosovo and Its Human Rights Implications*, *Croatian International Relations Review*, vol. 13, no. 80, 2017, pp. 131-154.

դեպքերում չի անդրադարձել 3314 բանաձևին²⁰⁹: Սակայն, ինչպես նշում է Բրոմսը, որևէ բանաձևի իրավաչափությունը չի կարող չափվել Անվտանգության խորհրդի՝ դրա բովանդակության հիշատակման քանակով: Անվտանգության խորհրդի մշտական անդամները՝ որպես Գլխավոր Ասամբլեայի անդամներ, իրենց համաձայնությունն են տվել բանաձևի ընդունմանը:

1996 թվականից ի վեր ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլուխը հաճախ կիրառվում է որպես տարածքի միջազգային կառավարման հաստատման իրավական հիմք՝ նշելով այդ տարածքներում խաղաղության նկատմամբ սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի առկայությունը²¹⁰: Ընդ որում, այդ պրակտիկան օգտագործվում է ոչ միայն հակամարտությունների կարգավորման (մեծամասամբ՝ ինքնորոշման հակամարտությունների դեպքում), այլև պետության կառուցման գործընթացին աջակցության նպատակով: Ոստի, աշխատանքում անսնանցվել են երեք հիմնական իրավիճակներ, որոնք Անվտանգության խորհուրդը դիտարկել է որպես խաղաղության և անվտանգության նկատմամբ սպառնալիք և որոնց հիման վրա լիազորվել է միջազգային կառավարումը: Թեև միջազգային կառավարման մանդատում Անվտանգության խորհուրդը, որպես կանոն, նշում է մարդու իրավունքների զանգվածային խախտումները, սակայն դա հիմնականում ներքոհիշյալ երեք իրավիճակների տրամաբանական հետևանք է, այլ ոչ՝ անմիջական պատճառ:

1. Ժողովուրդների՝ ինքնորոշման իրավունքի տեսական խոչընդոտումը,
2. Պետության ձախողումը,
3. Տարածաշրջանային կայունությանը սպառնացող ներպետական իրավիճակները²¹¹:

Կարելի է արձանագրել, որ առաջին և երկրորդ կետերը միմյանց հետ սերտորեն կապված են: Թեև ինքնորոշման հակամարտությունները ծավալվում են կոնկրետ տարածքում, դրանք

²⁰⁹ O'Connell M. E., Niyazmatov M., What is Agression?: Comparing the Jus ad Bellum and the ICC Statute, Journal of International Criminal Justice, vol. 10, 2012, pp. 189-207.

²¹⁰ Novokmet R., նշվ. աշխ.:

²¹¹ Kirakosyan M., International Territorial Administration as...

սերտորեն կապված են տարածաշրջանային և միջազգային դինամիկայի հետ: Նույնը վերաբերում է նաև երկրորդ և երրորդ կետերին:

1. *Ժողովուրդների՝ ինքնորոշման իրավունքի տևական խոչընդոտումը*: 1990 թվականից ի վեր հակամարտությունների գրեթե կեսը ծագել կամ սրվել է ինքնորոշման ձգտող խմբերի պայքարի արդյունքում, որոնց վերջնականապես կամ ավելի լայն ինքնավարությունն է, կամ լիարժեք անկախությունը²¹²: Գերակշիռ դեպքերում մետրոպոլիան ընդդիմացել է ինքնորոշման իրավունքի իրացման պահանջին՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումների, ընդհուպ՝ ցեղասպանության փորձի ճանապարհով: Արևելյան Թիմորը և Հարավային Սուդանը դրա ակնառն օրինակներից են:

Արևելյան Թիմորում միջազգային կառավարման հաստատման հարցում վճռական դերակատարություն ունեցան ոչ թե մարդու իրավունքների պարբերական բնույթ ստացած խախտումները՝ քսանչորս տարի տևած օկուպացիայի արդյունքում, որոնք միտված էին սահմանափակելու թիմորցիների ինքնորոշման իրավունքն, այլ առաջինի անմիջական հետևանք հանդիսացող ցեղասպանության փորձը: Կառավարման հաստատման վերաբերյալ Ինդոնեզիայի համաձայնությունը ձեռք բերվեց միայն այն բանից հետո, որք ՄԱԿ-ը նախագուշացրեց, որ 1999թ. Թիմորում տեղի ունեցածը պաշտոնապես կորակի որպես ցեղասպանություն²¹³: Նույն կերպ, Հարավային և Հյուսիսային Սուդանի միջև քսանամյա պատերազմը պատճառ էր դարձել երկու միլիոն զոհերի և միլիոնավոր տեղահանված անձանց²¹⁴: Չնայած երկու դեպքում էլ ռազմական և քաղաքացիական միջազգային ներկայությունը վերջ դրեց մարդու իրավունքների զանգվածային խախտումներին և աջակցեց նոր պետության ստեղծման գործընթացին, այդուհանդերձ այն ինքնին չնվազեցրեց ապակայունացման հավանական վտանգը: Ինչպես նշում են Ուիլլիամսը և Պեկին, միջազգային կառավարման պրակտիկայի

²¹² Toft M., նշվ. աշխ:

²¹³ Թորոսյան S., Լեռնային Ղարաբաղի հակամարտության ...

²¹⁴ Sudan (North-South Ethnic War) (1983-2005), Modern Conflicts, Political Economy Research Institute, <http://www.peri.umass.edu/fileadmin/pdf/Sudan1.pdf>, 10.12.2018.

շրջանակներում ապակայունացման վտանգները կարող են առաջանալ երկու համատեքստում. երբ պետությունը նույնիսկ ինստիտուտների ստեղծման երկարատև գործընթացից հետո չի վիճակի չի լինում իրականացնել արդյունավետ իշխանություն և երբ նոր պետության գոյությունն ինքնին ստեղծում է ապակայունացնող քաղաքական դինամիկա²¹⁵: Առաջին իրավիճակը բնորոշ էր Արևելյան Թիմորին, և Չարավային Սուդանին՝ նախկին գաղութներ, որոնք գաղութարար տերությունների՝ տարածքից դուրս գալուց հետո, օկուպացվել էին հարևան պետությունների կողմից: Երկու դեպքում էլ բացակայում էր ինքնակազմակերպման և ինքնակառավարման արակտիկան: Ուստի, ՄԱԿ-ը կանգնել էր բավական բարդ մարտահրավերի առջև: Անհրաժեշտ էր լուծել ոչ միայն կարգավիճակի, ինքնակառավարման և պետական ներուժի ձևավորման հետ կապված խնդիրներն, այլև, որն ամենաբարդն է, իրականացնել հասարակական գիտակցության տրանսֆորմացիա, ինչը գաղութային անցյալի անմիջական հետևանք է: Կարգավիճակի խնդիրը արդյունավետ կերպով լուծվեց 2002թ. Արևելյան Թիմորի ժողովրդավարական հանրապետության և 2011թ. Չարավային Սուդանի հանրապետության ստեղծմամբ: Այդուհանդերձ, «անկախության նախապատրաստման»²¹⁶ բացն արտահայտվեց Թիմորի 2006թ. ճգնաժամի և անկախության հռչակումից մեկ ամիս անց Չարավային Սուդանում վերսկսված էթնիկ բռնությունների տեսքով:

2. *Պետության ձախողումը*: Միջազգային կառավարում կիրառվում է նաև ձախողված պետություններում՝ հղում անելով միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնալիք ներկայացնող տարրերի առկայությանն այդ պետություններում: «Ձախողված պետությունը» հարաբերականորեն նոր գաղափար է միջազգային հարաբերություններում և զգալի կարևորություն է ստացել 1990-ական թվականների սկզբին՝ մասամբ նաև 1993թ. ՅԵԼ մանի և Ռաթների «Փրկելով ձախողված պետությունները»²¹⁷ և 1994թ. Կապլանի «Մոտեցող անարխիա»²¹⁸ հոդվածի հրապարակմամբ: Դրանից հետո

²¹⁵ Williams P., Pecci F., Earned Sovereignty: Bridging the Gap Between Sovereignty and Self-Determination, Stanford Journal of International Law, vol. 40, no. 1, 2004, pp. 347-386.

²¹⁶ Kirakosyan M., International Territorial Administration as a Conflict...

²¹⁷ Helman G., Ratner S., Saving Failed States, Foreign Policy, vol. 3, no. 89, 1993, pp. 3-20.

²¹⁸ Kaplan R., The Coming Anarchy, Atlantic Monthly, vol. 273, no. 2, 1994, pp. 44-65.

գաղափարը լայնորեն օգտագործվում է՝ բնորոշելու համար այն պետությունները, որոնք չունեն բավարար ներուժ՝ որպես միջազգային համայնքի լիարժեք անդամներ դրսևորվելու համար: Քանի որ պետությունները միջազգային իրավական համակարգի հիմնական դերակատարներն են, դրանց ձախողումը համարվում է սպառնալիք ամբողջ համակարգի գոյության ու շարունակականության համար: Թեև չկա «ձախողված պետության» հստակ սահմանում, ընդհանուր բնութագիրը վերաբերում է պետության ներքին կազմալուծմանն ու փլուզմանը և բնակչությանը անհրաժեշտ հանրային ծառայություններ մատուցելու անկարողությանը²¹⁹:

«Ձախողված պետության» գաղափարի արմատներն ընկած են ապագադուրյալ գործընթացի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի կիրառման հիմքում: Վերջինիս իրացման արդյունքում հատկապես սառը պատերազմի ավարտից հետո կարճ ժամանակահատվածում ձևավորվեցին զգալի թվով պետություններ, որոնք տևական ժամանակահատված ի վիճակի չէին իրականացնել ինքնիշխան պետության գործառույթները: Ներպետական մակարդակում ձախողված պետություններն իրական վտանգ են բնակչության բարօրության, հատկապես՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի տեսանկյունից: Սակայն, ինչպես նշում է Բրաբանդերը, ՄԱԿ Անվտանգության խորհրդի՝ միջազգային խաղաղության և անվտանգության նկատմամբ սպառնալիքի առնչությամբ հարկադիր միջոցների կիրառման տեսանկյունից «ձախողված պետության» որակումը չի կարող սահմանափակվել սոսկ ներպետական ասպեկտով: Սոսկ այն փաստը, որ պետությունն իրականացնում է ոչ արդյունավետ ներպետական կառավարում, բավարար չէ կարծել, որ այն իրեն չի կարող արդարացնել որպես միջազգային համայնքի անդամ: Միայն այն դեպքում, երբ կան բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ պետությունն իսկապես վտանգ է ներկայացնում միջազգային խաղաղության ու անվտանգության համար, Անվտանգության խորհուրդը կարող է միջամտել այդ

²¹⁹ De Brabandere E., The Responsibility for...

պետության ներքին գործերին²²⁰: Սակայն, ինչպես արդեն նշվել է, ՄԱԿ Կանոնադրության հստակ սահմանված չեն այդ իրավիճակները, ինչը էապես բարդացնում է դրանց որոշման խնդիրը: Նամիբիայում (1989թ.) և Կամբոջայում (1991թ.) ՄԱԿ-ի առաքելության ներքին առաջիններից էին ինամակալության համակարգից դուրս ձախողված պետություններին աջակցության տեսանկյունից: Դրանց հաջորդեց 1995թ. Բոսնիա և Հերցեգովինայի ընդլայնված մանդատը և 1999թ. Կոսովոյում և Արևելյան Թիմորում ՄԱԿ-ի լիարժեք կառավարման դեպքերը:

3. *Տարածաշրջանային կայունությանը սպառնացող ներպետական իրավիճակներ*: ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի մեկնաբանության շրջանակներում «խաղաղության» հասկացության նախնական է, քան պետությունների միջև պատերազմի բացակայությունը: Օրինակ, Իրաքի դեպքում 1991թ. Անվտանգության խորհուրդը մտահոգված էր բնակչության զանգվածային ճնշումներով երկրի տարբեր հատվածներում՝ առավել հաճախ քրդաբնակ շրջաններում, ինչը հանգեցրել էր փախստականների հսկայական հոսքի պետական սահմաններից դուրս և միջսահմանային ներխուժումների՝ այդպիսով վտանգելով տարածաշրջանային խաղաղությանն ու անվտանգությանը²²¹: Կոսովոյում միջազգային կառավարման հաստատումը նույնպես պայմանավորված էր մասամբ տարածաշրջանային անվտանգության նկատառումներով: 1998թ. սկսած Կոսովոյի հակամարտությանը քաղաքացիական պատերազմից վերաճեց միջսահմանային հակամարտության, որն ընդգրկում էր ոչ միայն Կոսովոյի ազատագրական բանակը, Սերբիայի անվտանգության ուժերն ու ներքին գործերի նախարարության հատուկ ոստիկանական ուժերն, այլ և ՆԱՏՕ-ի միջառք անդամ պետությունների զորախմբեր: Թեև պատերազմը չէր տարածվել Ալբանիայի և Մակեդոնիայի ուղղությամբ, այն զգալի ազդեցություն էր ունեցել փախստականների իրավիճակի վատացման տեսանկյունից²²²: 1999թ. ԵԱՀԿ գեկոլյցի համաձայն, ռազմական բախումները և էթնիկ

²²⁰ Նույն տեղում:

²²¹ UN SC Resolution 688 (1991), <http://fas.org/news/un/iraq/sres/sres0688.html>, 18.09.2018.

²²² Zuercher Ch., Roehner R., Riese S., External Democracy Promotion in Post-Conflict Zones: Evidence from Case Studies, Taiwan Journal of Democracy, vol. 5, no. 1, pp. 241-259.

գտումները հանգեցրել են ավելի քան 450.000 մարդու տեղահանման և արտաքսման հարևան պետություններ: Ուստի Ռամբուլյեի բանակցությունների ձախողումից և ՆԱՏՕ-ի միջամտությունից հետո ՄԱԿ-ը Կոսովոյում հաստատեց ժամանակավոր կառավարում՝ Կոսովոյի ճգնաժամի արդյունքում Արևմտյան Բալկաններում տարածաշրջանային կայունության վերականգնման համար: Ավելի քան 1244 (1999) բանաձևում Անվտանգության խորհուրդը ողջունում էր միջազգային կազմակերպությունների նախաձեռնությունը Յարավարևելյան Եվրոպայի կայունության պակտի իրականացման ուղղությամբ՝ ժողովրդավարության, տնտեսական բարգաձգման, կայունության և տարածաշրջանային համագործակցության խթանման համար²²³:

Ուստի, չկան այնպիսի խնդիրներ, որոնք բացառապես ներպետական են իրենց բնույթով: Այն հարցերը, որոնք միջազգային իրավունքով ենթակա են պետությունների կարգավորմանը, ժամանակի ընթացքում կարող են դառնալ միջազգային կարգավորման առարկա՝ միջազգային հարաբերություններում տեղի ունեցող զարգացումների և միջազգային սովորույթային իրավունքի նոր նորմերի առաջ գալու կամ նոր համաձայնագրերի մշակման արդյունքում: Եթե նախկինում խաղաղության նկատմամբ սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի որակումը գլխավորապես կապված էր ռազմական վտանգների հետ, ապա այսօր հակամարտությունների կամ զինված բախումների բացակայությունը չի դիտվում որպես բավարարելիք անվտանգության ու խաղաղության պահպանման համար:

Ինքնիշխանության սկզբունքի բովանդակությունը և դրսևորման ձևերը: Չմիջամտության սկզբունքն, իր հերթին, ինքնիշխանության սկզբունքի ածանցյալն է: Քանի որ ինքնիշխանությունը մի քանի և նույնիսկ իրարամերժ նորմեր ընդգրկող հայեցակարգ է, որին բնորոշ են այնպիսի բաղկացուցիչներ, ինչպիսիք են տարածքը, բնակչությունը, ինքնավարությունը, իշխանությունը, վերահսկողությունը և ճանաչումը, ուստի միջազգային իրավունքի և միջազգային հարաբերությունների շրջանակներում այն վիճահարույց հայեցակարգ է՝ ինչպես իրավական, այնպես էլ

²²³UN SC Resolution 1244 (1999)...

քաղաքական տեսանկյունից²²⁴: Դասական մոտեցման շրջանակներում, որին հարում են ռեալիստները և նեոռեալիստները, ինքնիշխանությունը ընկալվում և բնորոշվում է որպես պետությունների հաստատուն և անբեկանելի բնորոշիչ, որը ենթադրում է տարածքի նկատմամբ գերագույն իշխանություն: Ինքնիշխանությունը դիտարկվում է գերազանցապես Երեսնամյա պատերազմի ավարտն ազդարարած Վեստֆալյան համաձայնագրի շրջանակներում, որը սահմանում էր յուրաքանչյուր ազգ-պետության՝ իր տարածքի նկատմամբ և ներպետական հարցերում ինքնիշխանության իրավունքը՝ բացառելով ցանկացած արտաքին ներգրավվածություն՝ պետության ներքին գործերին չմիջամտության սկզբունքի հիման վրա (վեսթֆալյան ինքնիշխանություն)²²⁵: Ինքնիշխանության՝ որպես ոչ բացարձակ սկզբունքի իրավական արտահայտությունը եղավ Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագիրը (16 դեկտեմբերի, 1966): Վերջինս կարևոր նշանակություն ունեցավ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ճանաչման տեսանկյունից: Այն սահմանում էր, որ «բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, և այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ապահովում տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը»²²⁶:

20-րդ դարի սկզբին արդեն կարծիքներ էին հնչում ինքնիշխանության՝ որպես բացարձակ և անսահմանափակ իշխանության, դասական մոտեցման վտանգների մասին: Նշվում էր, որ վեստֆալյան ինքնիշխանությունը, նախևառաջ, ապահովում է ազգերի և նրանց ղեկավարների, այլ ոչ քաղաքացիների պաշտպանությունը: Ինքնիշխանության նախապայման դարձավ այն պահանջը, որ պետությունը պետք է գործի իրավունքի գերակայության շրջանակներում՝ ապահովելով մարդու

²²⁴ Zaum D., նշվ. աշխ., էջ 28:

²²⁵ Scharf M., Earned Sovereignty: Juridical Underpinnings, Denver Journal of International Law and Policy, vol. 31, no. 3, 2004, pp. 273-287.

²²⁶ International Covenant on Civil and Political Rights, General Assembly resolution 2200A (XXI) of 16 December 1966, <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/ccpr.aspx>, 15.01.2019.

իրավունքների նկատմամբ լիարժեք հարգանք²²⁷: Ինքնիշխանության սկզբունքի վերափոխմաստավորման պատճառների շարքում նշվում է նաև զանգվածային ոչնչացման գեների տարածումը, ցեղասպանությունը, ձախողված և դյուրաբեկ պետությունների առաջացումը և այլն²²⁸:

Եթե ինքնիշխանությունը դիտարկվի դասական մոտեցման շրջանակներում, ապա վստահաբար կարելի է պնդել, որ եթե չկա միջազգային ճանաչում (արտաքին ինքնիշխանություն), չկա նաև ինքնիշխանություն: Պետությունը կամ ճանաչված է, կամ այն պետություն չէ: Ըստ այդ մոտեցման, ինքնիշխանությունը պետությունների հաստատուն և էկզոգեն (արտաժին) հատկանիշ է: Սակայն այսօր գիտական շրջանակներում առավել տարածված է այն մոտեցումը, որ ինքնիշխանությունը բազմակողմ և բազմափասկացություն է՝ տարբեր և փոփոխական իմաստներով²²⁹: Այդ տեսանկյունից առանցքային նշանակություն ունի Կրասներ ի դասակարգումը, որով հեղինակն առանց նում է ինքնիշխանության չորս ձև²³⁰: Դրանք են.

- Ներպետական ինքնիշխանություն, որը վերաբերում է պետական իշխանության ֆորմալ կազմակերպմանը և դրա արդյունավետ իրականացմանը: Ինքնիշխանության այս ձևի առանցքային տարրն իշխանությունն է, իսկ հիմքում պետական ինստիտուտների կայացածությունն է²³¹:
- Փոխկախված (interdependence) ինքնիշխանություն, որը վերաբերում է պետական իշխանության մարմինների՝ պետության սահմաններից դուրս տեղեկատվության,

²²⁷ Kofi Annan, Sovereignty-the State and the Individual, Stockholm Conference, Plenary Session I: Current Global Trends Affecting the Work of Ombudsmen, June 9, 2009, file:///C:/Users/Admin/Downloads/Stockholm%20Conference_04.%20Plenary%20Session%20I_Kofi%20Ann an.pdf.

²²⁸ Jackson J., Sovereignty-Modern: A New Approach to an Outdated Concept, The American Journal of International Law, 97, 2003, pp. 782-802.

²²⁹ Lake D. A., Reflections, evaluation, integration: The New Sovereignty in International Relations, International Studies Review, vol. 5, no. 3, 2003, pp. 303-323; Krasner S., Sovereignty: Organized Hypocrisy, NJ., Princeton University Press, 1999.

²³⁰ Krasner S., Sovereignty: Organized Hypocrisy...

²³¹ Krasner S., The Hole in the Whole: Sovereignty, Shared Sovereignty, and International Law, Michigan Journal of International Law, vol. 25, no. 4, pp. 1075-1101.

գաղափարների, մարդկանց, կապիտալի հոսքերի կարգավորումն իրականացնելու գործառույթին:

- Միջազգային-իրավական ինքնիշխանություն, որը վերաբերում է փոխադարձ ճանաչման պրակտիկային՝ որպես կանոն այն տարածքային միավորների միջև, որոնք ունեն ֆորմալ իրավական անկախություն: Դա կապված է միջազգային համակարգում քաղաքական միավորի կարգավիճակի ձևավորման հետ. արդյո՞ք պետությունը ճանաչված է այլ պետությունների կողմից, արդյո՞ք այն ընդունվում է որպես իրավահավասար, արդյո՞ք դրաներկայացուցիչներն ունեն դիվանագիտական անձեռնմխելիություն, արդյո՞ք այն կարող է լինել միջազգային կազմակերպությունների անդամ:
- Վեսթֆալյան ինքնիշխանություն, որը ենթադրում է քաղաքական կազմակերպման ձև, որի դեպքում ներպետական կառավարումը գերծ է արտաքին միջամտությունից: Ինքնիշխանության այս ձևն ուղղակիորեն կապված է ներպետական գործերին չմիջամտության սկզբունքի հետ²³²:

Ինքնիշխանության այս ձևերը չեն փոխադարձաբար մեկը մյուսին: Պետությունը կարող է տիրապետել ինքնիշխանության վերոնշյալ ձևերից որևէ մեկին, սակայն չունենալ մյուսը: Օրինակ, միջազգային-իրավական ինքնիշխանությունը կարող է խաթարել վեսթֆալյան ինքնիշխանությունը, եթե պետության ղեկավարները կնքեն համաձայնագիր, որով ճանաչում են արտաքին իշխանության կառույցները, ինչպես ԵՄ անդամ երկրների դեպքում է: Նույն կերպ, պետությունը կարող է տիրապետել միջազգային-իրավական ինքնիշխանության, լինել ճանաչված այլ պետությունների կողմից, սակայն իրականացնել ոչ արդյունավետ ներպետական կառավարում: 1990-ական թվականներին ԱՖրիկայի որոշ ձախողված պետություններ, այդ թվում՝ Սոմալին, դրա ակնհայտ օրինակ են: Ավելին, պետությունը կարող է օժտված լինել միջազգային-իրավական, վեսթֆալյան և ներպետական ինքնիշխանությամբ, սակայն ունենալ միջսահմանային հոսքերը

²³² Hayman P., Williams J., Westphalian Sovereignty : Rights, Intervention, Meaning and Context, Global Society, vol. 20, no. 4, 2006, pp. 521-542.

կառավարելու սահմանափակ իրավունք, ինչն ուղղակիորեն կապված է գլոբալ իզացիայի գործընթացների հետ²³³: Միաժամանակ, հարկ է նշել, որ ինքնիշխանության այս չորս ձևերի առկայությունն անհրաժեշտ պայման է պետության լիարժեք և արդյունավետ գործարկման համար:

Միջազգային-իրավական ինքնիշխանությունն առավել հաճախ անվանում են նաև «արտաքին ինքնիշխանություն», իսկ վերաբնակչության ինքնիշխանությունը՝ «ներքին ինքնիշխանություն»: Որոշ հեղինակներ²³⁴ ինքնիշխանության վերոնշյալ ձևերին անդրադառնում են նաև որպես բացասական և դրական ինքնիշխանություններ: Առաջինը սահմանվում է որպես ազատություն արտաքին միջամտությունից, իսկ դրական կամ էմպիրիկ ինքնիշխանությունը վերաբերում է պետական խնդիրների արդյունավետ լուծման, ինչպես նաև քաղաքական, իրավական և սոցիալ-տնտեսական մի շարք հարցերի շուրջ անկողմնակալ որոշումների ընդունման կարողությանը²³⁵ կամ, այլ կերպ ասած, իրական ինքնակառավարմանը: Ինքնիշխանության վերոնշյալ երկու ձևերի համատեքստում կարևոր է պարզել, թե արդյոք ներքին ինքնիշխանությունը կարող է իրապես գործարկվել առանց արտաքին ինքնիշխանության և ինչ ձևեր կարող են լինել:

Թեև առաջին հայացքից թվում է, թե ներքին ինքնիշխանությունն արտաքին ինքնիշխանության նախապայման է, սակայն փոփոխվող իրողությունների պայմաններում նկատվում է լիովին հակառակ միտումը: Եթե հաշվի առնվի ներքին ինքնիշխանության վերոնշյալ սահմանումը, ապա մի շարք տարածքների չէր վերապահվի արտաքին ինքնիշխանություն (ճանաչում) և ընդհակակառակը: Դրավաբան օրինակ է Կոսովոյի Յանրապետությունը: Չնայած 2008թ. վերահռչակված անկախությանը և պետության կառուցման գործընթացում միջազգային դերակատարների տնական լայնածավալ ներգրավմանը, այն ունի ձախուղված պետությանը բնորոշ հատկանիշներ, մասնավորապես չի

²³³ Krasner S., Sovereignty: Organized Hypocrisy..., էջ 4:

²³⁴ Kreijen G., State Failure, Sovereignty and Effectiveness, Leiden, Martinus Nijhoff Publishers, 2004; Ronzoni M., Two Conceptions of State Sovereignty and Their Implications for Global Institutional Design, Critical Review of International Social and Political Philosophy, vo. 15, no. 5, 2012, pp. 573-591.

²³⁵ Ronzoni M., նշվ. աշխ.

իրականացնում ամբողջ տարածքի նկատմամբ լիարժեք վերահսկողություն, ունի թույլ տնտեսություն և գործազրկության բարձր մակարդակ: Արդարադատության և իրավունքի ոլորտներում կա կոռուպցիայի և ինստիտուցիոնալ թուլության բարձր մակարդակ, ինչպես նաև դանդաղ առաջընթաց միջազգային մասնակցության ուղղությամբ²³⁶: 2006թ. պաշտոնական հաղորդագրության մեջ Եվրոպական հանձնաժողովն ընդգծում էր այն առանցքային ոլորտները, որոնց ուղղությամբ երկիրն արձանագրել է որոշ առաջընթաց և ոլորտներ, որոնք ունեն լուրջ բարեփոխումների կարիք, մասնավորապես՝ կառավարության և ընդդիմության միջև շարունակական քաղաքական բևեռացումը, արդարադատության համակարգի խնդիրները, ընտրական բարեփոխումների անհրաժեշտությունը և այլն: ²³⁷ Ի հակադրություն դրան, Արցախի Հանրապետությունը, զրկված լինելով արտաքին ինքնիշխանությունից, իրականացնում է լիարժեք ներքին ինքնիշխանություն՝ վերը սահմանված իմաստով ²³⁸: Ավելին, չճանաչված պետությունների վերաբերյալ Ֆրիդոմ Հաուսի գեկոլյցների վերլուծությունը հաստատում է Թենսիի այն պնդումը, որ ժողովրդավարցման գործընթացի հաջողությունը ևս ամբողջությամբ պայմանավորված չէ ճանաչմամբ ²³⁹: Ուստի, կարելի է արձանագրել, որ ներքին ինքնիշխանությունը չի ուղղորդվում բացառապես արտաքին ինքնիշխանությամբ: Նույն կերպ արտաքին ինքնիշխանությունը չի ենթադրում լիակատար ներքին ինքնիշխանություն, մասնավորապես, այն դեպքերում, երբ ներքին պատերազմի, ապստամբության, ճնշման կամ պետության ձախողման հետևանքով բնակչությունը կրում է լուրջ վնաս և այդ պետությունը չի ցանկանում կամ ի գործ չէ դադարեցնել կամ կանխարգելել այն: Այս հաստատագրման հիմքերն ամրապնդվեցին Պետական ինքնիշխանության և միջամտության հարցերով միջազգային հանձնաժողովի՝ «Պաշտպանելու

²³⁶ Visoka G., The Obstacles to Sustainable Peace and Democracy in Post-Independent Kosovo, Journal of Conflict Transformation and Security, vol. 1, no. 2, 2011, pp. 25-38.
²³⁷ Commission Staff Working Document, Kosovo 2016 Report, Brussels, 9 November, 2016, https://eeas.europa.eu/sites/eeas/files/20161109_report_kosovo.pdf, 15.10.2018.
²³⁸ Կիրակոսյան Մ., Միջազգային կառավարումը ...
²³⁹ Freedom House Reports, <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2018>, Tansey O., Regime-Building: Democratization and International Administration, NY, Oxford University Press, 2009.

պատասխանատվությունն» գեկոլյցով²⁴⁰: Նոր մոտեցմամբ պետության ինքնիշխանությունը դադարեց ընկալվել որպես արտոնություն: Այն առաջին հերթին սկսեց մեկնաբանվել որպես պետության պատասխանատվություն, որի ձախողման դեպքում միայն միջազգային հանրությունն իրավասու է իրականացնել պաշտպանելու պատասխանատվությունը²⁴¹: Յատկանշական է, որ ինքնիշխանության այդ մոտեցումը նոր է: Դեռևս Յոհան Կոլտնի Լեիպան աշխատության մեջ նշում էր, որ «եթե պետությունն այլևս չի կարողանում արդյունավետորեն իրականացնել իրեն վերապահված գործառույթները, ապա այն այլևս չի որակվում որպես ինքնիշխան»²⁴²:

Վերջին շրջանում գիտական շրջանակներում արժարժվում է նաև «վաստակած ինքնիշխանության» (earned sovereignty) գաղափարը, որը վերաբերում է այն տարածքային միավորներին, որոնք պետք է բավարարեն մի շարք չափորոշիչների՝ միջազգային վերահսկողության ներքո իրենց կարգավիճակը հաստատելու (ճանաչված պետություններ) կամ այդ կարգավիճակը հայցելու համար (չճանաչված պետություններ): Յակամարտության ներքին կարգավորման այդ սկզբունքը նպատակաուղղված է կանխելու ապակայունացման հնարավոր վտանգները՝ կապված արագ անկախացման հետ, իշխանության լիազորությունների աստիճանական փոխանցման ճանապարհով: «Վաստակած ինքնիշխանության» մոտեցման շրջանակներում առանձնացվում են առանձնացվում են երեք հնարավոր սցենարներ²⁴³.

- Երբ կոնկրետ ժամանակահատվածի ընթացքում տարածքն իրականացնում է ընդլայնվող իշխանություն նախքան վերջնական կարգավիճակի սահմանումը (փուլային ինքնիշխանություն),
- Երբ տարածքը պետք է բավարարի կոնկրետ նախապայմանների կամ չափանիշների խմբի՝ նախքան կսահմանվի կոնկրետ կարգավիճակ (պայմանական ինքնիշխանություն),

²⁴⁰ Report of the International Commission...

²⁴¹ Մուրադյան Լ., նշվ. աշխ.:

²⁴² Hobbes T., նշվ. աշխ.:

²⁴³ Williams P., Pecci F., նշվ. աշխ.:

- Երբ ինքնիշխան տարածքային միավորը այս կամ այն չափով սահմանափակված է իր ինքնիշխանության կամ գործառույթների իրականացման գործում, օրինակ՝ վարչական կամ ռազմական արտաքին ներկայության ճանապարհով (սահմանափակ ինքնիշխանություն):

Չակամարտությունների կարգավորման շրջանակներում այդ երեք ձևերից միջազգային համայնքն առավել հաճախ կիրառում է պայմանական ինքնիշխանությունը²⁴⁴, որը ենթադրում է, որ տարածքը պետք է բավարարի միշտ քնախապայմանների, որոնք սահմանված են ուղղակիորեն կամ անուղղակիորեն, տարբերվում են՝ կախված հակամարտության բնույթից, և, որպես կանոն, ներառում են այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են մարդու իրավունքների պաշտպանությունը, ահաբեկչության դադարեցումը, ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը, իրավունքի գերակայության հաստատումը և տարածաշրջանային կայունության խթանումը: Ընդհանուր առմամբ «քաղաքական պայմանականություն» սկզբունքը արտաքին ազդեցության առավել տարածված ուղղակի լծակներից է: Վերջինս երկկողմ գործընթաց է դոնոր և շահառու պետությունների միջև, որը ներառում է տնտեսական կամ քաղաքական շահի որոշակի ձև՝ միայն ի պատասխան ժողովրդավարական զարգացման ուղղությամբ ներպետական հստակ գործողությունների: Օրինակ, 2003թ. Կոսովոյի համար առաջադրված չափորոշիչները՝ գլխավորապես մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտներից, որոնք բավարարելու դեպքում միայն հնարավոր կլիներ սկսել կարգավիճակի վերաբերյալ բանակցություններ, Կայունացման և Ասոցացման համաձայնագրի կնքումը, ինչպես նաև Խաղաղության համաձայնագրի իրականացումը վերահսկող խորհրդի (Peace Implementation Council)՝ Բոսնիայում տիրող իրավիճակի վերաբերյալ դրական գնահատականը՝ որպես Բոսնիայում Բարձրագույն ներկայացուցչի գրասենյակի փակման նախապայմաններ: Միջազգային կազմակերպությունները կարող են կիրառել նաև պայմանականության մեկ այլ ձև՝ «անդամակցության պայմանականությունը»՝ որպես ժողովրդավարացման գործում

²⁴⁴Tansey O., նշվ. աշխ., էջ 40-42:

իրենց դերակատարության բաղկացուցիչ մաս ²⁴⁵ : Ինքնորոշման հակամարտության ընթացքում այս ռազմավարությանը կարող է ոչ թե ապահովել, այլ քայքայել անվտանգությանը, այն դեպքում, երբ սահմանված չափանիշների բավարարումը կապված է հստակ քաղաքական կարգավիճակի հետ: Բացի այդ, անհրաժեշտ է ապահովել նաև օբյեկտիվ պայմաններ չափանիշների բավարարման համար: Օրինակ, Կոսովոյի քաղաքական ինստիտուտների համար սահմանված էին այնպիսի չափանիշներ, որոնք մեծամասամբ ոչ թե իրենց վերահսկողության ներքո էին, այլ՝ ՄԱԿ-ի առաքելության (UNMIK) և Սերբիայի: Չուգահեռ կառույցների գինաթափումը, որոնց շարունակում էր Ֆինանսավորել Բելգրադը, տեղի դերակատարների պատասխանատվության շրջանակում էր: Սոցիալական ձեռնարկության ընթացքում և լիկվիդացիան շարունակում էր մնալ UNMIK-ի իրավասության շրջանակներում: Նույնը վերաբերում է նաև դատական համակարգի բարեփոխմանը, որը գտնվում էր UNMIK-ի Արդարադատության և Ոստիկանության բաղադրիչի վերահսկողության ներքո ²⁴⁶: Սակայն, առավել մտահոգիչ էր այն, որ «նախ չափորոշիչներ, ապա՝ կարգավիճակ» ռազմավարությանը չափանիշների բավարարումը չէր կապում տարածքի հստակ քաղաքական կարգավիճակի հետ, ինչի արդյունքը եղան 2004թ. վերսկսված ռազմական բախումները ²⁴⁷ : Ուստի, ինքնորոշման հակամարտության ընթացքում միջազգային համայնքի կողմից առավել հաճախ կիրառվող պայմանական ինքնիշխանության կամ, առհասարակ, «քաղաքական պայմանականության» ռազմավարությանը կարող է ոչ թե ապահովել, այլ քայքայել անվտանգությանը, այն դեպքում, երբ ինքնորոշվող տարածքի համար սահմանված չափորոշիչների բավարարումը կապված է հստակ քաղաքական կարգավիճակի հետ և ապահովված չեն նախնական օբյեկտիվ պայմաններ այդ չափանիշների իրագործման համար:

²⁴⁵Կիրակոսյան Մ., Զեոկոնֆլիկտային հասարակության ընթացքում ժողովրդավարացման խթանման հնարավորությունները միջազգային կառավարման ճանապարհով, Զայկական քաղաքագիտական հանդես, 2, 6, 2016, էջ 65-88:

²⁴⁶ Knoll B., From Benchmarking to Final Status? Kosovo and the Problem of an International Administration's Open-Ended Mandate, *The European Journal of International Law*, vol. 16, no. 4, 2005, pp. 637-660.

²⁴⁷Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո...

Ուստի, ներքին գործերին չմիջամտության և ինքնիշխանության սկզբունքների և դրանց բովանդակության փոփոխության ուսումնասիրության արդյունքում կարելի է արձանագրել հետևյալը.

- Չկան այնպիսի խնդիրներ, որոնք բացառապես ներպետական են իրենց բնույթով: Այն հարցերը, որոնք միջազգային իրավունքով ենթակա են պետության ներքին կարգավորմանը, ժամանակի ընթացքում կարող են դառնալ միջազգային կարգավորման առարկա՝ միջազգային հարաբերություններում տեղի ունեցող զարգացումների և միջազգային սովորույթային իրավունքի նոր նորմերի առաջ գալու կամ նոր համաձայնագրերի մշակման արդյունքում:
- Եթե նախկինում խաղաղության նկատմամբ սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի որակումը գլխավորապես կապված էր ռազմական վտանգների հետ, ապա այսօր հակամարտությունների կամ զինված բախումների բացակայությունը չի դիտվում որպես բավարարելիք անվտանգության ու խաղաղության պահպանման համար:
- Թեև ՄԱԿ Անվտանգության խորհուրդը միջազգային խաղաղության և անվտանգության վերականգնմանն ուղղված իր առաքելությունների մանդատում որպես կանոն նշում է մարդու իրավունքների զանգվածային խախտումները՝ որպես առաքելության արդարացման հիմք, սակայն դա հիմնականում ավելի լայն ու շարունակական բնույթ ստացած իրավիճակների տրամաբանական հետևանք է, այլ ոչ` անմիջական պատճառ: Դրանց թվում են 1) ժողովուրդների` իրենց ինքնորոշման իրավունքի տեսական խոչընդոտումը, 2) պետության ձախողումը և 3) տարածաշրջանային կայունությանը սպառնալիք ներկայացնող ներպետական իրավիճակները:
- Ինքնիշխանության` որպես բացարձակ ու անբեկանելի սկզբունքի մեկնաբանությունն իր տեղը գիջել է ինքնիշխանության` որպես պատասխանատվության ընկալմանը, որի ձախողման դեպքում միջազգային հանրության ներքին իրավասու է ստանձնել պաշտպանելու պատասխանատվություն:

- Թեև ներքին ու արտաքին ինքնիշխանությունները միմյանց հետ սերտորեն կապված են, այդուհանդերձ արդյունավետ կառավարումը պայմանավորված չէ բացառապես միջազգային ճանաչմամբ, իսկ միջազգային ճանաչումը, իր հերթին, անպայմանորեն չի ենթադրում ներքին ինքնիշխանության արդյունավետ գործարկում:
- Ինքնորոշման հակամարտությունների դեպքում միջազգային համայնքի կողմից առավել հաճախ կիրառվող պայմանական ինքնիշխանության կամ, առհասարակ, «քաղաքական պայմանականություն» ռազմավարությունը կարող է ոչ թե ապահովել, այլ պառակտել անվտանգությունն, այն դեպքում, երբ ինքնորոշվող տարածքի համար սահմանված չափորոշիչների բավարարումը կապված չէ հստակ քաղաքական կարգավիճակի հետ և ապահովված չեն նախնական օբյեկտիվ պայմաններ այդ չափանիշների իրագործման համար:

**ԳԼՈՒԽ 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԶԱՄԵՄՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒՆՈՒԹՅՈՒՆ**

3.1. Միջազգային կառավարումը՝ որպես ինքնորոշման հակամարտությունների կարգավորմանն աջակցության հնարավորություն (Կոսովոյի և Արևելյան Թիմորի դեպքերը)

Միջազգային կառավարման վերաբերյալ ուսումնասիրություններում առանձնահատուկ ուշադրություն են

արժանացել Կոսովոյի և Արևելյան Թիմորի դեպքերը²⁴⁸ : Դա մեծ մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ եթե նախկինում ՄԱԿ-ի ժամանակավոր առաքելություններին վերապահված էին առանձին խնդիրների վերաբերող (ընտրությունների անցկացում, զինված ուժերի դուրսբերում, խաղաղության համաձայնագրի կիրառման վերհսկողություն և այլն) սահմանափակ լիազորություններ, ապա ՄԱԿ Անվտանգության խորհրդի Կոսովոյում և Արևելյան Թիմորում՝ համապատասխանաբար 1244 (1999) և 1272 (1999) բանաձևերից բխող լիազորությունների շրջանակն աննախադեպ բնույթ ունենր. տարածքի կառավարման համար պատասխանատու ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը ստանձնել էր տարածքի կառավարման լիարժեք՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորություններ: Յառկանշական է, որ երկու առաքելությունները մեկնարկեցին նույն ժամանակահատվածում, ունեցան տևական ընթացք, իսկ կառավարման ելքը եղավ անկախության հռչակումը: Միաժամանակ, այսօր Կոսովոն և Արևելյան Թիմորը մի շարք չափանիշներով հաճախորակում են որպես ձախողված պետություններ, ինչն աշխատանքում փորձ է արվում մեկնաբանել նաև արտաքին բաղադրիչի (կամ վերահսկողության) պահպանման տեսանկյունից:

Կոսովոյում և Արևելյան Թիմորում միջազգային կառավարման դեպքերի միջև համեմատական վերլուծության իրականացման համար հիմք է հանդիսացել համեմատական վերլուծության երկբաղադրիչ մեթոդը²⁴⁹ : Ընդհանուր առմամբ, համեմատական վերլուծության մեթոդը հնարավորություն է ընձեռում ոչ միայն բացահայտել հակամարտությունների սրման, ռազմական գործողությունների հրահրման կամ վերսկսման պատճառները, կարգավորման գործընթացում ներգրավված միջնորդների դերը և միջազգային իրավունքի կիրառման արդյունավետությունը կոնկրետ

²⁴⁸ Ruffert M., The Administration of Kosovo and East-Timor by the International Community, International and Comparative Law Quarterly, vol. 50, no. 3, 2001, pp. 613-631; Stahn C., The United Nations Transitional Administrations in Kosovo and East Timor: A First Analysis, Max Planck Yearbook of United Nations Law, 5, 2001, pp. 105-183; Krasniqi V., Aliu Y., The Role of the International Administration in the Process of the State-Building in Kosovo, Academic Journal of Interdisciplinary Studies, vol. 4, no. 3, 2015, pp. 409-416.

²⁴⁹ Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո...

հակամարտության կարգավորման գործընթացում, այլև հնարավորություն է ստեղծում հակամարտություններում ներգրավված հասարակական միավորների՝ ժողովուրդների, հասարակության ներքին, ինչպես նաև մշակույթների նմանությունների ու առանձնահատկությունների բացահայտման և հիմնավորման համար²⁵⁰ : Դա առանցքային նշանակություն ունի հատկապես ներկայացված դեպքերի վերլուծության ժամանակ, քանզի կառավարման նույն մոդելը ներդրված էր առաջին դեպքում եվրոպայում գտնվող, նախկինում ինքնակառավարման փորձ ունեցող, երկրորդի՝ դրալիարժեք բացակայության ամբողջական արևմտյան քաղաքակրթությանը չպատկանող պետության միջազգային կառավարման հիմքում:

Չամեմատական վերլուծության առաջին բաղադրիչի համար հետազոտության արկած է հանդիսանում միջազգային կառավարման իրավական բաղադրիչը, մասնավորապես՝ Անվտանգության խորհրդի բանաձևերը, երկրորդ բաղադրիչի համար՝ ժամանակավոր կառավարման ընթացքում տեղի ունեցած հանգուցային իրադարձություններն ու փաստերը: Առաջին դեպքում կարևոր է պարզել միջազգային կառավարման լեգիտիմության հիմքերը և մանդատում սահմանված խնդիրների շրջանակը՝ մասնավորապես տարածքի ապագա կարգավիճակի, կառավարման մանդատի ավարտի ու ներպետական իշխանություններին լիազորությունների փոխանցման ժամանակացույցի առնչությամբ:

Կոսովոյում ՄԱԿ-ի ժամանակավոր կառավարման (UNMIK) հաստատման համար ձեռք բերվեց լեգիտիմացման երկակի հիմք՝ կողմերի համաձայնությունը և Անվտանգության խորհրդի՝ ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա ընդունված 1244 (1999) բանաձևը: Միաժամանակ, ինչպես արդեն նշվել է, կողմերի (մասնավորապես՝ Չարավսլավիայի Ֆեդերատիվ հանրապետության) համաձայնությունը միջազգային կառավարման հաստատմանը հաճախ որակվում է որպես արտաքին պարտադրանքի արդյունք, քանզի Կոսովոյում համաձայնագիրը, որով ձեռք բերվեց կողմերի

²⁵⁰ Թորոսյան Տ., Պետրոսյան Մ., Չակամարտությունների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները, Չայկական քաղաքագիտական հանդես, 1, 2, 2015, էջ 135-159:

համաձայնություները միջազգային իշխանությունների ներկայությամբ, կնքվեց ՆԱՏՕ-ի ռազմական միջամտությունից անմիջապես հետո, որը ենթադրվում էր՝ կշարունակվեր, եթե Յարաձևավիայի \$եդերատիվ հանրապետությունը հրաժարվեր այն ստորագրել: Միաժամանակ, դաչի կարող ծառայել որպես միջազգային կառավարման և եզիտիմության հակախափարկ, քանզի առաքելությունը հաստատվեց ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևով՝ ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա՝ որպես տարածաշրջանում խաղաղության և անվտանգության վերականգնման համար անհրաժեշտ նախաձեռնություն:

Անվտանգության խորհրդի 1244 (1999) բանաձևով Կոսովոյում հաստատվեց «ռազմական և քաղաքացիական միջազգային ներկայություն»²⁵¹: Բանաձևը և իրագործում էր Գլխավոր քարտուղարին, համապատասխան միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ, «Կոսովոյում հաստատել ժամանակավոր կառավարում, որի ներքո Կոսովոյի ժողովուրդը կվայելի Էական ինքնավարություն Յարաձևավիայի \$եդերատիվ հանրապետության կազմում և որը կիրականացնի անցումային կառավարում՝ միաժամանակ ձևավորելով ու վերահսկելով ինքնակառավարման նախնական ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը՝ Կոսովոյի ողջ բնակչության խաղաղ և բնականոն կյանքն ապահովելու համար»²⁵²:

Կառավարման մանդատում, ի թիվս այլ խնդիրների, նախատեսվում էր.

- Էական ինքնավարության և ինքնակառավարման խթանում,
- Յիմնական քաղաքացիական վարչական գործառնությունների կիրականացում,
- Ինքնակառավարման նախնական ինստիտուտների կառուցում և գործունեության նկատմամբ վերահսկողություն,
- Ընտրությունների անցկացում,
- Կոսովոյի ապագա կարգավիճակի որոշմանն ուղղված քաղաքական գործընթացի դյուրացում,

²⁵¹ UN SC Resolution 1244...
²⁵² UN SC Resolution 1244..., para. 10.

- Իշխանությունների և իրազորությունների փոխանցման վերահսկում²⁵³:

Այդ նպատակները պետք է իրագործվեին հաշվի առնելով մանդատում նշված երկու սկզբունքները՝ Յարավսլավիայի դաշնային հանրապետության ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության հարգում և Կոսովոյի համար էական ինքնավարության ու իրական ինքնակառավարման ապահովում: Տեսականորեն «էական ինքնավարություն» (substantial autonomy) հասկացությունը պարունակում է քաղաքական կարգավիճակի մեկնաբանության չափազանց լայն տիրույթ, ինչի արդյունքում առայսօր գոյություն ունի «էական ինքնավարության» համընդհանուր կիրառելի սահմանում: Ուստի, բանաձևում ապագա կարգավիճակի առնչությամբ նման բնորոշումն ի սկզբանե կառավարման վերջնանպատակը դարձնում էր անորոշ, և պատահական չէ, որ նրանք, ովքեր Կոսովոյում միջազգային կառավարման փորձը համարում են ձախողված, գերազանցապես այդ հիմնավորումն են ներկայացնում՝ առաքելության թերությունները մատնանշելիս²⁵⁴: Յետագա զարգացումները, մասնավորապես, ռազմական բախումների վերսկսումը, ցույց տվեց կարգավիճակի ստորադասման վտանգները:

Արևելյան Թիմորում նույնպես մետրոպոլիայի համաձայնություննը միջազգային կառավարմանը ձեռք բերվեց արտաքին պարտադրանքի ճանապարհով: Միայն այն ժամանակ, երբ ՄԱԿ-ը նախագրուչացրեց Ինդոնեզիային, որ կարող է 1999թ. սեպտեմբերի զանգվածային սպանությունները²⁵⁵ որակել որպես ցեղասպանություն և Ինդոնեզիայի իշխանություններին ենթարկել պատասխանատվության, վերջինս համաձայնեց Թիմորում հանրաքվե անցկացնելուն և անկախացման օգտին քվեարկելու դեպքում՝ ժամանակավոր միջազգային կառավարման հաստատմանը²⁵⁶: Սակայն այս դեպքում ևս կարլեգիտիմացման երկակի հիմք. կառավարման

²⁵³ UN Security Council Resolution 1244..., para. 11.

²⁵⁴ Knoll B., From Benchmarking..., Stahn C., The Law and Practice...

²⁵⁵ Saul B., Was the Conflict in East Timor “Genocide” and Why Does It Matter?, Melbourne Journal of International Law, vol. 2, 2001, pp. 1-46,

https://law.unimelb.edu.au/_data/assets/pdf_file/0003/1680222/Saul.pdf, 01.06.2019.

²⁵⁶ Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղի հակամարտության...

մանդատը հաստատող 1272 (1999) բանաձևում²⁵⁷ Անվտանգության խորհուրդը հղում էր անում ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխին՝ այդպիսով ստեղծված իրավիճակը ներկայացնելով որպես սպառնալիք միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: Ինչպես Կոսովոյի դեպքում, միջազգային վարչակազմին վերապահված էին օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորություններն²⁵⁸ առանց իշխանության թևերի բաժանման և գործող հակաշփոթության ու զսպումների համակարգի առկայության: Առաքելության մանդատը ներառում էր հետևյալ խնդիրները.

- ապահովել անվտանգություն և խաղաղության երաշխիքներ Արևելյան Թիմորի ամբողջ տարածքում,
- հաստատել արդյունավետ կառավարում,
- աջակցել քաղաքացիական և սոցիալական ծառայությունների զարգացմանը,
- ապահովել մարդասիրական օգնության, վերականգնման և զարգացման աջակցության համակարգումն ու տրամադրումը,
- ապահովել ինքնակառավարման կարողությունների զարգացմանը,
- աջակցել կայուն զարգացման պայմանների ստեղծմանը,

Առաքելությունն ի սկզբանե ձևավորվել էր վերահսկելու 1999թ. մայիսի 5-ին կնքված պայմանագրի կատարումը, որով Ինդոնեզիան և Պորտուգալիան համաձայնության էին եկել ՄԱԿ-ի վերահսկողությամբ անկախության հանրաքվեի անցկացմանը Արևելյան Թիմորում, որի դրական ելքին պետք է հաջորդեր ՄԱԿ-ի անցումային կառավարության ձևավորումը: Ուստի, ի տարբերություն Կոսովոյի, որի դեպքում պետք է լուծվեին գլխավորապես կարգավիճակի հետ կապված խնդիրներ՝ հաշվի առնելով մանդատում անորոշ «Էական ինքնավարության» սահմանումը և Կոսովոյի ժողովրդի անկախացման պահանջը, Արևելյան Թիմորի կառավարման մանդատը զգալիորեն մեծացնում էր

²⁵⁷ UN SC Resolution 1272 (1999), 25 October 1999, <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N99/312/77/PDF/N9931277.pdf>, 01.06.2019.

²⁵⁸ UN SC Resolution 1272..., para. 1.

առաքելության հաջող ավարտի հնարավորությունը, քանզի այն հետապնդում էր հստակ ձևակերպված նպատակ, այն է՝ անկախ պետականության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

Կոսովոյի միջազգային կառավարման մանդատում սահմանված նպատակներին հասնելու ուղղությամբ կարևոր էին Կոսովոյի Անցումային խորհրդի, ժամանակավոր վարչական համատեղ կառույցի ստեղծումը և 2001թ. հրապարակված «Կոսովոյի ժամանակավոր ինքնակառավարման սահմանադրական շրջանակները»: Առաջին երկուսը դրեցին համատեղ կառավարման հիմքերը, թեև օժտված էին սահմանափակ խորհրդատվական իշխանությամբ և ոչ մի կերպ չէին նվազեցնում միջազգային դերակատարներին վերապահված լիազորությունները²⁵⁹ : Ինստիտուցիոնալ աջման առումով հատկանշական էր 2001թ. ներկայացված «Սահմանադրական շրջանակները»²⁶⁰, որը երբեմն բնորոշվում է որպես «պայմանական սահմանադրություն»²⁶¹: Փաստաթուղթը պարունակում էր Կոսովոյի նախագահի, ուղղակիորեն ընտրվող վեհաժողովի և վարչապետի գլխավորությամբ կառավարության վերաբերյալ դրույթներ:

Անցումային ինստիտուտների ձևավորումը և 2002թ. կոալիցիոն կառավարության ստեղծումը թվում էր դրեցին ժողովրդավարական կառավարման հիմքերը: Ավելին, ինչպես նշում է Թենսին, միջազգային կառավարման այլ դեպքերում քաղաքական զարգացումների այդ փուլը, որպես կանոն, ազդարարել է արտաքին գործադիր իշխանության ավարտը և դրել իրական ինքնակառավարման սկիզբը: Մինչդեռ Կոսովոյի դեպքում ժամանակավոր ինստիտուտների ստեղծումը միայն որոշ չափով թուլացրեց արտաքին վերահսկողությունը և, արդյունքում, ներպետական ու միջազգային դերակատարների միջև լարվածության աճի պատճառ դարձավ: Դրա առավել ցայտուն դրսևորումներից էր խորհրդարանի փորձը՝ փոփոխելու Սահմանադրական շրջանակների դրույթները և կրճատելու Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչին

²⁵⁹ Lemay-Hebert N., Coerced Transitions in Timor-Leste and Kosovo: Managing Competing Objectives of Institution Building and Local Empowerment, Democratization, 2012, 19, 3, pp. 1-31.

²⁶⁰ Constitutional Framework for Provisional Self-Government in Kosovo, http://www.assemblykosova.org/common/docs/FrameworkPocket_ENG_Dec2002.pdf, 15.04.2018.

²⁶¹ Berdal M., Zaum D., Political Economy of Statebuilding: Power after Peace, US, Routledge, 2013, Tansey O., նշվ. աշխ.

վերապահված լիազորությունների ծավալը: Առաջարկվող փոփոխություններից առավել հատկանշական էին «Սահմանադրական շրջանակների» վերանվանումը «Կոսովոյի ժամանակավոր սահմանադրության», «Ինքնակառավարման ժամանակավոր ինստիտուտների» վերանվանումը «Կոսովոյի ժողովրդավարական ինստիտուտների», ինչպես նաև սահմանադրական դատարանի ներառումը դատական իշխանության կազմում: Այդուհանդերձ, գործընթացի անմիջապես սկզբում UNMIK-ը պարզ դարձրեց, որ Շրջանակները ենթակա չեն վերանայման, և արդյունքում որևէ փոփոխություն չիրականացվեց²⁶²:

Ուղղակի կառավարման հաստատման դեպքում հաշվետվողականության ընթացակարգերն ու մեխանիզմներն ունենառանցքային նշանակություն: Հաշվետվողականության տեսանկյունից առավել կարևոր ինքնավար ինստիտուտներից էր մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը: Վերջինս կարող էր ստանալ և հետաքննել բողոքներ մարդու իրավունքների խախտումների, ինչպես նաև առաքելության և ցանկացած այլ կենտրոնական կամ տեղական ինստիտուտի կողմից իշխանության չարաչափման գործողությունների վերաբերյալ: Սակայն, ինստիտուտի ստեղծումից երկու ամիս անց դրագործունեությունը մասնակիորեն արգելափակվեց «KFOR-ի և UNMIK-ի և Կոսովոյում դրանց անձնակազմերի կարգավիճակի, արտոնությունների ու անձեռնմխելիությունների վերաբերյալ» UNMIK-ի ընդունած որոշման արդյունքում²⁶³: Թեև հետագայում UNMIK-ն այդ ուղղությամբ ձեռնարկեց որոշ քայլեր, մասնավորապես, Մարդու իրավունքների խորհրդատվական խմբի ստեղծումը, այդուհանդերձ վերջինս ընդամենը երեք հոգուց բաղկացած միջազգային խորհուրդ էր, որի անդամներին ընտրում էր Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը²⁶⁴:

Կառավարման սկզբնական փուլում միջազգային և տեղի իշխանությունների հետաքրքրությունն ու շահերը մեծամասամբ

²⁶² Tansey O., նշվ. աշխ., էջ 134-138:

²⁶³ UNMIK/REG/2000/47 On the status, privileges and immunities of kfor and unmik and their personnel in kosovo, <http://www.unmikonline.org/regulations/2000/reg47-00.htm>.

²⁶⁴ Lemay-Hébert, State-Building from...

համընկնում էին, սակայն պետական ինստիտուտների կառուցման գործընթացի շրջանում երևան եկան այլ ընտրանքային տեսակետներ, որոնք ունեցան բացասական հետևանքներ հենց հասարակության համար: Դա առավել ցայտուն դրսևորվեց «նախ չափանիշներ, ապա կարգավիճակ» քաղաքականության առջնությունը, ինչը զգալիորեն հեղինակագրկեց UNMIK-ին²⁶⁵:

2003թ. դեկտեմբերին Կոսովոյի համար առաջադրվեցին մարդու իրավունքների և օրենքի գերակայության ոլորտի ու չափորոշիչներ, որոնց առաջընթացը պայմանավորելու էր տարածքի ապագա կարգավիճակի վերաբերյալ բանակցությունների մեկնարկը: Չնայած այդ պայմանականությունը որոշակիորեն ամրապնդեց ինքնակառավարման ժամանակավոր ինստիտուտների և UNMIK-ի համագործակցությունը, առաջընթացը գլխավորապես արհեստական էր, իսկ չափորոշիչներին բավարարելու հանձնառությունը՝ սահմանափակ: Կոսովոյի քաղաքական ինստիտուտները պետք է բավարարեին այնպիսի չափորոշիչներին, որոնք մեծամասամբ ոչ թե իրենց վերահսկողության ներքո էին, այլ՝ UNMIK-ի և Սերբիայի: Չուգահեռ կառույցների զինաթափումը, որոնք շարունակում էին ֆինանսավորվել Բելգրադի կողմից, տեղի դերակատարների պատասխանատվության շրջանակում չէր: Սոցիալական ձեռնարկությունների մասնավորեցումը և լիկվիդացիան շարունակում էր մնալ UNMIK-ի իրավասության շրջանակներում: Նույնը վերաբերում է նաև դատական համակարգի բարեփոխմանը, որը գտնվում էր UNMIK-ի Արդարադատության և Ոստիկանության բաղադրիչի վերահսկողության ներքո²⁶⁶: Սակայն, առավել մտահոգիչ էր այն, որ «նախ չափորոշիչներ, ապա՝ կարգավիճակ» ռազմավարությունը չէր կապում չափորոշիչների բավարարումը տարածքի հստակ քաղաքական կարգավիճակի հետ:

Չե տազոտողները մեծ մասամբ համակարծիք են, որ միջազգային համայնքի կիրառած «քաղաքական պայմանականության» սկզբունքը պատճառ դարձավ 2004թ. նոր բախումների ալիքի վերսկսմանը²⁶⁷:

²⁶⁵ Mulaj K., The Problematic Legitimacy of International-Led Statebuilding: Challenges of Uniting International and Local Interests in Post-Conflict Kosovo, Contemporary Politics, vol. 17, no. 3, 2011, pp. 241-256.

²⁶⁶ Knoll B., նշվ. աշխ.

²⁶⁷ Caplan R., Exit Strategies...; Knoll B., նշվ. աշխ.

Չնայած վերջինս հանկարծակիի բերեց միջազգային հանրությանը, դրա հավանականությունը կարելի էր կանխատեսել մի քանի պատճառներով: Կոսովոյի բնակչության շրջանում խոր դժգոհությունը՝ կապված տարածքի վերջնական կարգավիճակի անորոշության հետ, շարունակական տնտեսական լճացումը և Բելգրադի՝ Կոսովոյի որոշ հատվածներում քաղաքական վերահսկողությունն ամրապնդելու, նկրտումները տարածքը դարձնում էին հասուն նոր բախումների համար²⁶⁸: 2004թ. հունիսի հարցման արդյունքները ցույց տվեցին, որ Կոսովոյի բնակչության մեծամասնությունն, անկախ համայնքային պատկանելությունից, մարտյան դեպքերի պատասխանատվությունը բարդում է UNMIK-ի վրա²⁶⁹:

Անկախության ճանապարհին պատրաստված գրեթե բոլոր զեկույցներում ընդգծվում էր կարգավիճակի խնդրի լուծման և միջազգային ներկայության թուլացման անհրաժեշտությունը՝ *լայնամասշտաբ արտաքին վերահսկողության ներքո գործարկվող ժողովրդավարության սահմանափակ հնարավորությունների վրա* առանձնահատուկ կենտրոնացմամբ: Մասնավորապես, Գլխավոր քարտուղարի հատուկ բանագնաց Մարտի Ահտիսաարին Կոսովոյի կարգավիճակի վերաբերյալ իր Համապարփակ ծրագրում նշում էր, որ կարգավիճակի անորոշությունը դարձել է գլխավոր խոչընդոտ Կոսովոյի ժողովրդավարական զարգացման և պատասխանատվության ճանապարհին²⁷⁰: Հակամարտության կարգավորման ռազմավարության վերանայման արդյունքում 2008թ. հռչակվեց Կոսովոյի անկախությունը: Այն ճանաչել են ՄԱԿ անդամ պետություններին կեսից ավելին, ԵՄ 28 անդամ երկրներից՝ 23-ը, ՆԱՏՕ-ի 29 անդամ երկրներից՝ 25-ը: Միաժամանակ, հարկ է նշել, որ ճանաչման գործընթացը լիարժեք չի ավարտվել, քանզի երկիրը դեռևս ՄԱԿ անդամ պետությունն չէ:

Արևելյան Թիմորում միջազգային կառավարում (UNTAET) հաստատվեց ծանր մարդասիրական ճգնաժամը կանխելու նպատակով,

²⁶⁸ Failure to Protect: Anti-Minority Violence in Kosovo, March 2004, Human Rights Watch, 10, 6, July 2004.

²⁶⁹ Կոսովոյի ալբանացիների 73.5%, սերբերի 58.4%, այլ փոքրամասնությունների 58.3% (USAID/UNDP/RIINVEST 2004, 6):

²⁷⁰ Report of the Special Envoy of the Secretary-General on Kosovo's Future Status, UN Doc. S/2007/168, 26 March, 2007.

որը սրվեց անկախության հանրաքվեից հետո: Անվտանգության խորհուրդը ստեղծված իրավիճակը բնորոշեց որպես սպառնալիք միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը ²⁷¹: UNTAET-ի հաստատումը մասամբ նպատակ ունեցող վերականգնել միջազգային համայնքի պառակտված հեղինակությունը, քանզի Արևելյան Թիմորը գրեթե երկու տասնամյակ գտնվում էր Ինդոնեզիայի օկուպացման ներքո, որի վերջնակետը եղան 1999թ. զանգվածային սպանությունները, որոնք երբեմն բնորոշվում են որպես ցեղասպանություն ²⁷²:

Արևելյան Թիմորում հաստատված միջազգային կառավարումն ունեցող միջառք ընդհանրությունները UNMIK-ի հետ, թեև այս դեպքում ՄԱԿ-ը ոչ միայն պետք է ստեղծեր անկախ ինստիտուտներ, այլև լիովին նոր պետություն և դատական համակարգ՝ հաշվի առնելով տարածքի գաղութային անցյալը և գրեթե քառորդ դար տևած օկուպացիան: Առաքելությունն ի սկզբանե ստեղծվել էր վերահսկելու 1999թ. մայիսի 5-ին կնքված պայմանագրի կատարումը, որով Ինդոնեզիան և Պարտուգալիան համաձայնության էին եկել ՄԱԿ-ի կողմից վերահսկվող անկախության հանրաքվեի անցկացմանը Արևելյան Թիմորում, որի դրական ելքին պետք է հաջորդեր ՄԱԿ-ի անցումային կառավարության ձևավորումը: Ի տարբերություն Կոսովոյի, կառավարման մանդատը զգալիորեն մեծացնում էր առաքելության հաջող ավարտի հնարավորությունը, քանզի այն հետապնդում էր հստակ ձևակերպված նպատակ, այն է՝ անկախ պետականության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում: Ինչպես Կոսովոյի դեպքում, ՄԱԿ-ն այս դեպքում ևս ուներ այդ մարտահրավերին պատրաստվելու չափացանց կարճ ժամանակահատված: Դապառճառ դարձավ Կոսովոյի անցումային կառավարման համակարգի ուղղակի ներդրմանը Արևելյան Թիմորում՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության լիազորությունների ամբողջական վերապահմամբ ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչին ²⁷³: Չնայած իրավիճակն այս դեպքում բնորոշվում էր քաղաքական և անվտանգության ոլորտի ավելի քիչ

²⁷¹ UN SC Resolution 1272 (1999)...

²⁷² Stahn C., The Law and Practice...

²⁷³ UN SC Resolution 1272...

մարտահրավերներով էթնիկ թշնամանքի բացակայության պատճառով, առաքելությանը բախվել էր լուրջ խնդիրների՝ կապված ինքնակառավարման կարողության ներքին ձևավորման ու զարգացման հետ²⁷⁴:

Ուստի, ի տարբերություն Կոսովոյի, Արևելյան Թիմորում ժողովրդավարական հաստատության ներքին գործարկելու ներուժի ձևավորումն ընթանում էր քաղաքական կարգավիճակի որոշմանը զուգահեռ: 1272 (1999) բանաձևը, որի հիման վրա հաստատվեց կառավարումը, ողջունում էր 1999թ. օգոստոսի 30-ին Թիմորում տեղի ունեցած ինքնորոշման հանրաքվեի հաջող անցկացումը²⁷⁵ և ի գիտության ընդունում ՄԱԿ-ի հովանու ներքո անկախության քաղաքական կարգավիճակի անցման գործընթաց սկսելու ընտրությանը՝ որպես ժողովրդի ազատկամարտահայտության²⁷⁶:

Ինչպես Կոսովոյի կառավարման դեպքում, կարճ ժամանակ անց UNTAET-ստեղծեց Ազգային խորհրդատվական խորհուրդ տեղի դերակատարներին որոշումների ընդունման գործընթացում ներգրավելու համար: Սակայն այն ուներ միայն խորհրդատվական բնույթ, իսկ խորհրդի ստեղծման վերաբերյալ UNTAET-ի փաստաթղթում նշվում էր, որ «խորհուրդը որևէ կերպ չպետք է խոչընդոտի միջազգային վարչակազմի լիազորությունների իրականացմանը»²⁷⁷: Այդ ուղղությամբ UNTAET-ի ռազմավարության մեջ փոփոխություն եղավ 2000թ. Անվտանգության խորհրդի հատուկ ներկայացուցչի փոփոխությունից հետո: Վերջինս ներկայացրեց Թիմորի ներկայացուցչների հետ համատեղ կառավարման ծրագիր, որը հետագայում դարձավ «Առաջին անցումային կառավարություն»:
Այն կազմված էր Ազգային խորհրդից, Կաբինետից և Յատուկ ներկայացուցչի գրասենյակից²⁷⁸:

Անկախության նախապատրաստման գործընթացը սկսվեց 2001թ. օգոստոսի 30-ին Սահմանադիր ժողովի ընտրություններով՝ Արևելյան Թիմորի պատմության մեջ ժողովրդավարական

²⁷⁴ Կիրակոսյան Մ., Յեռնոնսֆլիկտային հասարակության ներուժ...

²⁷⁵ Գրանցվեց 98 տոկոս մասնակցության ցուցանիշ, որից 78.5 տոկոսը քվեարկեց անկախացման օգտին:

²⁷⁶ UN SC Resolution 1272...

²⁷⁷ REGULATION NO. 1999/2 on the Establishment of a National Consultative Council, 2 December, 1999, <https://peacekeeping.un.org/mission/past/etimor/untaetR/etreg2.htm>, 30.01.2019.

²⁷⁸ Lemay-Hebert N., Coerced Transitions...

ընտրությունը ներկայացնում է հաստատված առաջին ներկայացուցչական մարմինը, որի գլխավոր գործառույթն անկախ և ժողովրդավարական թիմորի սահմանադրության մշակումն էր²⁷⁹: Սահմանադրությունը ներդրել է 2002թ. մարտին 22-ին: 2002թ. մայիսի 20-ին հռչակվեց թիմորի անկախությունը այն պաշտոնապես դուրս եկավ չինքնակառավարվող տարածքների ցանկից և դարձավ ՄԱԿ-ի անդամ: 2002թ. վերջին այն արդեն ուներ ընտրված խորհրդարան, նախագահ և սահմանադրություն:

Անկախացման առաջին տարիներին ներպետական ինստիտուտներն անկարող էին հաղթահարել պետական կառավարման հետ կապված խնդիրները: Սոցիալ-տնտեսական առաջընթացին խոչընդոտում էին մի շարք գործոններ, այդ թվում՝ ժողովրդավարական մշակույթի ու պրակտիկայի իսպառ բացակայությունը, աղքատության, անհավասարության և գործազրկության մակարդակը, կրթության մատչելիության, խորհրդատվական և հաղորդակցական համապատասխան մեխանիզմների բացակայությունը և այլն²⁸⁰:

Պետական կառույցների դյուրաբեկությունը և ժողովրդավարացման գործընթացի ձախուղումն ակնհայտ դարձան 2006թ. առաջին կեսին բռնկված ռազմական բախումների ժամանակ, երբ զինված ուժերի ապստամբությունը վերաճեց պետական իշխանության տապալման փորձի: Անկայունության հիմքում ընկած էին ինչպես 1999թ. հաջորդած, այնպես էլ նախորդած իրադարձությունները: Ժողովրդավարական ինստիտուտների ստեղծումից զատ, առավել կարևոր է դրանք արդյունավետ գործարկելու ներուժի ձևավորումը, ինչն Արևելյան թիմորի դեպքում, հաշվի առնելով գաղութային անցյալը և 1999թ. անկախության հանրաքվեին հաջորդած ցեղասպանությունը, երկար ժամանակ է պահանջելու: Ամբողջատիրական ժառանգության և ինքնակառավարման փորձի բացակայության ազդեցությունն այստեղ հատկապես զգալի է:

Հարկ է նշել, որ գիտական աղբյուրներում, հատկապես մինչև 2006թ. ճգնաժամն, Արևելյան թիմորը հաճախ որակվում է որպես

²⁷⁹ UNTAET Regulation 2001/2 on the Election of a Constituent Assembly
²⁸⁰ Report of the Secretary-General on Timor-Leste pursuant to Security Council Resolution 1690 (2006), UN Doc. S/2006/628 of 8 August, 2006.

միջազգային խաղաղության հաստատման և պետության կառուցման առավել հաջողված դեպք²⁸¹։ Այդ տեսակետը հիմնավորելու համար գլխավորապես առաջ է քաշվում այն փաստարկը, որ ՄԱԿ-ը պետք է հիմքից ստեղծեր լիովին նոր պետություն և չկար անկախ պետականության որևէ նախադրյալ։ Ուստի, այն արդյունքները, որոնք գրանցվել են, այդ տեսանկյունից գնահատվում են բավարար։ Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ այդ գործընթացը տևական ժամանակ իրականացնում են միջազգային կազմակերպությունները՝ առանց ներպետական իշխանությունների լիարժեք ներգրավման, ապա այդ արդյունքներն այնքան էլ բավարար չեն։ 1999 թվականից ի վեր Արևելյան Թիմորում ՄԱԿ-ն իրականացրել է յոթ առաքելություն և, ինչն աննախադեպ է խաղաղապահ առաքելությունների պատմության մեջ։ Դա առաջ է բերել միջազգային աջակցությունից, այսպես կոչված, «կախվածությունը»։ Պատահական չէ, որ 2006թ. ճգնաժամից անմիջապես հետո Թիմորի նախագահը, ազգային խորհրդարանի նախագահը և վարչապետը ՄԱԿ գլխավոր քարտուղարից հայցեցին ՄԱԿ-ի ուստիկանական ուժերի տեղակայում տարածքում՝ նախքան ազգային ուստիկանությունը կկարողանա վերականգնել և վերականգնվել²⁸²։ 2006թ. ճգնաժամին հաջորդած ամենանշանակալի իրադարձությունը, որը խորհրդանշում էր ժողովրդավարցման ուղղությամբ Արևելյան Թիմորի առաջընթացը, 2007թ. երկու շրջանով անցկացված ընտրություններն էին, երբ առաջին անգամ 1999թ.-ից գործող ամենախոշոր կուսակցությունը՝ Ֆրետիլինը դարձավ ընդդիմություն²⁸³։ Ի տարբերություն քաղաքական կոշտ պայքարի նախորդ փուլերի՝ Արևելյան Թիմորում իրավիճակն այսօր հարաբերականորեն կայուն է։ 2006թ. ճգնաժամից հետո տեղի իշխանությունների՝ նավթի աճող պաշարների եկամտով խաղաղություն գնելու պրագմատիկ որոշման արդյունքում երիտասարդ պետությունը ստացավ համապատասխան շահույթաբաժին։

²⁸¹ Leach M., Kingsbury D., Introduction: East Timorese Politics in Transition, in Leach M., Kingsbury, D. (eds.), *The Politics of Timor-Leste: Democratic Consolidation after Intervention*, Ithaca, Cornell Southeast Asia Program Publications, 2013; Dal Poz A., 'Buying Peace' in Timor-Leste: Another UN-success Story?, *Peace Human Rights Governance*, vol. 2, no. 2, 2018, pp. 185-219.

²⁸² United Nations Integrated Mission in Timor-Leste, <http://www.un.org/en/peacekeeping/missions/past/unmit/background.shtml>.

²⁸³ Margesson Rh., Vaughn B., *East Timor, Political Dynamics, Development and International Involvement*, Congressional Research Service, June 17, 2009, p. 9.

Ընդհանուր առմամբ, ներկայումս նավթային ռեսուրսներով հարուստ շատ քիչ պետություններ են դա օգտագործում որպես «շնորհ» (օրինակ, Արաբական Միացյալ Էմիրությունները կամ Բոտսվանան նավթից ստացված եկամուտը ներդնում են ժամանակակից ենթակառուցվածքի և կրթության մեջ²⁸⁴): Այդուհանդերձ, «Նավթային արդյունաբերությունից կախվածությունը չի կարող լինել կայուն զարգացման հիմք երկարաժամկետ հեռանկարում, և նոր, այլընտրանքային լծակների զարգացման անհրաժեշտությունն ավելի քան երբևէ հրատապ է»²⁸⁵:

Ինչպես շատ հետզադուրային պետությունների դեպքում, Արևելյան Թիմորը բնորոշվում է, այսպես կոչված, քաղաքական և տնտեսական հիբրիդայնությամբ: Վերջինս ենթադրում է արևմտյան (մեծամասամբ՝ ազատական ինստիտուցիոնալ) կառավարման մոդելի և սոցիալական լեգիտիմություն վայելող, պատմության ու մշակույթի մեջ արմատավորված տեղական կառավարման պրակտիկայի համադրություն²⁸⁶ : Հետզադուրային երկրների մի մասը հաղթահարել է այդ մարտահրավերը, սակայն անկայուն հետկոնֆլիկտային միջավայրում այդ խնդիրներն ավելի խորն են ու ապակառուցողական: Այսօր Լիմոր Լեշթում կա համատարած հիասթափության և օտարման զգացում: Պատճառների թվում են աղքատության բարձր մակարդակը, անարդարության խորը զգացումը, քաղաքական կյանքի վտանգավոր բևեռացումը, գլխավորապես մայրաքաղաք Դիլիում կենտրոնացած կառավարության և գյուղական բնակչության միջև կապի խզումը, «անկախությունից» և «ազատությունից» անհրատեսական ակնկալիքները և, որն առավել վտանգավոր է, տեղի մշակույթի և համայնքային արժեքների արդյունավետ մարգինալիզացիան²⁸⁷:

²⁸⁴ Van der Ploeg F., Natural Resources: Curse or Blessing?, Journal of Economic Literature, vol. 49, no. 2, 2011, pp. 366-420.

²⁸⁵ Timor-Leste: Stability at What Cost?, International Crisis Group Report no. 246, 8 May, 2013, <https://www.crisisgroup.org/asia/south-east-asia/timor-leste/selfdetermination-and-peace-operations-timor-leste>, 25.07.2018.

²⁸⁶ Hameiri Sh., Lee J., Beyond Hybridity to the Politics of Scale: International Intervention and Local Politics, Development and Change, vol. 48, no. 1, 2017, pp. 54–77.

²⁸⁷ Brown M., Gusmao A., Peacebuilding and Political Hybridity in East Timor, Peace Review, vol. 21, no. 1, pp. 61-69.

Երկու դեպքերի միջազգային կառավարման ընթացքի վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև դրանք իրականացվել են լիովին տարբեր միջավայրերում, այդուհանդերձ կիրառվել է գրեթե նույն ռազմավարությունը, ինչ առավել պատկերավոր ներկայացված է Ադյունակ 1-ում: Նախ, ՄԱԿ գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչին վերապահվել է տարածքի ամբողջական ինքնիշխանություն, ապա տեղի բնակչության և իշխանությունների ճշունմների ադյունքում ստեղծվել են համատեղ կառավարման ինստիտուտներ, որոնց տրվել է միայն խորհրդատվական դերակատարություն: Հատկանշական է, որ եթե Կոսովոյի դեպքում տարածքի կառավարման լիարժեք կառավարում իրականացվել է մինչև 2008թ. անկախացման հռչակումը, ապա Արևելյան Թիմորի դեպքում անկախության հռչակումից հետո տևական ժամանակահատված նույնությամբ պահպանվել է արտաքին բաղադրիչը, ինչն իրավական տեսանկյունից վիճահարույց է: «Բոլոր համար միևնույն մեխանիզմը» սկզբունքի կիրառման արդյունքում երկու դեպքում էլ արձանագրվեց ռազմական բախումների վերսկսում. Կոսովոյի դեպքում՝ կարգավիճակի անորոշության, Արևելյան Թիմորի դեպքում՝ պետական ինստիտուտների դյուրաբեկության և արտաքին աջակցությունից «կախվածության» պատճառով: Այն հայտորեն, միջազգային կառավարման մոդելի՝ այդ երկու առանձնահատկությունների հիմքի վրա կառուցված լինելու դեպքում (մի դեպքում՝ հակամարտության կարգավորմանն աջակցության, մյուս դեպքում՝ պետության կառուցման գործընթացի վրա կենտրոնացում), հնարավոր կլիներ խուսափել նոր բախումներից: Միաժամանակ, քանի որ այս գործընթացի հաջողությունը կամ ձախողումը հնարավոր է գնահատել միայն միջազգային իշխանություններից տեղի իշխանությունների կառավարման ամբողջական լիազորությունների փոխանցումից և ինքնիշխանության վերականգնումից հետո²⁸⁸, աստեղծության հաջորդ ենթազխում փորձ է արվում պարզել, թե որքանով են այս պետությունները վերականգնել իրենց ինքնիշխանությունը: Դիտարկվում է նաև Բոսնիա և Հերցեգովինայի դեպքը, որն այս

²⁸⁸ Kirakosyan M., Challenges of Democratization under International Supervision...

Ենթագլխում չի ընդգրկվել այն պատճառով, որ ներկայացնում է միջազգային կառավարման առանձնահատուկ դեպք (առանձնահատկությունները ներկայացված են ստորև), որն ունի առանձին ուսումնասիրության կարիք:

Դե սք	Կառավարման իրավական հիմքեր և իրականացման սահմաններ	Համատեղ իշխանության ինստիտուցիոնալ աջակցում	Ժողովրդավարական ինստիտուտների կառուցում	Կարգավիճակի որոշում	Կարգավիճակի որոշումից հետո ինքնիշխանության վերականգնում	Զինված բախումների վերսկսում	Արտաքին վերահսկողության վերականգնում
Կոստվո	<p>Կողմերի համաձայնությունը և Անվտանգության խորհրդի՝ ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա ընդունված 1244 (1999) բանաձևը</p> <p>Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրականացում</p>	<p>Կոստվոյի անցումային խորհուրդ, ալեյի ու 2՝ Համատեղ ժամանակավոր վարչական կառույց (1999թ.)</p>	<p>2001 թ. «Սահմանադրական 2-րդ անակնետր» փաստաթղթի հիման վրա ժամանակավոր ինքնակառավարման ինստիտուտների ստեղծումը՝ Կոստվոյի վեհաժողովը, Կառավարությունը, դատական համակարգը</p>	<p>2008թ. փետրվարի 17-ին անկախության հռչակում</p>	<p>մասնակի</p>	<p>2004թ. մարտին զինված բախումներ (կարգավիճակի որոշումից առաջ)</p>	<p>2008թ. հաստատվեց Եվրոպական միության օրենսդրական գերակայության առաքելությունը Կոստվոյում, որի մանդատը գործում էր մինչև 2018թ. հունիսը:</p>
Արևելյան Թիմոր	<p>Կողմերի համաձայնությունը և Անվտանգության խորհրդի՝ ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա ընդունված 1272 (1999) բանաձևը</p> <p>Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրականացում</p>	<p>1999թ. դեկտեմբերի 2-ին ստեղծված Ազգային խորհրդատվական խորհուրդ</p>	<p>2000թ. ձևավորված Ազգային խորհուրդ, 2001թ. առաջին անցումային կառուցվածքը</p>	<p>2002թ. մայիսի 20-ին անկախության հռչակում</p>	<p>մասնակի</p>	<p>2006թ. բախումները Արևելյան Թիմորում</p>	<p>ՄԱԿ-ի աջակցության առաքելությունը (UNMISSET) (2002-2005), ՄԱԿ-ի ծառայությունը Արևելյան Թիմորում (UNOTIL) (2005-2006), ՄԱԿ-ի ինտեգրված առաքելությունը (UNMIT) (2006-2012)</p>

3.2. Միջազգային կառավարումը՝ որպես հետկոնֆլիկտային պետության կառուցման հնարավորություն. Բոսնիա և Հերցեգովինայի առանձնահատուկ դեպքը

Պետության կառուցումը կարելի է սահմանել որպես պետական կամ միջազգային դերակատարների նախաձեռնած փուլային գործընթաց, որն ուղղված է բարեփոխելու և ամրապնդելու այն պետությունների ինքնակառավարման կարողությունները, լեգիտիմությունը և ինստիտուտները, որոնցում դրանք լրջորեն խարխվել են կամ առհասարակ բացակայում են²⁸⁹ : Պետության ձևավորման և պետության կառուցման վերաբերյալ գրականության մեջ առանձնացվում են երեք առանցքային գործառնություններ, որոնք պետությունը պարտավոր է իրականացնել : Առաջին, պետությունը պարտավոր է երաշխավորել իր քաղաքացիների ներքին և արտաքին անվտանգությունը : Երկրորդ, պետությունը պարտավոր է իր քաղաքացիների տրամադրել հիմնական սոցիալական ծառայություններ : Երրորդ, քաղաքացիները պետք է ընկալեն պետությունը որպես լեգիտիմ և ներկայացուցչական²⁹⁰ : Այս նախապայմանների իրականացումն առանձնահատուկ բարդ է հետկոնֆլիկտային պայմաններում, երբ պահպանվում է կողմերի միջև թշնամանքն ու լարվածությունը, ամբողջությամբ կամ մասնակիորեն խարխված են պետության ենթակառուցվածքները, բանակցային գործընթացը փակուղում է կամ դրանում ներգրավված են տարբեր շահեր հետապնդող ուժեր և այլն : Թերևս դա է պատճառը, որ պետության կառուցման սահմանումների հիմքում դրա շարունակական, ոչ գծային և ասիմետրիկ բնույթն է²⁹¹ :

²⁸⁹ Fritz V., Menocal A., Understanding State-Building from a Political Economy Perspective: An Analytical and Conceptual Paper on Processes, Embedded Tensions and Lessons for International Engagement, report prepared for DFID's Effective and Fragile States Teams, Overseas Development Institute, 2007.

²⁹⁰ Raue J., Sutter P., Facets and Practices of State-Building, Leiden, Martinus Nijhoff Publishers, 2009; Milliken J., Krause K., State Failure, State Collapse, and State Reconstruction: Concepts, Lessons and Strategies, Development and Change, vol. 33, no. 5, 2002, pp. 753-774.

²⁹¹ Belloni R., Rethinking "Nation-Building": The Contradictions of the Neo-Wilsonian Approach to Democracy Promotion. The Whitehead Journal of Diplomacy and International Relations, 7, 2007, pp. 97-109; Rocha M., "State-building for peace" - A New Paradigm for International Engagement in Post-Conflict Fragile States? EUI Working Paper no. 34, 2010.

Սառը պատերազմի ավարտից հետո պետության կառուցումը՝ որպես զինված հակամարտության կամ պատերազմի արդյունքում ձևավորված պետություններում խաղաղության գործընթացները կայունացնելու միջոց, ավելի կարևորվեց երկու պատճառով: Նախ, մեծացավ պետության կառուցման գործընթացի պահանջարկը, քանզի 1980-ական թվականների վերջին և 1990-ական թվականների սկզբին, ազդարարվեց, այսպես կոչված, «սրոքսի պատերազմների»²⁹² ավարտը, երբ գերտերություններն այլևս հետաքրքրված չէին զարգացող աշխարհում միավորված պարտիզանական խմբավորումներին աջակցության գործում: Երկրորդ, ՄԱԿ-ն ընդլայնեց իր խաղաղապահ գործառույթների շրջանակը՝ ավելի հաճախ ներգրավվելով հետկոնֆլիկտային տարածքներում ոչ միայն ռազմական, այլ նաև քաղաքացիական բաղադրիչ պարունակող համընդգրկուն մանդատով²⁹³: Դրանով սկիզբ դրվեց խաղաղապահ առաքելության ներկրորդ սերնդին, որոնք ի տարբերություն առաջին սերնդի ավանդական խաղաղապահ առաքելության ներկրորդ, որոնցում ակտիվ էր բացառապես ռազմական բաղադրիչը, ուղղված էին անցումային փուլի դյուրացմանը՝ քաղաքացիական գործառույթների իրականացման ճանապարհով և *առանց ռազմական ուժի կիրառման հնարավորությունների մեծացմանը*²⁹⁴ : Միջազգային ներգրավվածության ընդլայնումը պայմանավորող խնդիրների թվում էին, ի թիվս այլոց, վիճահարույց ինքնիշխանությունները, պետության ձախողումը, քաղաքացիական հակամարտությունները և պետական իշխանության չարաչափումը: Վերջիններս փոխկապակցված են և հազվադեպ են հանդիպում մաքուր տեսքով:

20-րդ դարի վերջին ակնհայտ դարձավ նաև պետության կառուցման և խաղաղության պահպանման շրջանակներում ժողովրդավարացման գործընթացի առաջնայնությունը: Նույնիսկ ձևավորվեցին դրա տեսական հիմքերը՝ ժողովրդավարական խաղաղության տեսությունը: Վերջինիս արմատներն ընկած են

²⁹² Գերտերության կողմից հրահրված պատերազմ՝ առանց վերջինիս մասնակցության:

²⁹³ Raue J., Sutter P., Facets and Practices of State-Building, Leiden, Martinus Nijhoff Publishers, 2009, p. 60.

²⁹⁴ Kenkel K. M., Five Generations of Peace Operations: From the “Thin Blue Line” to “Painting a Country Blue”, Revista Brasileira de Política Internacional, vol. 56, no. 1, 2013, pp. 122-143.

Իմանուել Կանտի «Չավերժական խաղաղություն» աշխատության հիմքում, որում հեղինակը ժողովրդավարությունը բնորոշում է որպես միջազգային իրավունքի միակ հնարավոր աղբյուր²⁹⁵։ Դրա արդի միտումները ձևակերպեցին 1980-ական թվականների սկզբին՝ Մայքլ Դոյլեի գիտական աշխատանքներում։ Այդ տեսության համաձայն, ժողովրդավարական պետություններին հաջողվել է պահպանել տևական խաղաղություն ու անվտանգություն, և դրանց միջև պատերազմների սկսման հավանականությունը չափազանց փոքր է²⁹⁶։

Յեռյոն Բեյկոնսթեյնը հասարակություններում ժողովրդավարացման գործընթացներն արտաքին դերակատարների անմիջական ներգրավմամբ ունեն բարդ ընթացք և էապես տարբերվում են ժողովրդավարությանն անցման ավանդական ձևից։ Չնայած միջազգային կառավարումը կարող է զգալիորեն դյուրացնել ժողովրդավարացման ընթացքը՝ ժողովրդավարական ինստիտուտների ստեղծման, ժողովրդավարական արժեքների և մշակույթի ներմուծման ճանապարհով, այդուհանդերձ միջազգային դերակատարների կողմից պետական իշխանության տևական իրականացումը կարող է առաջացնել պառակտում արտաքին և ներպետական իշխանությունների միջև և, ավելին, պատճառ դառնալ նորանկախ պետության՝ որպես դյուրաբեկ պետության որակմանը (պետական կառավարման նվազագույն գործառնությունների անկարողություն)²⁹⁷։

Կրոնասանն առանձնացնում է արտաքին միջամտության պայմաններում ժողովրդավարացման գործընթացի առնվազն երեք մարտահրավեր²⁹⁸։

- Ժողովրդի ինքնիշխանությունը և ժողովրդի առջև կառավարության պատասխանատվությունը

²⁹⁵ Kant I., *Toward Perpetual Peace: A philosophical sketch*, translated by M. C. Smith, London, 1917.

²⁹⁶ Attia N., *The Democratic Peace Theory: Validity in relation to the European Union and 'Peaceful' Cooperation between United States and China*, *International Journal of Peace and Development Studies*, vol. 7, no. 2, May 2016, pp. 15-17.

²⁹⁷ Kirakosyan M., *Challenges of Democratization under International Supervision: The Case of Kosovo and East Timor*, *Democracy and Security*, 30 August, 2018, pp. 1-18; Tansey O., *Democratization without a State: Democratic Regime-Building in Kosovo*, *Democratization*, vol. 14, no. 1, 2007, pp. 129-150. <https://www.tandfonline.com/doi/full/10.1080/17419166.2018.1507823?scroll=top&needAccess=true>.

²⁹⁸ Croissant A., *International Interim Governments, Democratization, and PostConflict Peace-Building: Lessons from Cambodia and East Timor*, *Strategic Insights*, January 2006, vol. 5, no. 1, pp. 1-18, Croissant A., *The Perils and Promises of Democratization through United Nations Transitional Authority-from Cambodia and East Timor*, *Democratization*, vol. 15, no. 3, 2008, pp. 649-668.

Ժողովրդավարության առանցքային սկզբունքներից են: Այդ տեսանկյունից միջազգային կառավարումը հակասում է ժողովրդավարական լեգիտիմության պահանջներին: Ինքնիշխանությունը ժողովրդից դե ֆակտո (որոշ դեպքերում՝ դե յուրե) անցնում է արտաքին դերակատարներին: Միևնույն ժամանակ, ժամանակավոր կառավարությունը կրում է երկակի և երբեմն իրարամերժ պատասխանատվություն. դե յուրե պատասխանատվությունն առաքելությունը համակարգող, վերահսկող և ֆինանսավորող արտաքին Գերագույն մարմնի (ՄԱԿ-ի իրականացրած առաքելությունների դեպքում՝ Քարտուղարությունը և Անվտանգության Խորհուրդը), դե ֆակտո՝ երկրի էլիտայի և ժողովրդի առջև²⁹⁹:

- Չեղյուծված իկտային հասարակություններում ավտորիտարիզմից անցումը ժողովրդավարության տեղի ենունենում ծայրահեղ բարդ քաղաքական, սոցիալական և տնտեսական պայմաններում: Որպես կանոն, հանրային և հասարակական ենթակառուցվածքները թերզարգացած են, կան մարտահրավերներ կապված փախստականների և ներքին տեղահանված անձանց հետ, իշխանության ռեսուրսները կենտրոնացած են ռազմական հրամանատարների ձեռքում: Ավելին, պատերազմից թշնամական ընկալումները չթոթափած երկրների փորձը փաստում է, որ վերջիններս ի վիճակի չեն ապահովել կայուն զարգացում առանց լայնամասշտաբ արտաքին աջակցության: Դա հաճախ հանգեցնում է ռենտային տնտեսությունների (rent-seeking economy³⁰⁰) ծայրահեղ տեսակի առաջացմանը, որի դեպքում արտաքին կապիտալի կուտակումը և դրա փոխակերպումը տեղական կապիտալի վերածվում է տնտեսական գործունեության առավել գրավիչ ձևի: Վերջինս ունի ուժեղ բացասական հետևանքներ քաղաքական գործընթացի

²⁹⁹ Martin I., Mayer-Rieckh A., The United Nations and East Timor: From Self-Determination to State-Building, International Peacekeeping, vol. 1, no. 12, Spring 2005, pp. 125-145.

³⁰⁰ Del Castillo G., Rebuilding War-Torn States: Is the UN System up to Challenges, Future UN Development System, Briefing 8, July 2013.

թափանցիկության և ժողովրդավարական պատասխանատվության վրա:

- Այն դեպքում, երբ քաղաքացիական պատերազմի արդյունքում պառակտվել է գործող կառավարությունը, նախկին թշնամիները կարող են համաձայնության գալ հրադադարի կամ խաղաղության վերաբերյալ, սակայն ոչ այն հարցի՝ ով պետք է վերահսկի այդ խաղաղությունը: Այդ դեպքում առաջանում է անցումային իշխանության անհրաժեշտություն: Ուստի նույնիսկ այն դեպքում, երբ ժամանակավոր կառավարման հաստատումը հիմնված է պատերազմող կողմերի համաձայնության վրա, վերջինս կարող է պայմանավորված լինել քաղաքական ստատուս քվոն իրենց օգտին փոխելու անկարողությանը: Դա կարող է լինել սոսկ մարտավարական համաձայնություն: Արդյունքում, հետևյալի կտային հասարակություններում խաղաղ ընտրությունների «խաղաղությունները» շատ ավելի բարձր են, քան այլ երիտասարդ ժողովրդավարությունների դեպքում³⁰¹:

Բոսնիա և Հերցեգովինայի դեպքը լայնածավալ ու տևական, սոցիալական և քաղաքական վերակառուցման աննախադեպ օրինակ է, քանզի միասնական պետականության պահպանման նպատակով պետության երեք հիմնադիր համայնքների համար սահմանվեց առանձնահատուկ կարգավիճակ և ձևավորվեցին յուրահատուկ քաղաքական ինստիտուտներ և իրավական նորմեր, որոնք արժանի են առանձին ուսումնասիրության: Դեպքը եզակի նաև հետևյալ երեք չափումներով. ՄԱԿ-ի ուղղակի կառավարումից շեղում, Դեյթոնի խաղաղության համաձայնագրի ինստիտուցիոնալ շրջանակները և Մոսթար քաղաքի հատուկ կարգավիճակը³⁰²:

Ավելի քան երեք տարի տևած պատերազմից հետո 1995թ. ՆԱՏՕ-ի ռազմական միջամտությամբ ազդարարվեց Բոսնիական պատերազմի ավարտը: Պատերազմի ավարտն ազդարարած Դեյթոնյան խաղաղության

³⁰¹ Austin D., Democracy and Democratization, in W. Maley, C. Sampford and R. Thakur, eds., From Civil Strife to Civil Society: Civil and Military Responsibilities in Disrupted States, New York, United Nations University Press, 2003.
³⁰² Stahn C., նշվ. աշխ., էջ 287:

համաձայնագիրը հետապնդում էր երկու, միմյանց հետ բարդ համադրելի նպատակներ, այն է՝ ժողովրդավարական պետության ստեղծում և երեք էթնիկ խմբերի՝ բոսնիացիների, սերբերի և խորվաթների խաղաղ համագոյակցության ապահովում: Չամաձայնագրի հիմնադիր հայրերն այդ նպատակները նախատեսում էին իրականացնել երեք հիմնական մեխանիզմներով³⁰³

1. ծայրահեղ ապակենտրոնացված դաշնային պետության ստեղծում՝ իշխանության բաժանման՝ էթնիկ հիմքի վրա խարսխված, մեխանիզմներով և երեք էթնիկ խմբերին կոլեկտիվ իրավունքների տրամադրում,
2. մարդու իրավունքների ամուր երաշխիքների սահմանում և դրանց պահպանման համար համապատասխան մեխանիզմների ապահովում,
3. արտաքին վերահսկողության ինստիտուցիոնալացում:

Նախ, ՄԱԿ անվտանգության խորհուրդը հավանության արժանացրեց Դեյթոնյան համաձայնագիրը՝ 1031 (1995) բանաձևում հղում անելով ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխին, որի հիման վրա իրավասու է ձեռնարկել խաղաղության վերականգնման համար անհրաժեշտ միջոցներ³⁰⁴: Սահմանադրությամբ նախատեսվում էր, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան պետք է ուղղակիորեն կիրառվի Բոսնիայում և ունենա գերակայություն մնացած օրենքների նկատմամբ³⁰⁵: Բոսնիան պետք է շարունակեր մնալ կամ դառնար մարդու իրավունքների վերաբերյալ տասնհինգ հիմնական համաձայնագրերի կողմ:

Չամաձայնագրի արդյունքում տարածքը բաժանվեց երկու ուժեղ ենթամիավորումների՝ Սերբական Չանրապետություն և Բոսնիա և Չերգեգովինայի Դաշնություն, և սահմանափակ լիազորություններով օժտված թույլ կենտրոնական

³⁰³ Stahn C., նշվ. աշխ., էջ 289-290:

³⁰⁴ UN SC Resolution 1031 (1995) on implementation of the Peace Agreement for Bosnia and Herzegovina and transfer of authority from the UN Protection Force to the multinational Implementation Force (IFOR), 15 December, 1995, <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N95/405/26/PDF/N9540526.pdf?OpenElement>.

³⁰⁵ The General Framework Agreement, *supra* (note 25), Annex IV, Art. II/2.

կառավարություն: Ինչպես Կառլ Բիլդտն է որակում, Բոսնիան դարձավ «աշխարհի առավել ապակենտրոնացած պետությունը»³⁰⁶, որը կազմված է մեկ պետությունից, երկու ենթամիավորումներից, երեք ժողովուրդներից, չորս միլիոն բնակչությունից և կառավարման հինգ օղակներից՝ տասնհինգ վարչապետների ու կառավարությունների գլխավորությամբ³⁰⁷: Թեև առաջին շրջանում այդ բաժանումն օգնեց պահպանել երկրի տարածքային միասնականությունն ու ամբողջականությունը՝ հնարավորություն տալով սկսել վերակառուցման գործընթացը, սակայն դա ավելի խորացրեց Բոսնիայի հասարակության ներսում առկա ներքին պառակտումը³⁰⁸: Երեք հիմնադիր ժողովուրդների համար հավասար ներկայացուցչականության ապահովման ճանապարհով գործարկվող ժողովրդավարական պետության ստեղծումը դարձավ ոչ թե հիմնական խթան, այլ խոչընդոտ այդ ճանապարհին: Բանն այն է, որ Բոսնիա և Հերցեգովինայի Սահմանադրության նախաբանում որպես երեք «հիմնադիր ժողովուրդներ» ճանաչվում են բոսնիացիները, խորվաթները և սերբերը, Դաշնության Սահմանադրության մեջ՝ միայն բոսնիացիները և խորվաթները, իսկ Սերբական Հանրապետության Սահմանադրության նախաբանում նշվում է սերբ ժողովրդի ինքնորոշման անխախտելի իրավունքը:

Ստեղծված պայմաններում առաջացել էր միջազգային համայնքի լայն ներգրավվածության անհրաժեշտությունն ինչպես երկրի ճակատագիրը միայնակ տնօրինելու անկարողության և Սահմանադրության մեջ առկա վիճահարույց դրույթների, այնպես էլ, անցումային երկրներում հաճախ հանդիպող, այսպես կոչված, «մանկական հիվանդությունների» պատճառով, որոնք առավել սրվում են գինված հակամարտությամբ պայմանավորված ահռելի տնտեսական վնասի և սոցիալական ճգնաժամի հետևանքով³⁰⁹:

³⁰⁶ Bildt C., *Peace Journey: The Struggle for Peace in Bosnia*, London, Weidenfeld and Nicolson, 1998.

³⁰⁷ Belloni R., *State Building and International Intervention in Bosnia*, US, Routledge, 2007, p. 44.

³⁰⁸ International Crisis Group, *Is Dayton failing?*, Bosnia Four Years After the Peace Agreement, ICG Balkans Report No. 80, 28 October 1999, <https://www.crisisgroup.org/europe-central-asia/balkans/bosnia-and-herzegovina/dayton-failing-bosnia-four-years-after-peace-agreement>, 04.10.2018.

³⁰⁹ Ադեմովիչ Ն., Անցումային և հետպատերազմյան սահմանադրականությունը Բոսնիա և Հերցեգովինայում՝ միջազգային վերահսկողության ներքո. պետակա՞ն, թե՞ միջազգային ձախողում, Հայկական քաղաքագիտական հանդես, 2 (4), 2015, էջ 5-24:

Դեյ թոնյ ան համաձայնագրի 4-րդ հավելվածի համաձայն, Բոսնիա և Հերցեգովինայի սահմանադրությունը համաձայնագրի անբակտելի մաս է: Հատկանշական է, որ սահմանադրական ժողովրդավարության հիմքերը բազմիցս վիճարկվել են, քանզի Սահմանադրությունն ուժի մեջ մտավ որպես միջազգային համաձայնագրի մի մաս դրա ստորագրումից անմիջապես հետո՝ առանց վավերացման կամ համաժողովրդական քվեարկության: Բոսնիայի պաշտոնական ներկայացուցիչները՝ Բոսնիա և Հերցեգովինայի Դաշնությունը և Սերբական Հանրապետությունը հավանության արժանացրեցին սահմանադրության տեքստը՝ կից հայտարարությամբ: Ուստի, ինչպես նշում է Ադեմովիչը, \$որմալ տեսանկյունից կարելի է նույնիսկ պնդել, որ Բոսնիայի Հանրապետությունը՝ որպես միջազգայնորեն ճանաչված պետություն, սահմանադրության տեքստը ձևավորեց իր տարածքի մի մասի վրա փաստացի վերահսկողություն սահմանած այլ պտոհ խմբերի հետ³¹⁰:

Համաձայնագրի քաղաքացիական բաղադրիչի իրականացման համար պատասխանատու էին երկու խոշոր կազմակերպություններ (ՄԱԿ, ԵԱՀԿ), ինչպես նաև Համաձայնագրի հիման վրա ստեղծված Բարձրագույն ներկայացուցիչի ինստիտուտը: Վերջինս ad hoc միջազգային ինստիտուտ է, որը ևս պատասխանատու է համաձայնագրի քաղաքացիական բաղադրիչի համար ³¹¹ : Բարձրագույն ներկայացուցիչն իրականացնում էր համատեղ կառավարում ոչ միայն գործող տեղի իշխանությունների հետ, այլև այնպիսի ինստիտուտների հետ, ինչպիսիք են Մարդու իրավունքների պալատը, Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը և, որ առավել կարևոր է, Բոսնիայի Սահմանադրական դատարանը ³¹²: Միաժամանակ, Բարձրագույն ներկայացուցիչն տրամադրված էր իրավունքները և դրանց իրականացումն, ըստ Դեյ թոնյ ան համաձայնագրի 10-րդ հավելվածի, Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերի և Բոննի հռչակագրի, ենթակա չէին սահմանադրական դատարանի վերանայմանը:

³¹⁰ Նույն տեղում:

³¹¹ Office of the High Representative, official webpage, http://www.ohr.int/?page_id=1139.

³¹² Stahn C., International Territorial Administration in the Former...

Ի սկզբանե նախատեսվում էր մեկ տարի տևողությամբ միջազգայնորեն վերահսկվող անցումային շրջան, որը պետք է ավարտվեր 1996թ. սեպտեմբերին կենտրոնական և տարածքային մարմինների ընտրություններից հետո, սակայն դրանց հաջող անցկացումից հետո միջազգային կառավարման մանդատը երկարացվեց ևս երկու տարով՝ ինստիտուտների կայացման գործընթացի անվան ներքո, իսկ 1997թ. դեկտեմբերին՝ անորոշ ժամկետով: Հատկանշական է, որ Դեյթոնյան համաձայնագրով հստակ չեն սահմանվում նոր պետության միջազգային կառավարման մեխանիզմների կամ միջազգային մանդատի ընդլայնման հարցերը: Ուստի, ինչպես իրավացիորեն նշում է Չենդլերը, համաձայնագիրը կոչտ է, երբ այն վերաբերում է Բոսնիայի ինքնակառավարմանը և բավական ճկուն՝ միջազգային դերակատարներին տրամադրվող լիազորությունների տեսանկյունից³¹³: Այդ ճկունությունն առավել ցայտուն դրսևորվեց Բարձրագույն ներկայացուցչի լիազորությունների ընդլայնման հնարավորություններով, մասնավորապես, 1997թ. Բոսնի հռչակագրի³¹⁴ ընդունումից հետո, որով միջազգային իշխանություններին հնարավորություն էր տրվում անկախ պետության նկատմամբ իրականացնել գործադիր և օրենսդիր լայնածավալ վերահսկողություն: Ընտրված խորհրդարանները և կառավարությունները գործում էին, սակայն Բարձրագույն ներկայացուցչին իրավասու էր չեղարկել դրանց ընդունած որոշումները: 1997-2008թ. Բարձրագույն ներկայացուցչին ազատ է արձակել 190 քաղաքական գործիչների ու այլ պաշտոնյաների և ընդունել 850 որոշում³¹⁵:

2000-ական թթ. Բարձրագույն ներկայացուցչի ինստիտուտի աշխատանքներում ներգրավվեց նաև ԵՄ-ն՝ ներկայացնելով ճանապարհային քարտեզ՝ որպես Բոսնիայի համար Կայունացման և ասոցացման ծրագրի ուղղությամբ առաջին քայլ: Փաստաթուղթը սահմանում էր 18 նախապայման, որոնք բավարարելու դեպքում հնարավոր կլիներ սկսել բանակցություններ Կայունացման և

³¹³ Chandler D., State-Building in Bosnia: The Limits of “Informal Trusteeship”, International Journal of Peace Studies, vol. 11, no. 1, 2006, pp. 17-38.

³¹⁴ PIC Bonn Conclusions, 12/10/1997 PIC Main Meeting Bonn, <http://www.ohr.int/?p=54137>, 10.04.2019.

³¹⁵ Gromes Th., A Case Study in “Institutionalization before Liberalization”: Lessons fro Bosnia and Herzegovina, Journal of Intervention and Statebuilding, vol. 3, no. 1, 2009, pp. 93-114.

ասոցացման համաձայնագրի վերաբերյալ: Դրանք վերաբերում էին ընտրություններին, պետական ինստիտուտներին, քաղաքացիական ծառայությունը, դատական իշխանության, սահմանային ծառայություններին և այլն³¹⁶: Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ 2000 թվականից սկսած պետության կառուցումը \$որմալ առումով կապված էր ԵՄ-ին անդամակցության գործընթացի հետ, քանզի ակնկալվում էր, որ կազմակերպությանն անդամակցության հեռանկարը խթան կստեղծի էթնիկ խմբերի առաջնորդների համար մի կողմ դնելու իրենց հակասությունները և աշխատելու ընդհանուր եվրոպական նախագծի ուղղությամբ:

Դեյթոնի ձևավորած ինստիտուցիոնալ շրջանակի փոփոխության հարցի վերաբերյալ բանավեճերն ի սկզբանե եղել են պետության կառուցման գործընթացի հիմքում: Խնդիրն էլ ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ տեղական ազգայնական կուսակցությունները, քաղաքացիական հասարակության խմբերը և միջազգային կազմակերպություններն ունեն տարբեր տեսակետներ սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ: Քննարկվում էին չորս հիմնական տարբերակներ՝ ենթամիավորումների վերացում և դրանց փոխարինում «մեկ մարդ, մեկ ձայն» ժողովրդավարական կառուցվածքով, երկրի «կանտոնիզացում», երեք ենթամիավորումների ստեղծում և դեյթոնյան համաձայնագրի ներքին բարեփոխումների գործընթաց, ինչին առավել հակված էր միջազգային համայնքը՝ ի դեմս Բարձրագույն ներկայացուցչի ինստիտուտի³¹⁷:

2006թ. սահմանադրական բարեփոխումների ձևախոսումը համընկավ վերանայված միջազգային ռազմավարության հետ, որի հիմքում ընկած էր Բոննի լիազորություններից հրաժարումը: Որպես դրա անմիջական հետևանք, 2006թ. Խաղաղության համաձայնագրի իրականացումը վերահսկող խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), որի ներքո գործում է Բարձրագույն ներկայացուցչիչը, հայտարարեց 2007թ. հունիսին Բարձրագույն ներկայացուցչի ինստիտուտի փակման մասին: Դրա հիմնական նպատակն էր կողմերին շահագրգռել

³¹⁶ Road Map 2000, Steps to be taken by Bosnia and Herzegovina to Prepare for a Launch of a Feasibility Study, <https://www.esiweb.org/pdf/bridges/bosnia/EURoadMap.pdf>, 16.02.2019

³¹⁷ Belloni R., նշվ. աշխ., էջ 53-54:

ավելի ակտիվ ներգրավվելու բարեփոխումների գործընթացում: Սակայն այդ շրջանում ոչ միայն որևէ առաջընթաց չգրանցվեց նախապայմանների բավարարման ուղղությամբ, սահմանադրական բարեփոխումների և Կայունացման ու ասոցացման համաձայնագրի ստորագրման գործընթացի ուղղությամբ, այլ նաև աճեց միջէթնիկ լարվածությունը: Ընդհանուր առմամբ, 2006-2012թթ. միջազգային ներգրավվածության ձախողումը, որը հիմնականում ուղղված էր սահմանադրական բարեփոխումների իրականացմանը, պետք է դիտարկել հետդեյթոնյան նոր քաղաքական իրողությունների համատեքստում, երբ Դեյթոնն այլևս չէր համարվում անխախտ համաձայնագիր: Դեյթոնի վիճարկումը 2006 թվականից սկսած կողմերին հնարավորություն տվեց բացահայտ և համակարգված կերպով խարխլելու համաձայնագրի հիմքերը և միաժամանակ օգտագործելու պետության կառուցման գործընթացը տարբեր էթնիկ խմբերի «ազգայնական օրակարգերը» կյանքի կոչելու համար: Սահմանադրական փոփոխությունների շուրջ բանակցությունների տապալումն էլ ավելի նվազեցրեց կուսակցության առաջնորդների շրջանում քաղաքական վստահության մակարդակը³¹⁸:

2008թ. փետրվարին Բոսնիայում Բարձրագույն ներկայացուցչի գրասենյակի փակման համար խորհուրդն առաջ քաշեց երկու նախապայման՝ ԵՄ-ի հետ Կայունացման և Ասոցացման համաձայնագրի կնքումը, ինչպես նաև խորհրդի՝ Բոսնիայում տիրող իրավիճակի վերաբերյալ դրական գնահատականը: Եվս մեկ չգրված նախապայման է Սահմանադրության բարեփոխումը՝ 2009թ. դեկտեմբերի ՄԻԵԴ-ի որոշման համապատասխանությամբ:

ՄԻԵԴ-ի վերին պալատի 2009թ. վճռում «Սեյդիչն ու Ֆինցին ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի»³¹⁹ զործի առնչությամբ՝ Դատարանը սահմանում էր, որ Բոսնիայի Սահմանադրությունը չի համապատասխանում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային և ունի վերանայման կարիք: Հայցվորներն ունեին ռոմա և հրեական ծագում, զբաղեցնում էին կարևոր պետական

³¹⁸ Sebastian S., *Post-War Statebuilding and Constitutional Reform in Divided Societies: Beyond Dayton in Bosnia*, US, Palgrave Macmillan, 2014, pp. 146-149.

³¹⁹ Judgement of European Court of Human Rights, *CASE OF SEJDIĆ AND FINCI v. BOSNIA AND HERZEGOVINA*, Applications nos. 27996/06 and 34836/06, 22 December, 2009, <file:///C:/Users/Admin/Downloads/001-96491.pdf>, 10.02.2019.

պաշտոններ, սակայն զրկված էին իրենց թեկնածու թյունը դնելու խորհրդարանական ընտրություններում, քանզի չէին պատկանում Սահմանադրությամբ ամրագրված հիմնադիր ժողովուրդների թվին: Դատարանը նշում էր, որ «երբ վիճարկված սահմանադրական դրույթները գործի դրվեցին, դրանք նախատեսված էին ցեղասպանությամբ և էթնիկ գտումներով ուղեկցվող սուր հակամարտությանը վերջ դնելու համար: Հակամարտության բնույթն այնպիսին էր, որ խաղաղության ապահովման համար անհրաժեշտ էր երեք «հիմնադիր ժողովուրդների» հավանությունը: Դրանով էր բացատրվում այլ համայնքների բացակայությունը խաղաղության բանակցությունների ժամանակ և հետկոնֆլիկտային հասարակության մեջ «հիմնադիր ժողովուրդների» միջև արդյունավետ իրավահավասարության հաստատումը ³²⁰ : Այդուհանդերձ, Դատարանը չէր կարող չդիտարկել Դեյթոնյան համաձայնագրից հետո Բոսնիա և Հերցեգովինայում տեղի ունեցած դրական փոփոխությունները, մասնավորապես, 2005թ. հակամարտության նախկին կողմերը զիջեցին զինված ուժերի նկատմամբ իրենց ունեցած վերահսկողությունը և այդ ուժերը վերածեցին փոքր պրոֆեսիոնալ բանակի, 2006թ. Բոսնիա-Հերցեգովինան միացավ ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրին, 2008թ. երկիրն ստորագրեց ու վավերացրեց Եվրոպական միության հետ Կայունացման ու անոցացման համաձայնագիրը, 2009թ. մարտին առաջին անգամ հաջողությամբ փոփոխեց պետական Սահմանադրությունը և երկու տարի ժամկետով ընտրվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ³²¹:

Ուստի, կարելի է արձանագրել, որ միջազգային վերահսկողությունից դուրս գալու համար Բոսնիան բավարարել է առաջին նախապայմանը՝ ԵՄ-ի հետ Կայունացման և Անոցացման համաձայնագրի կնքումը, իսկ երկրորդ նախապայմանի բավարարումը նախատեսվում է, որ պետք է հաջորդի երրորդ՝ Սահմանադրության բարեփոխման գործընթացը հաջող ավարտելու, նախապայմանին:

Քանզի Կոսովոյի, Արևելյան Թիմորի և Բոսնիա և Հերցեգովինայի դեպքում միջազգային կառավարումը կիրառվել է

³²⁰ Նույն տեղում, 45-րդ կետ:

³²¹ Նույն տեղում, 47-րդ կետ:

աննախադեպ և համընդգրկուն ծավալով (ռազմական և քաղաքացիական բաղադրիչների կիրառմամբ) և միջազգային իշխանությունները տևական ժամանակահատված ուղղակիորեն ներգրավվել են պետակաշինության և ժողովրդավարացման գործընթացներում, վերջիններիս արդյունավետությունը գնահատելու համար աշխատանքում փորձ է արվում ներկայացնել այդ երեք պետությունների ինքնիշխանության վերականգնման աստիճանը երեք չափումներում՝ ներպետական, միջազգային-իրավական և վեսթֆալյան (աղյուսակ 1):

Ինքնիշխանության ձև	Կոստվոյի Յանրաբնակչության նուն	Արևելյան Դեմոկրատական Յանրաբնակչության նուն	Թիմորի Բոսնիան Յերցեգովինա
<p>Ներպետական³²²</p>	<p>Կոստվոն ունի թույլ պետությանը բնորոշ հատկանիշներ. չկայացած, թույլ ինստիտուտներ, կոռուպցիայի և գործազրկության բարձր մակարդակ, իրավունքի և արդարադատության ոլորտներում անկախ խնդիրներ, կառավարության և ընդդիմության միջև շարունակական քաղաքական բևեռացում և այլն: Դրական առաջընթաց է գրանցվել ընտրության և կազմակերպման և անցկացման գործընթացում: Մասնավորապես, անկախացման հռչակումից ի վեր Կոստվոյում երրորդ անգամ անցկացված 2017թ. խորհրդարանական ընտրությանը գնահատվել են որպես հարաբերականորեն արդար և թափանցիկ³²³:</p>	<p>2017թ. Արևելյան Թիմորում անցկացվեցին մրցակցային ընտրության ներքին իրականացվեց իշխանության խաղաղ փոխանցում, սակայն ժողովրդավարական ինստիտուտները շարունակում են մնալ դյուրաբեկ: Դատական համակարգի անկախությանը և դատական իշխանության պատշաճ իրականացումը խթանող էլ են ինքնակառավարման թույլ կարողությունների, ինչպես նաև քաղաքական ազդեցության հետևանքով: Իշխանությանը կենտրոնացած է մի քանի էլիտաների ձեռքում՝ այդպիսով մեծացնելով կոռուպցիոն ռիսկերը: Յակակոռուպցիոն մարմինները չունեն բավարար</p>	<p>Բոսնիա և Յերցեգովինան շարունակում է մնալ ծայրահեղ ապակենտրոնացված պետության՝ խորակաս սահմանադրությամբ: Եթնիկ փոքրամասնության ներքին իրավունքները շարունակաբար խախտվում են: Կոռուպցիան դարձել է լուրջ մարտահրավեր: Դատական համակարգի բարեփոխման ուղղությամբ արձանագրվել է որոշ առաջընթաց, սակայն գործընթացն ընթանում է դանդաղ տեմպերով³²⁵:</p>

³²² Ներպետական ինքնիշխանության գնահատման համար մեծամասամբ հիմք են հանդիսացել Եվրոպական հանձնաժողովի և Ֆրիդոմ Յուրաթիվ զեկուլյուցները:

³²³ Freedom in the World 2018, <https://freedomhouse.org/report/freedom-world/2018/kosovo>.

³²⁵ Freedom in the World 2018, Report on Bosnia and Herzegovina, <https://freedomhouse.org/report/freedom-world/2018/bosnia-and-herzegovina>; European Commission, Bosnia and Herzegovina 2018 Report, SWD(2018) 155, Strasbourg, 17.04.2018.

		<p>Ֆինանսավորում արդյունավետ գործելու համար: Թեև Լրատվամիջոցների ազատությունը երաշխավորված է սահմանադրությամբ, այդուհանդերձ դրանք ենթարկվում են քաղաքական ճնշումների³²⁴:</p>	
<p>Միջազգային-իրավական</p>	<p>Կոսովոյի Չանրապետության անկախությունը հռչակվել է 2008թ. փետրվարի 17-ին: Այն ճանաչել են 193 ՄԱԿ անդամ պետություններից 104-ը, 28 ԵՄ անդամ պետություններից 23-ը, 29 ՆԱՏՕ անդամ պետություններից 25-ը: ՄԱԿ անդամ այլ պետությունները, որոնց թվում են ՄԱԿ ԱԽ-ի երկու մշտական ներկայացուցիչներ՝ ՉԺՉ-ն և ՌԴ-ն, կամ հրաժարվել են, կամ ձեռնպահ են մնացել ճանաչել Կոսովոյի անկախությունը: Այդուհանդերձ, Լինելով բամպթիվ ՄԱԿ անդամ պետությունների կողմից ճանաչված, Կոսովոն ունի այդ պետությունների հետ սերտ հարաբերություններ հաստատելու հնարավորություն, դիվանագիտական և հյուպատոսական առաքելությունների³²⁶: Կոսովոն Չամաշխարհային բանկի,</p>	<p>Արևելյան Թիմորի անկախությունը հռչակվել է 2002թ. մայիսի 20-ին: Նույն թվականին երկիրը դարձել է ՄԱԿ-ի 191-րդ անդամ պետությունը:</p>	<p>Բոսնիա և Հերցեգովինայի անկախությունը հռչակվել է 1992թ. ապրիլին: Երկիրը ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների անդամ է: ԵՄ անդամ դառնալու հնարավոր թեկնածուներից է:</p>

³²⁴ Freedom in the World 2018, Report on Timor Leste, <https://freedomhouse.org/report/freedom-world/2018/timor-leste>.

³²⁶ Պետրոսյան Վ., Ազգերի ինքնորոշման հիման վրա ձևավորված պետությունների կայացման խնդիրն ու կապը միջազգային ճանաչման հետ, Չայկական քաղաքագիտական հանդես, 2 (8), 2017, էջ 31-64:

	Արժույթի միջազգային հիմնադրամի և մի քանի այլ միջազգային կազմակերպությունների անդամ է ³²⁷ :		
Վեսթֆալյան	2008թ. անկախություն հռչակումից հետո միջազգային համայնքի ներգրավվածությունը Կոսովոյում ստացավ արտաքին մոնիտորինգի և խորհրդատվության ձև: Եվրոպական միությունը փոխարինեց ՄԱԿ-ին զգալիորեն սահմանափակ մանդատով, որը հիմնականում վերաբերում է իրավունքի գերակայության, ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտներին: Առաքելության մանդատը երկարացվել է մինչև 2020թ. հունիսի 14-ը: Այն շարունակելու է աջակցել իրավական ինստիտուտներին և պարտավորվել է գերծ է մնալ քաղաքական միջամտությունների ³²⁸ :	ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը դուրս են բերվել Արևելյան Թիմորից 2012թ. դեկտեմբերին՝ երկու հաջող ընտրությունների անցկացումից հետո վերջ դնելով ՄԱԿ-ի տասներեքամյա ներկայությունը:	Բոսնիայում շարունակում է գործել Բարձրագույն ներկայացուցչի ինստիտուտը, քանի դեռ երկիրը չի բավարարել դրա փակման հիմնական նախապայմաններին:

³²⁷ Emini A., Marleku A., The Prospects of Membership in International Organizations: The Case of Kosovo, Acta Universitatis Danubius. Relationes Internationales, vol 9, no 2, 2016, pp. 172-181.

³²⁸ EULEX New Mandate, EULEX Press Releases, <https://www.eulex-kosovo.eu/?page=2,10,836>, 10.04.2019.

Ուստի կարելի է արձանագրել, որ ներպետական ինքնիշխանության արդյունավետ գործարկման, այն է՝ ինքնակառավարման ներուժի ձևավորման և զարգացման տեսանկյունից, բոլոր երեք դեպքերը ձախողվել են: Միջազգային իշխանությունների տնական ներկայությունն այդ երկրներում ոչ միայն հանգեցրել է արդյունավետ կառավարման հետ կապված խնդիրների առաջացման, այլև դրանց՝ որպես դյուրաբեկ կամ ձախողված պետությունների որակմանը: Ներպետական ինքնիշխանության ոչ արդյունավետ իրականացումը պայմանավորող գործոնների շարքում կարևոր է առանձնացնել նաև հասարակության պատմական ժառանգությունը՝ էթնիկ բաժանումներ, թույլ քաղաքացիական հասարակություն, կառավարման ոչ պատշաճ համակարգ և այլն: Միաժամանակ, հարկ է նաև ընդգծել, որ ժողովրդավարական կամ ավտորիտար ավանդույթները լիովին կարծրացած չեն: Դրանք կարող են թուլանալ կամ ամրապնդվել ավելի ուշ ձևավորված պատմական փորձի արդյունքում: Մեկ այլ կարևոր խնդիր է հաշտեցման գործընթացների տապալումը, ինչն առավել ակներև է Բոսնիա և Հերցեգովինայի դեպքում, որտեղ խնդրի լուծման հիմնական բանալին սահմանադրական փոփոխություններն են: Թեև առաջին շրջանում Սահմանադրությունը հնարավորություն է տվել դուրս գալու հետպատերազմյան ծանր իրավիճակից, այսօր այն դարձել է խոչընդոտ պետության լիարժեք գործարկման համար և «լավ պատրվակ» շարունակական միջազգային ներկայության արդարացման համար:

Միջազգային-իրավական ինքնիշխանության տեսանկյունից Արևելյան Թիմորը և Բոսնիա և Հերցեգովինան միջազգային իրավահարաբերությունների լիարժեք մասնակիցներ են, մինչդեռ Կոսովոն դեռևս այդ գործընթացում է, քանի դեռ չի դարձել ՄԱԿ-ի անդամ, ինչի համար անհրաժեշտ է ՄԱԿ Անվտանգության խորհրդի տասնհինգ անդամ պետություններից առնվազն իննի համաձայնությունն՝ առանց հինգ մշտական անդամներից որևէ մեկի վետոյի կիրառման: Կոսովոյում միջազգային իրավական լիարժեք ինքնիշխանության բացն է ապես խոչընդոտում է ինքնիշխանության

մյուս ձևերի արդյունավետ գործարկմանը, քանզի իրական ինքնիշխանության իրականացման նախապայմանն է:

Միաժամանակ, հարկ է նաև նշել, որ միջազգային կառավարման արդյունավետությանը և պետական ինստիտուտների գործարկումը հնարավոր է լիարժեքորեն գնահատել միայն միջազգային իշխանության ունեցող պետական իշխանություններին տարածքի կառավարման լիազորությունների ամբողջական փոխանցումից հետո, այլ կերպ ասած՝ Վեսթֆալյան ինքնիշխանության լիարժեք վերականգնման դեպքում: Պատահական չէ, որ Արևելյան Թիմորում ռազմական բախումներ վերսկսվեցին 2006թ.՝ անմիջապես այն բանից հետո, երբ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը դուրս բերվեցին տարածքից: Ուստի, թեև միջազգային համայնքի ջանքերը կայունության և ինստիտուցիոնալ դիզայնի տեսանկյունից առանձնահատուկ կարևոր են, գործընթացի հաջողությունը մեծապես կախված է նաև ներպետական իշխանություններից և այն արժեքներից ու սկզբունքներից, որոնք դավանում է տվյալ հասարակությունը:

3.3.Միջազգային կառավարման արդյունավետության մեծացման հնարավորությունները և կիրառման նպատակահարմարությունն Արցախյան հակամարտության դեպքում

Միջազգային կառավարման արդյունավետության խնդրին կարելի է անդրադառնալ այդ մեխանիզմի կիրառման երկու դեպքերի համար առանձին՝

1. երբ կառավարումը հաստատվում է հակամարտության կարգավորման գործընթացին աջակցության նպատակով,
2. երբ կառավարումը հաստատվում է պետության կառուցման գործընթացին աջակցության նպատակով:

Սակայն նպատակահարմար է դիտարկել ընդհանուր խնդիրը՝ հատկապես հաշվի առնելով այն, որ ինքնորոշման հակամարտությունների դեպքում հակամարտության կարգավորման գործընթացի հաջող ավարտից հետո միջազգային

կազմակերպությունները հաճախ ներգրավվում են նաև նորանկախ պետությունների կառուցման գործընթացում:

Ատենախոսության մեջ դիտարկված դեպքերի հիման վրա կարելի է առանձնացնել վերոնշյալ երկու դեպքերում միջազգային կառավարման արդյունավետության մեծացման տեսանկյունից առնվազն երեք գործոն՝ 1) կողմերի համաձայնության ձեռքբերում, 2) միջազգային իշխանություններից տեղի իշխանությունների նկատմամբ կողմերի փոխանցման առնվազն նախնական ժամանակացույցի սահմանում, 3) տարածքի ապագա կարգավիճակի կամ առնվազն դրա վերաբերյալ բանակցություններ սկսելու ժամանակացույցի նախանշում (ինքնորոշման հակամարտությունների դեպքում):

Ինչպես արդեն նշվել է, կողմերի համաձայնությունը միջազգային կառավարման հաստատման համար պարտադիր պայման չէ: Առանցքային նշանակություն ունի ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևը, որում Անվտանգության խորհուրդը ՄԱԿ Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա ստեղծված իրավիճակը բնորոշվում է որպես սպառնալիք տարածաշրջանային խաղաղությանը և անվտանգությանը: Եթե մարդու իրավունքների պաշտպանության նպատակով բացառապես ռազմական բաղադրիչի կիրառմամբ միջազգային ներգրավվածությունն առանց կողմերի համաձայնության երբեմն օբյեկտիվ պատճառներով արդարացի է (ցեղասպանության կանխման հնարավորություն), ապա քաղաքացիական բաղադրիչի կիրառման ժամանակ այդ մոտեցումը վտանգավոր է: Միաժամանակ, Կոսովոյի (Կուլմանովոյի համաձայնագիր) և Բոսնիա և Հերցեգովինայի (Դեյթոնյան խաղաղության համաձայնագիր) դեպքերը փաստում են նաև, որ սոսկ \$որմալ համաձայնությունը, որն արտացոլվում է խաղաղության համաձայնագրում, բավարար չէ ապահովելու տևական խաղաղություն: Այդ համաձայնությունը կարող է ձեռք բերվել արտաքին պարտադրանքի ճանապարհով և չլինել տվյալ տարածքի ժողովրդի կամարտահայտության արդյունք³²⁹: Ընդհանուր առմամբ, միջազգային և ներպետական դերակատարների խաղաղ համակցությունը, հատկապես հաշվի առնելով տարածքի

³²⁹ Milano E., *Unlawful Territorial Situations in International Law: Reconciling Effectiveness, Legality and Legitimacy*, Leiden, Martinus Nijhoff Publishers, 2006, pp. 235-237.

կառավարման մանդատի համընդգրկուն բնույթը, միջազգային կառավարման հաջող ելքի կարևոր նախապայմաններից է, իսկ դրա ապահովման համար առանցքային նշանակություն ունի համագործակցության ինստիտուցիոնալացման խնդիրը: Թեև դիտարկված դեպքերում այդ համագործակցության \$որմալ հիմքերը դրվել են միջազգային կառավարման հաստատումից գրեթե անմիջապես հետո, այդուհանդերձ դրանց վերապահվել է միայն չնչին խորհրդատվական դերակատարություն, իսկ դրանց արագ ձևավորումը պայմանավորված է եղել հասարակության ու տեղի իշխանությունների ճնշումներով: Վերջիններիս իրական մասնակցությունը կառավարման գործընթացին էապես խոչընդոտել է ինքնակառավարման կարողությունների զարգացման գործընթացին, մասնավորապես, Արևելյան Թիմորի դեպքում, որտեղ միջազգային իշխանությունների տասներեքամյա ներկայությունից հետո նույնիսկ առաջացել է, այսպես կոչված, «կախվածություն» արտաքին ներկայությունից:

Կառավարման մանդատում ոչ միշտ է նախանշվում միջազգային իշխանություններից տեղի իշխանությունների լիազորությունների փոխանցման նախնական ժամանակացույցը, ինչն էապես նվազեցնում է տեղի իշխանությունների և հասարակության վստահության մակարդակը, քանզի կառավարման ընթացքն ակնհայտորեն ենթադրում է դրա բացարձակ մոդելից աստիճանական անցման գործընթաց: Բոսնիա և Հերցեգովինայի դեպքում նույնիսկ գրանցվեց հակառակ միտումը, երբ Բոսնի հռչակագրով ամրագրվեց միջազգային իշխանությունների վերապահված լիազորությունների զգալի ընդլայնում: Նման գործողությունների հիմքում միջազգային հանրության «պայմանականության քաղաքականություն»³³⁰ է, որը կիրառվում է կոնկրետ վարքագիծ ձևավորելու համար: Առավել հաճախ այդ մեխանիզմն օգտագործվում է ժողովրդավարցման գործընթացի շրջանակներում և ուղեկցվում է կոնկրետ չափանիշների բավարարման պահանջով: Անշուշտ, իրավական տեսանկյունից այդ ծավալով արտաքին ներգրավվածությունը միջազգայնորեն

³³⁰ Tansey O., Regime Building:...

ճանաչված պետության սահմաններում վիճահարույց է և հակասում է ժողովրդավարական կառավարման սկզբունքներին, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիտարկված դեպքերում իշխանության բոլոր երեք թևերի լիազորությունները վերապահվել են մեկ մարմնի՝ առանց գործող հակակշիռների և զսպումների համակարգի: Միաժամանակ, հատկանշական է, որ այդ գործողություններն արդարացվում են հենց ժողովրդավարացման անվան ներքո: Ատենախոսության մեջ դիտարկված դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ նախքան չափանիշների առաջադրումը կարևոր է պարզել, թե արդյոք դրանց բավարարման համար ձևավորված է անհրաժեշտ միջավայր և առկա են համապատասխան մեխանիզմներ: Հակառակ դեպքում, դակհանգեցնի մի իրավիճակի, որը Կապլանն անվանում է «արհեստական կայունություն»³³¹:

Ինքնորոշման հակամարտությունների դեպքում միջազգային կառավարման հաջող ավարտը երաշխավորող առավել կարևոր նախապայմանը տարածքի ապագա կարգավիճակի սահմանումն է: Կարգավիճակի վերաբերյալ անորոշությունը խոչընդոտում է ոչ միայն հակամարտության կարգավորման, այլև պետության կառուցման գործընթացին առնվազն երեք ուղղությամբ. 1) այն հարցականի տակ է դնում այդ գործընթացի լեգիտիմությունը, քանզի դրանում ներգրավված չէ այնպիսի միավոր, որը պաշտոնապես կարելի էր կոչել պետություն, 2) դանդաղեցնում է ժողովրդավարական և տնտեսական զարգացումը՝ խոչընդոտելով տեղի իշխանություններին կառավարման լիազորությունների փոխանցման գործընթացը, 3) խորացնում է էթնիկ բաժանումները, հատկապես այն դեպքում, երբ միջազգային կառավարմանը համընթաց տարածքի առանձին հատվածի նկատմամբ իրականացվում է զուգահեռ վերահսկողություն³³²:

Մեկ այլ կարևոր խնդիր է առաքելության ինստիտուցիոնալ դիզայնը, որը պետք է բացառի «բոլորի համար միևնույն մեխանիզմը» սկզբունքը, ինչն առավել ակներև է Կոսովոյի և Արևելյան Թիմորի դեպքերի համեմատական վերլուծության

³³¹ Caplan R., Exit Strategies..., էջ 3:

³³² Mulaj K., նշվ. աշխ.:

համատեքստում: Կառավարման միևնույն մոդելը ներդրվեց առաջին դեպքում Եվրոպայում գտնվող, նախկինում ինքնակառավարման փորձ ունեցող, երկրորդի՝ դրալիարժեք բացակայությամբ բնորոշվող և արևմտյան քաղաքակրթությանը չպատկանող պետության միջազգային կառավարման հիմքում: Դրա արդյունքը եղավ 2006թ. Արևելյան Թիմորում ծագած ճգնաժամը, այն դեպքում, երբ ի տարբերություն Կոսովոյի՝ Թիմորի քաղաքական կարգավիճակի խնդիրը լուծվել էր դեռևս 2002թ.: Կոնկրետ դեպքում համապատասխան մոդելի ընտրությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Դրանք են առանձնացնում է դրանցից երկուսը՝ կողմերի միջև թշնամության մակարդակը և ինքնակառավարման կարողությունների զարգացման արտենցիալը ³³³: Ատենախոսության մեջ դիտարկված դեպքերի վերլուծության արդյունքում առանձնացվել է ևս մեկ գործոն՝ տարածքի պատմական անցյալը և հասարակության պատմական ժառանգությունը: Առաջարկվող գործոնն, ըստ էության, ընկած է Դրանքի առաջարկած երկրորդ կետի հիմքում և հենց դրանով է առնվազն կառավարման նախնական շրջանում պայմանավորված ինքնակառավարման կարողությունների զարգացման հաջողությունը կամ ձախողումը: Այդ տեսանկյունից հարկ է ընդգծել Կարոգերսի այն հաստատագրումը, որ «ներպետական միջավայրի և դրա պատմական ժառանգության վերաբերյալ գիտելիքի խնդիրն առանցքային է արտաքին օժանդակության և, մասնավորապես, ժողովրդավարացմանն աջակցության գործում³³⁴»: Քոլը և Քոկը ևս ընդգծում են, որ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ներքին միջավայրի առանձնահատկություններին և արտաքին կառավարման համապատասխան մոդելների ներդաշնակեցմանը հետևողական ֆլիկտային հասարակություններում կիրառվող ներքին իրավաչափ արակտիկային ³³⁵: Միաժամանակ, ինչպես իրավացիորեն նշում է Կիրկհեյմերը, «պատմական ժառանգության ազդեցությունը կարող է նվազել քաղաքական էլիտային տրամադրվող հայեցողական

³³³ Doyle M., Strategy and Transitional Authority, in Stephen John Stedman, Donald Rothchild and Elizabeth M. Cousens eds., Ending Civil Wars, Boulder CO, Lynne Rienner Press, 2002, p. 71.

³³⁴ Carothers Th., Aiding Democracy Abroad: The Lurning Curve, Washington, Carnegie Endowment for International Peace, 1999, pp. 262-266.

³³⁵ Call Ch., Cook S., On Democratization and Peacebuilding, Global Governance, vol. 9, April-June 2003, pp. 233-246.

տարրի և ժողովրդավարական խաղի շրջանակներում ստեղծված զանգվածային մոբիլիզացման հնարավորությունների արդյունքում»³³⁶ : Թեև միջազգային համայնքի ջանքերը կայունության և ինստիտուցիոնալ դիզայնի տեսանկյունից անժխտելի են, գործընթացի հետագա հաջողությունը հավասարապես կախված է պետական իշխանությունների՝ պատասխանատվություն և ստանձնելու պատրաստակամությունից և այն արժեքներից ու սկզբունքներից, որոնք դավանում է տվյալ հասարակությունը:

Միջազգային կառավարման մեխանիզմի համընդգրկուն ուսումնասիրությունը և դրա կիրառման առանձնահատկություններն ատենախոսության մեջ դիտարկված դեպքերում հնարավորություն է տալիս ուրվագծել նաև դրա կիրառման հնարավորություններն ու նպատակահարմարությունն Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում: 2016թ ապրիլի ռազմական գործողությունները հակամարտության կարգավորման գործընթացի սառեցման տրամաբանական շարունակություն են, որը ցույց տվեց, որ անհրաժեշտ է նոր մեխանիզմների կիրառում հակամարտության կարգավորմանը հետամուտ լինելու համար: Ուստի չի բացառվում, որ առաջարկվող մոտեցումների թվում լինի արտաքին կառավարման մեխանիզմների կիրառումը: Այդպիսի սցենարի դիտարկումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կարգավորման վերաբերյալ վերջին՝ «Մադրիդյան», փաստաթղթի վեց տարրերից մեկը ենթադրում է Արցախի միջանկյալ կարգավիճակ, որի ձևաչափը դեռևս հստակեցված չէ:

Ի լրումն դրան, ուսումնասիրությունը կարևոր է նաև հակամարտությունների համեմատական վերլուծության համատեքստում, քանզի հակամարտությունների կարգավորման ոլորտում վերջին տարիներին առավել արդիական հարցերն են Կոսովոյի անկախության ճանաչումն ու դրա նշանակությունը՝ որպես այլ հակամարտությունների լուծման հնարավոր տարբերակ: Այդ առումով առանձնահատուկ վտանգ է պարունակում երկրորդ հարցադրմանն առնչվող տեսակետները և դրանց հիմնավորումները:

³³⁶ Pridham G., Gallagher T., *Experimenting with Democracy: Regime Change in the Balkans*, New York, Routledge, 2002, p. 11.

Ոմանք պնդում են, որ բոլոր հակամարտության ունեները պետք է ունենան միասնական լուծում ³³⁷, իսկ Կոսովոյի անկախացման ճանաչման կողմնակիցներից շատերը ³³⁸ պնդում են, որ դա առանձնահատուկ լուծում է՝ եզակի դեպքի համար: Ընդհանուր առմամբ, հակամարտության կողմ հանդիսացող որևէ տարածքի անկախության ճանաչման նշանակությունն այլ հակամարտությունների կարգավորման տեսանկյունից դիտարկելիս՝ նախ պետք է արձանագրել, որ նախադեպը միջազգային իրավունքի տեսակետից նորմաստեղծ աղբյուր չէ, և նոր պետության անկախության ճանաչումը միջազգային իրավունքի շրջանակներում հանգում է ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառման խնդրին ³³⁹: Չատկանշական է, որ Կոսովոյի՝ որպես եզակի դեպքի կողմնակիցները տարածքի հատուկ կարգավիճակը ևս նշում են այդ եզակիությունը պայմանավորող գործոնների շարքում ³⁴⁰: Միաժամանակ, հարկ է նշել, որ Արցախում ևս հատուկ կարգավիճակ սահմանվել է դեռևս 1989թ. հունվարին, երբ ԽՍՀՄ ԳԽ որոշմամբ դադարեցվեց ԼՂԻՄ մարզային խորհրդի գործունեությունը, և ստեղծվեց հատուկ կառավարման կոմիտե՝ Մոսկվայի ուղիղ ենթակայությունամբ: Դա եղել է վերջին գործող կարգավիճակը, մինչև 1991թ. դեկտեմբեր, երբ տեղի ունեցավ Արցախի անկախության հանրաքվեն: Չարկ է հաշվի առնել նաև, որ Կոսովոյում միջազգային կառավարում մտցվեց մարդասիրական աղետը կանխելու համար: Այն դեպքում, երբ միջազգային հանրությունը որևէ գործնական քայլ չձեռնարկեց Արցախում Ադրբեջանի սանձազերծած պատերազմը դադարեցնելու համար, որի արդյունքում զոհերն ավելի շատ էին, քան Կոսովոյի հակամարտության ժամանակ: Պատերազմը հաջողվեց

³³⁷ Cismas I., *Secession in Theory and Practice: the Caso of Kosovo and Beyond*, Goettingen Journal of International Law, vol. 5, 2010, 531-587.

³³⁸ Rahmani B., *Recognition of New States: Kosovo Case*, Journal of Liberty and International Affairs, vol. 4, no. 2, 2018, pp. 68-79; Warbrick C., *Kosovo: The Declaration of Independence*, vol. 57, no. 3, 2008, pp. 675-690.

³³⁹ Թորոսյան Տ. Լեռնային Ղարաբաղի հակամարտության..., Halperin M., Scheffer D., Sall P., *Self-Determination in the New World Order*, Washington DC, Carnegie Endowment for International Peace, 1992, Luchterhandt O., *Nagorny Karabakh's Right to State Independence according to International Law*, Boston, Baikar Association, 1993.

³⁴⁰ Summers J., *Kosovo: A Precedent? The Declaration of Independence, The Advisory opinion and Implications for Statehood, Self-Determination and Minority Rights*, Leiden, Martinus Nijhoff Publishers, 2011, pp.382-386; Friedrich J., *UNMIK in Kosovo: Struggling with Uncertainty*, Max Planck Yearbook of United Nations Law, vo. 9, 2005, pp. 225-293.

դադարեցնել միայն 1994թ., երբ Արցախի պաշտպանության բանակը ստիպված էր պատերազմական գործողությունները տեղափոխել ԼՂԻՄ-ի հարակից շրջաններ՝ ապահովելով տարածքի անվտանգությունը և նաև հասանելիությունը ադրբեջանական հրետանու համար³⁴¹: Ուստի, ակնհայտ է, որ ոչ թե դեպքն էր եզակի, այլ միջազգային հանրության արձագանքը դեպքին՝ համապատասխան:

Նախ հարկ է արձանագրել, որ ի տարբերություն ինքնորոշման հակամարտություններում ներգրավման նախորդ դեպքերի, որտեղ ինչպես անկախության հռչակումից առաջ, այնպես էլ դրանից հետո ժողովրդավարական սկզբունքների մասին կարելի է խոսել չափազանց մեծ վերապահումներով, Արցախի Հանրապետության գրանցած 28-ամյա պետականության արդյունքներն այդ տեսանկյունից ուշագրավ են³⁴²: Ֆրիդոմ Հաուսի քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների վարկանիշային ցուցակում դե ֆակտո պետությունները երբեմն ավելի բարձր ցուցանիշներ են գրանցում քան մետրոպոլիան, ինչպես, օրինակ, Արցախի Հանրապետությունը: Ազատությունն աշխարհում վարկանիշային ցուցակում Արցախի Հանրապետությունը ներառվել է 1998 թվականից: Հատկանշական է, որ 2003 թվականից առայսօր այն որակվել է որպես մասամբ ազատ պետություն, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում Ադրբեջանը՝ մետրոպոլիան, որից այն անջատվել է, բնորոշվել է որպես ոչ ազատ³⁴³: Ընդ որում, պետք է նշել, որ Արցախի դեպքում արտաքին միջամտությունը ժողովրդավարացման գործընթացներին եղել է նվազագույն՝ ի տարբերություն մի շարք այլ հետկոնֆլիկտային հասարակությունների, որոնք նույնիսկ ժողովրդավարական գործընթացներին միջազգային իշխանությունների տևական մասնակցությունից և պետական իշխանության լիազորությունների լիակատար ստանձնումից հետո շարունակել են դրսևորել ավտորիտար միտումներ (Կոսովո, Արևելյան Թիմոր, Հարավային

³⁴¹ Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո..., էջ 268:

³⁴² Freedom House Reports, <https://freedomhouse.org/report-types/freedom-world>, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում, ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները, միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ, Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո...

³⁴³ Freedom in the World Reports, <https://freedomhouse.org/report-types/freedom-world>.

Սուղան և այլն): Ուստի, ակնհայտ է, որ Արցախի Հանրապետությունը լիովին բավարարում է վերջին շրջանում առաջ քաշված «վաստակած ինքնիշխանություն»³⁴⁴ գիտական թեզի պահանջներին, և պետության կառուցման ու ժողովրդավարացման տեսանկյունից միջազգային ներգրավվածությունը կարող է սահմանափակվել միայն խորհրդատվական դերակատարությամբ: Ուստի, նույնիսկ ՄԱԿ-ի ներգրավման պարագայում ակնհայտորեն կառավարման քաղաքացիական բաղադրիչը պետք է ուղղորդել բացառապես կարգավիճակի վերաբերյալ խնդիրներին ու ծմանը:

Միաժամանակ, ատենախոսության մեջ ներկայացված դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Արցախի Հանրապետությունը միջազգային կառավարման մեխանիզմների կիրառման սցենարի հավանականությունը կարող է դիտարկել առնվազն երեք նախապայմանի բավարարման դեպքում՝ Արցախի Հանրապետության ներկայացուցիչների ուղղակի մասնակցություն բանակցություններին, քաղաքական կարգավիճակի հստակ սահմանում միջազգային մանդատում, ինչն Արցախի դեպքում լիարժեք անկախությունից բացի այլընտրանք չունի, և տեղի իշխանություններին ստանձնած լիազորությունների փոխանցման հստակ ժամանակացույց: Այդ նախապայմանների առկայությունն էապես կնվազեցնի խնդրի վերջնական հանգուցալուծումից խուսանալու հնարավորությունը: Հատկանշական է, որ չճանաչված պետություններում միջազգային կառավարման վեց դեպքերից հինգն ավարտվել է անկախության հռչակմամբ, մեկը (Արևելյան Սլովենիա)՝ նախկին մետրոպոլիայի՝ Խորվաթիայի կազմ վերաինտեգրմամբ (ըստ նախանշված մանդատի)³⁴⁵: Թերևս դա է պատճառը, որ միջազգային կառավարման կիրառման գրեթե բոլոր դեպքերում միջազգային իշխանությունները կամ չեն ստացել մետրոպոլիայի համաձայնությունը, կամ այն ձեռք են բերել անուղղակի պարտադրանքի ճանապարհով: Դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ միջազգային կառավարման մեխանիզմի կիրառման առաջարկը, որպես կանոն, լինում է այն փուլում, երբ հակամարտության մեջ ներգրավված

³⁴⁴ Scharf M., նշվ. աշխ.:

³⁴⁵ Stahn C., The Law and Practice...

